1909

1336

VIII 683

E
54

IX—XII

575

1909

# ՆՈՐ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅՕՐԻՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԵԱՆ

1878

Ծաղկոցի աշակերտ մը ոչ միայն կարդալ, գրել ու հաշուել
այլ եւ բնական ու ընտանի բաներու վրայ քիչ շատ ծանօթու-
թիւն կրնայ ստանալ եւ դիտելու ու դատելու կարողութիւնը մշա-
կել, եթէ միայն այս նպատակին յարմար եղանակ, դասատետր
ու դասատու գտնուին: Դժբաղդաբար շատ տեղ այս երեք մի-
ջոցներէ ալ զուրկ են մեր դպրոցներն եւ արդի կրթութեան ըն-
թացքով շատ մը պարզ ու սովորական իրեր որ ծանօթ են բան-
իրուն մտքի՝ անծանօթ կ'մնան աշակերտին, որ շատ շատ ա-
նոնց անունը կ'սորվի առանց հասկընալու թէ այդ անուան տակ
ի՞նչ կայ: Ուստի այս տեսակ սկզբնական գիտելիք տղոց ա-
ւանդելու լաւագոյն գրգիռն ու միջոցն է ընթերցարանի մը մէջ
ամփոփել, այնպէս որ ծանօթութիւնները կարգաւ ներկայանան՝
միշտ ի նկատի ունենալով մանկան մտաւոր կարողութեան աս-
տիճանը:

Այս պակասը գոնէ ըստ մասին լեցընելու համար այս ԸՆ-
ԹԵՐՑԱՐԱՆը պատրաստելու փորձ մ'ըրի, որ գլխաւորապէս բնա-
կան եւ ընկերական իրերու լոկ ԱՐՏԱՔԻՆ երեւոյթները կ'բացա-
տրէ: Այլ եւ այլ դասագրքեր եւ յատկապէս օրինակ առի դարձ-
եալ Չէմպըրսի ԿՐԹԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ մէկ գործը զոր տեղ տեղ հա-
մառօտեցի եւ խրթին մասերը դուրս ձգեցի, դասատուին թող-
լով դժուարիմաստ ու մութ կէտերը պարզելու, մանաւոր օրի-
նակներով, եւ աշակերտին հետաքրքրութիւնը շարժելու:

Այս դասագիրքն երկուքի բաժնեցի: Ա. մասը՝ ԳՈՐԾ. ԽՕՍԱ-
ԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ եւ ԳՈՐԾ. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ կը պարունակէ՝ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
իբրեւ ընթերցանութեան եւ մտածութեան վարժութիւն. Բ.
մասն բնտանի ԳԻՏԵԼԻՔ կը պարունակէ, որ աշակերտին միտքը
զարգացընելու կ'օգնեն:

Մ. Մ.

Ի ԳՐՈՑ
ՃեՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Թ. 44

ՆՈՐ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

## ՄԱՍՆ Ա.

## ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ

### Ա.

### ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տղայ | Կին | Կենդանի | Շուն | Թռչուն |
| Մարդ | Ձուկ | Որդ | Ձի | Մուկ |

*Տղան դպրոց կ'երթայ — Այս գիրքը կը կարդայ — Այս մարդը գիր կը գրէ — Կինը կար կը կարէ — Այս կենդանին խոտ կ'ուտէ — Ձին կը վազէ — Շունը պոչը կ'օրէ — Եղբայրս թռչուն մը բռնեց — Շատ ձուկեր կան ծովուն մէջ — Ճանճը կը թռի — Որդը կը սողայ — Կատուն կերաւ մուկը։*

Բ.

| | | | |
|---|---|---|---|
| Ընտանիք | Տուն | Քաղաք | Եկեղեցի |
| Մարդիկ | Պալատ | Գիւղ | Դպրոց |

Ամէն ժիր մարդիկ կ'աշխատին — Մեր ընտանիքը գիւղն է, տունը մինակ ծառան մնաց — Թագաւորին պալատը շատ փառաւոր է — Այս քաղքին փողոցները միշտ աղտոտ են — Իմ բարեկամս գիւղը կը նստի — Ամէն օր դպրոց կ'երթամ — Կիրակի օրերը հայրս զիս եկեղեցի կը տանի։

Գ.

| | | | |
|---|---|---|---|
| Անուն | Հայր | Հայրենիք | Աստուած |
| Մականուն | Մայր | Օտար | Խելք |

Իմ հօրս անունը Գրիգոր է, մականունը Սէֆէրեան — Մայրս տունը կերակուր կ'եփէ — Հայրս շուկայ գնաց — Մեր հայրենիքը Հայաստան կ'ըսուի — Մենք օտար երկիր կ'ապրինք — Աստուած կը պաշտպանէ տղաքը — Իր խելքը գլուխը չէ։



Դ.

| | | | |
|---|---|---|---|
| Ամառ | Ձմեռ | Աշուն | Արօր |
| Դաշտ | Լեռ | Գարուն | Պտուղ |
| Մշակ | Ծառ | Ծաղիկ | Ցորեն |

Ամառը շատ տաք կ'ընէ այս տեղ — Դաշտերուն խոտը կը չորնայ — Լեռին վրայ ծառեր կան — Մշակը կը հերկէ երկիրը — Ձին արօրին կապած է — Գարունը հասաւ, օդը բաց է — Մեր պարտէզն աղուոր ծաղիկներ ունինք — Պզտիկ եղբայրս հաց չուտեր, պտուղ կը սիրէ — Երբ աշունը գայ օդը կը զովնայ — Ցորենէն ալիւր ու հաց կը շինեն։

Ե.

| | | | |
|---|---|---|---|
| Անտառ | Բոյս | Ձիւն | Խնձոր |
| Փայտ | Ծաղիկ | Ճուք | Տանձ |
| Որսորդ | Տերեւ | Բուն | Սալոր |

Երկրագործն անտառը գնաց որ փայտ կտրէ ու վառէ. շունն ալ հետն առաւ — Որսորդը հրացանով թռչուն մը սպաննեց — Ես դաշտ պիտի երթամ հոտաւոր բոյսեր ժողվելու — Ամէն ծաղիկ փուշ չունի. ես մանիշակը կը սիրեմ — Ձմեռը հասաւ. ծառերուն տերեւները կը թափին, ճիւղերը հովէն կը շարժին, անձրեւները կ'ըսկսին — Ես խնձոր մը պիտի ուտեմ, եղբայրս

տանձ մը — Քոյրս իր սալորն այս աղքատ աղջկին տուաւ :

---

Ձ.

| | | | |
|---|---|---|---|
| Հող | Կաւ | Ոսկի | Թիթեղ |
| Քար | Կիր | Արծաթ | Կապար |
| Փայտ | Աղիւս | Պղինձ | Անագ |
| Ածուխ | Ապակի | Երկաթ | Մետաղ |

Քար մ'առի ու ծովը նետեցի — Այս հողը բարակ է, ժայռը կարծր — Պաղ կայ, վառարանն ածուխ նետէ — Բրուտը փարչերը կաւէ կը շինէ, որ տեսակ մը հող է — Մեր փուռն աղիւսով շինուած է — Մեր պատուհանին ապակիները հովէն կոտրեցան — Ոսկին սուղ է, արծաթը Ճերմակ — Երկաթը շատ կը գործածուի — Պղինձը, թիթեղը, կապարը, անագը մետաղ են :

---

Է.

| | | | |
|---|---|---|---|
| Ջուր | Աղբիւր | Եզր | Նաւաստի |
| Հեղուկ | Գետ | Նաւ | Արեւելք |
| Առուակ | Ծով | Շոգենաւ | Արեւմուտք |

Ջուրը հեղուկ է — Այս առուակին ջուրը մաքուր ու ըմպելի է — Եղբայրս կոյժն առաւ աղբիւրը գնաց



որ ջուր բերէ — Գետն՝ որ մեր խաղէն կ'անցնի, չորցաւ — Ծովուն եզրը կեցած եմ. նաւեր կը տեսնեմ, մէկ քանին նաւահանգիստը կը մտնեն, մէկ քանին կը մեկնին — Առաւօտուն տեսայ արեն որ արեւելքէն կ'ելնէր — Շոգենաւին քիթը դէպ 'ի արեւմուտք դարձած է :

---

Ը.

Տղայք պարտաւոր են բարի ու հնազանդ ըլլալ : Երուանդ աշխատասէր ու խելացի տղայ մ'է : Տարւոյն առաջին ամիսը յունվար կ'ըսուի : Փետրվարը տարւոյն երկրորդ ամիսն է : Այս առաւօտ բաւական աղէկ սորվեր էիր դասդ : Փափաք չունիմ խաղալու . կ'ուզեմ կարդալ : Հայրս հիւանդ է, տխուր եմ : Ձեզի աղւոր պատմութիւն մը պիտի պատմեմ : Շաբեկաւքն օրը չորս անգամ Պորնօվա կ'երթայ :

---

Թ.

Ուրախ եմ որ կրնամ կարդալ : Կարդացածս կը հասկընամ : Օգտակար բաներ կ'ուզեմ սորվիլ : Տարին քանի՞ ամիս է : Ամիսը քանի՞ օր : Ծովուն ջուրն աղի է : Ի՞նչ է կղզի : Ո՞վ շինեց այս սեղանը : Ոսկին ինչու համար սուղ է : Աստղերն ի՞նչ են :

---

Ժ․

Վարդապետը քարոզ կու տայ․ քահանան պատարագ կ՚ընէ․ դասատուն դաս կու տայ․ բժիշկը հիւանդը կը նայի․ վիրաբոյժը վէրքը կը դարմանէ․ նկարիչը պատկեր կը քաշէ․ երաժիշտը կ՚երգէ․ դարբինը բանալին շինեց․ հիւսնը սեղանը նորոգեց․ գրաշարն այս գրքին տառերը շարեց․ գրքածախը գիրքերը ծախեց․ վաճառականն ապրանքները աժան տուաւ։

---

ԺԱ․

Ականջը կը լսէ․ աչքը կը տեսնէ․ ձեռքը կը բռնէ․ ակռաները կը փշրեն։ Շունը կը խածնէ․ մեղուն կը կծէ․ ձուկը կը լողայ․ թռչունը կը թռի․ օձը կը սողայ․ մարդ կը քալէ․ գորտը կը ցատկէ․ այծերը կ՚ոստոստեն։ Մանկիկը կու լայ։ Ժամացոյցը կը զարնէ։ Ջուրը կը հոսի։ Երկիրը կը դառնայ։ Աստղերը կը փայլին․ մոմերը կը վառին։ Խոտերը կը բուսնին։

1874 = 88

---

ԺԲ․

Ճարպն ու մոմը․ Ճամբայ մը և գետ մը․ կառք մը և նաւ մը։ Աստուած և մեր ազգականները․ խօսքն ու գիրը․ կատուն ու վագրը․ շունն ու գայլը․ էշն ու գամէշը․ բոյնն ու տունը․ աղջիկն ու ծաղիկը․ ծոյլն ու ժանգը․ քունն ու մահը․ գարունն ու պատանին․



ծերն ու ձմեռը․ պարտիզպանն ու դաստիարակը․ բազէզն ու տղան․ պղինձն ու ոսկին․ աղէսն ու գլխունը․ հեզն ու գոռոզը․ հրեշտակն ու սատանան․ բարին ու վատը։

## ՊԱՐԶ ԶՐՈՅՑՆԵՐ

### ՈԶԽԱՐ ՈՒ ԳԱՌՆՈՒԿ

Օր մը դաշտն էին ոչխարն ու իր գառնուկը հօտին հետ։ Արևը տաք էր, գառնուկը շատ ուրախ էր և կը ցատկռտէր։

Գառնուկն աստին անդին կը վազէր, վեր վար կ՚երթար կու գար։ Վերջը քանի մը մացառներու մէջ ընկաւ։

Բայց երբոր գառնուկն իր մօրը քովը դառնալ ուզեց, չկրցաւ դուրս ելնել, ինչու որ փուշերը չէին թողուր։

Այն ատեն գառնուկն սկսաւ մայել․ ոչխարն անոր ձայնը լսեց և վազեց որ օգնէ։ Շատ աշխատելէն ետև՝ գառնուկը մացառներուն մէջէն քաշեց հանեց։

Գառնուկը նորէն այն մացառներուն քովը չգնաց։

---

### ՄԻՀՐԱՆ ԵՒ ԻՐ ՇՈՒՆԸ

Միհրան պզտիկ շուն մ՚ունէր․ անոր անունը Վազուկ էր։

Վազուկ կարմիր ու ճերմակ էր և մազերը փափուկ ու գանգուր էին։ Իր պոչն ալ երկայն ու թաւ էր։

Միհրան դուրս ելաւ գետին եզերքը պտըտելու համար, Վազուկն ալ ետեւէն գնաց։ Վազուկ խենդի պէս կը ցատկէր և չորս դին կը վազվզէր։

Միհրան քանի մը ծաղիկներ տեսաւ գետափին վրայ. շուշաններ էին, ուզեց մէկ հատ բրցնել ու մօրը տանիլ։ Գաւազանն երկնցուց բայց չհասաւ. գաւազանը կարճ էր։

Միհրան նեղացաւ, ասոր համար փայտը շուշաններուն նետեց։ Վազուկն, որ գետափին վրայ էր, ջուրը նետուեցաւ և փայտին ետեւէն գնաց, բայց շուշան ծաղիկ մ'առած ետ դարձաւ։

Ճարպիկ և ուշիմ Վազուկը տեսաւ որ Միհրանն շուշանը կ'ուզէր և գաւազանն առնելու հոգ չըրաւ։

——

## ԳԷՈՐԳ

Տղայ մը կար որուն անունն էր Գէորգ։ Օր մը մարդ մը նոր փայլուն դանակ մը տուաւ անոր խաղալու համար։

Պզտիկ տղու մը համար լաւ խաղալիկ մը չէր այն, բայց Գէորգ գոհ էր և ասդին անդին կը վազէր այլ և այլ բաներ կտրելով։ Վերջը պարտէզը հասաւ և կեռասենիի մը կեղեւը կտրեց։

Երբոր հայրը տուն գալով՝ իրիկունը տեսաւ որ կեռասենին կտրեր են, հարցուց. — «Ո՞վ կտրեց իմ աղւոր ծառս։»



Գէորգ լսեց իր հօրն ըսածը, անոր քովը վազեց ու պոռաց.

— «Հայր իմ, չեմ կրնար սուտ խօսիլ, ես կտրեցի։»

Հայրը ցաւեցաւ որ ծառը կտրեր էր, բայց շատ ուրախ եղաւ որ իր որդին ճշմարիտը կը խօսի։

Գէորգ բարի տղայ մ'էր որ սուտ չէր խօսեր։ Եթէ ստախօս տղայ մը ճշմարիտ ալ խօսի իրեն չեն հաւատար։

——

## ԱՌԱՒՕՏ

Տես արեւը կ'ելնէ. այսօր օդն աղէկ պիտի ըլլայ։ Վառեակներն հաւնոցէն դուրս ելան։ Թռչունները կ'երգեն ու ճիւղէ ճիւղ կը ցատկեն։ Ամէն բան չորս դին թարմ ու փայլուն կ'երեւի։ Այնպէս չէ՞։

Գործաւորները դաշտը գացին. ոմանք պիտի հերկեն, ոմանք ալ պիտի բրեն։ Նայէ հովիւն իր շունովը։ Բլուրը կ'երթայ որ ոչխարները տուն բերէ։ Դարբինը կ'ըսկսի կռանը զարնել և քիչ քիչ ամէն մարդիկ կ'արթննան։

——

## ՕՐՀԱՍԱՐԱԿ

Հիմակ օրհասարակ է։ Ո՛րչափ տաք է օդը. արեւը կ'այրէ, բայց ծառերուն շուքին տակ զով է։

Մէկ քանի կովեր գետինը նստած են. մէկ քանին ծառին տակը կեցեր են ուր շատ զով է։ Մէկ քանին գետակը գացին ջուր խմելու համար։

Բանւորներն իրենց գործը ձգեցին և տունը գացին. Հիմակ սեղանը նստած պիտի ըլլան կերակուր ուտելու։ Նայէ ագարակի տունը։ Անոր մէջ բնակողն ագարակապան կը կոչուի։

———

## ԻՐԻԿՈՒՆ

Հիմա արևը մարը մտաւ և քիչ ատենէն մութը պիտի կոխէ։ Մշակները դաշտէն տունը դարձան։ Կովերը մարգին վրայ խոտ չեն ուտեր. իրենց գլխուն տնակը գացին և հիմա բակը կ'ըսպասեն։

Աննա բակը գնաց որ կովերը կթէ։ Ահա դոյլը լեցուն կաթով կը դառնայ։

Պետրոս կ'ուզէր քիչ մը կաթ խմել։ Հաւերը թառն ելան. շունը դրան առջև նստած է և հացի կտորին կ'ըսպասէ։

Շունը բոլոր գիշեր տունը պիտի պահպանէ որ գող մը չմանէ տունը։ Լուռ կեցի՛ր. կը լսե՞ս, ինչպէս կը հաջէ. մեր շունը շատ լաւ շուն մ'է։

———

## ՄԵՂՈՒ

Նայէ սա մեղուն ծաղկին վրայ. տես ինչպէս թևերը կը թօթուէ և մանր թաթիկներովը կը բանի։ Ա՛հ, ուրիշ ծաղկի մը վրայ թռաւ։ Նորէն կ'աշխատի։

Հիմակ ուրիշ ծաղկի մ'անցաւ. ո՛րչափ ժիր է. և ոչ րոպէ մը նոյն տեղը կը կենայ. կ'երևի որ շատ գործ ունի և կը ջանայ գործը կատարելու։



Հիմա պարտիզին միւս ծայրն երթանք։

Կը տեսնե՞ս սա յարդէ պզտիկ տուները, որ բնաւ պատուհան չունին, այլ միայն նեղ դուռ մը։ Ասոնք են մեղուներուն տուներն որ փեթակ կ'ըսուին։

Երբ գարունը կը հասնի և ծաղիկները կ'ըսկսին ծլիլ, մեղուներն առտու կանուխ դուրս կ'ելնեն իրենց փեթակէն։ Հեռուները կը թռին և ծաղիկներուն անուշ հիւթը կը ծծեն։

Մեղուն երկար լեզու մ'ունի. այս լեզուն ծաղկին մէջ կը մղէ որպէս զի հիւթը ծծէ։ Յետոյ հիւթը կը տանի փեթակը և մեղր կը շինէ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Մեղուներն ի՞նչ կ'ընեն։ Ի՞նչ կ'ըսուին անոնց տուները։ Ի՞նչ բանէ շինուած են։ Ինչո՞ւ համար գարնան մեղուները կանուխ դուրս կ'ելնեն։ Մեղուն ինչո՞վ կը ծծէ ծաղկին հիւթը։

———

Երբոր մեղու մը դուրս կ'ելնէ առտու, միայն մօտաւոր ծաղիկները չփնտռեր. շատ անգամ իր փեթակէն մղոն մը հեռու տեղեր կը թռի, բայց իր ճամբան բնաւ չկորսնցըներ։

Երբոր յանկարծ անձրև բռնէ, ծակ մը կը մտնէ պատի մը մէջ, կամ ծառի մը տերևներուն մէջ կը պահուըտի, կամ ծաղկի մը մէջ կը սպասէ։ Երբոր նորէն արև երևի, մեղուն դուրս կ'ելնէ և շիտակ իր տունը կը թռի։

Մեղուները միայն հիւթ չեն քաղեր հապա տեսակ մը ոսկի փոշի, ծաղիկներուն մէջէն։ Այս փոշին տունը կը տանին իրենց ետևի ոտքերով։ Անով մեղուի հաց կը

շինեն փեթակին մէջ, որով պզտիկ մեղուները կը կերակրին ։

Այս փոշիով մոմ ալ կը շինեն, և մոմով շատ մը մանր խցիկներ կը պատրաստեն. ամէնն ալ նոյն ձեւ ունին և իրարու կպած են վայելուչ կերպով ։

Անուշ մեղրով կը լեցնեն այս խցիկները ։ Այս մեղրով լցուած մոմէ խցիկներն բջիջ կը կոչուին ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Մեղու մը շատ անգամ տեսա՞ծ հեռուէն կը թռչի ։ Ի՞նչ կ՚ընէ երբոր անցնի ծաղիկին ։ Մեղուն հեռուէն շատ ի՞նչ կը տանի ։ Ի՞նչ կ՚ընէ անով ։ Ո՞ւր ։ Ի՞նչ է բջիջը ։

---

Օրին մէկը խղունջ մը սողաց մտաւ փեթակի մը մէջ ։ Բոլոր մեղուներն անոր չորս կողմն առին զարմանալով ։ Չէին կրնար հասկընալ թէ ի՛նչ կ՚ուզէր այս կենդանին, որ իր տունը կռնակն առած կը քալէր ։

Մեղուներն իրենց բոլոր ճիգը թափեցին որ խղունջը դուրս հանեն, բայց պարապ տեղը աշխատեցան ։ Վերջապէս ուրիշ հնարք մը գտան ։ Մոմով գոցեցին խղունջին պատեանին բերանը, այնպէս որ խեղճ կենդանին չէր կրնար շարժիլ ։ Քիչ ատենէն մեռաւ և անկէ ետքն իրենց գործին արգելք չեղաւ ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Օր մը ի՞նչ ըրին փեթակին մէջ ։ Ի՞նչ ըրի՞ն մեղուները ։ Երբոր չկրցան յաջողիլ, ի՞նչ միջոց բանեցուցին ։

---



## ԿԱՐԱՊ

Ընտանի կարապը շատ սիրուն կենդանի մ՚է ։ Առուակի ու լճակի վրայ կ՚ախորժի լողալ ։ Երբ դեռ պզտիկ է սիրուն չերևիր, բայց երբոր մեծնայ ձիւնի պէս ճերմակ է ։

Կարապը մացառներու և խոտերու մէջ կը շինէ իր բոյնը ։ Չոր փայտերով ու պրտուներով կը շինէ բոյնը և անոր մէջ իր հաւկիթները կ՚ածէ ։

Երբոր ձագուկներն հաւկիթէն դուրս կ՚ելնեն շուտ մը ջուրը կը վազեն ։ Պէտք չունին լողալ սորվիլ, բնական կերպով գիտեն ։

Տեսա՞ծ ես կարապին ոտքերը. լողալու յարմար են ։ Բոլոր թռչուններն որ ջուրը կը սիրեն և անոր մէջ կը լողան մաշկապատ ոտքեր ունին, ինչպէս կարապները, բադերն և ուրիշ շատ թռչուններ ունին ։

Բոլորն ալ լաւ կը լողան. բայց հաւերը, վառեակներն ու ճնճղուկները չեն կրնար բնաւ լողալ, վասն զի կարապին ու բադին պէս մաշկապատ ոտքեր չունին ։

Կարապն երկար վիզ ունի և անով կրնայ իր կերակուրը գտնել առանց ջրին տակն երթալու, ինչպէս որ բադերը կ՚ընեն ։ Կարապը հունտեր, տերևներ, և ջրի բոյսերու արմատներ կ՚ուտէ ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ գոյն ունի կարապը ։ Ո՞ւր կը շինէ իր բոյնը ։ Ինչէ՞ շինուած է բոյնը ։ Երբոր հաւկիթէն ելնեն կարապին ձագուկներն ի՞նչ կ՚ընեն ։ Կարապն ի՞նչ տեսակ ոտքեր ունի ։ Ուրիշ ի՞նչ տեսակ թռչուն նոյն ոտքն ունի ։ Ի՞նչ բանի կը ծառայէ կարապին երկար վիզը ։ Ի՞նչ կ՚ուտէ ։

## ԳԱՅԼ

Գայլը շատ կատաղի կենդանի մ'է. քիչ մը շունի և քիչ մ'ալ աղուէսի կը նմանի։ Իր որջն անտառն է, մարդու բնակութենէ հեռու։ Ամառը թռչուններ, որսի միս և ուրիշ կենդանիներ կ'ուտէ։ Բայց ձմեռը անտառէն կ'ելնեն գայլերն որ կերակուր փնտռեն։ Այն ատեն խումբ խումբ կ'ըլլան և երբոր անօթի են շատ յանդուգն ու կատաղի կը դառնան։ Մինչև անգամ գիւղեր կը մտնեն և դառնուկներ, ոչխարներ, կովեր և ձիեր կը յափշտակեն կ'ուտեն։

Սաստիկ ձմեռուան ատեն, երբոր գետինը ձիւնով ծածկուած է, սոսկալի ոռնալու ձայն մը շատ անգամ կը լսուի գիշերուան հանդարտ ժամանակը։ Հետևեալ օրը երբ գիւղացիք կը նային որ կով մը կամ ձի մը կորսուած է կը հասկնան որ գայլն անտառէն եկած է։

Անգամ մը Ռուս ազնուական մ'իր կնկան հետ քառաձի բալխիրով համբորդութիւն ընելու ատեն խումբ մը գայլեր իրենց վրայ կը յարձակին։ Մեծ վտանգի մէջ էին, վասն զի գայլերը զիրենք պատառ պատառ պիտի ընէին։ Ասոր համար առաջ ձի մը և ապա ուրիշ մը կ'արձակեն և գայլերուն կը թողուն որ ուտեն և իրենք նոյն միջոցին ժամանակ կը գտնան փախչելու։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Գայլը ո՞ր կենդանիներուն կը նմանի։ Ո՞ւր կը շինէ իր որջը։ Ի՞նչ կ'ուտէ։ Ձմեռն ինչպէս կ'որսան գայլերը։ Երբեմն ո՞ւր կ'երթան կերակուր փնտռելու։ Շատ անգամ գիշերուան լռութեան ժամանակ ի՞նչ կը լսուի։ Ռուս ազնուական մ'իր կնկան հետ ինչպէս ազատեցաւ անգամ մը գայլերէն։



## ԹՈՒԹԱԿԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աղքատ մարդ մը թութակ մ'ունէր։ Այս թութակը սորվեր էր ըսելու. «Ատոր վրայ տարակոյս չկայ։» Միայն այս խօսքերն ըսել գիտէր, և շատ անգամ բոլոր օրը կը պոռար կամ կը սուլէր. «Ատոր վրայ տարակոյս չկայ. — Ատոր վրայ տարակոյս չկայ։»

Ամեն հարցմունքի թութակը նոյն պատասխանը կու տար. «Ատոր վրայ տարակոյս չկայ։»

Օր մը տէրն առաւ զայն և շուկայ տարաւ որ ծախէ։ «Ո՞վ ծախու կ'առնէ իմ թութակս» կը պոռար մարդը. «քսան ոսկի կ'արժէ թութակս։»

Մարդ մը լսեց քսան ոսկին, զարմացաւ ու թութակին դառնալով ըսաւ. «Պապկայ, միթէ դուն քսան ոսկի կ'արժե՞ս։

— Ատոր վրայ տարակոյս չկայ» պատասխանեց պապկան։ Մարդը այս պատասխանէն այնչափ ախորժեցաւ որ թռչունը գնեց ու տունը տարաւ։

Քիչ մ'ատեն անցնելէն ետև՝ զղջաց զայն ծախու առնելուն վրայ և երբ օր մը վանդակին քովը կեցեր էր, ըսաւ. «Խենդ չէ՞ի որ այնչափ ստակ ծոխը նետեցի պապկան գնելու համար։

— Ատոր վրայ տարակոյս չկայ» պոռաց թռչունը։ Եւ այս անգամ թութակն իրաւունք ունէր։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Թութակն ի՞նչ խօսք սորվեր էր։ Իր տէրն ո՞րչափ ստակ պահանջեց անոր համար։ Մարդն ի՞նչ ըսաւ թութակին։ Ի՞նչ պատասխանեց թութակը։ Այն ատեն ի՞նչ ըրաւ մարդը։ Երբ գնեց և զղջաց ի՞նչ ըսաւ։ Թռչունն ի՞նչ պատասխանեց։ Այս անգամ թութակը . . . ։

## ՈՒՂՏ

Երկրիս մէկ քանի կողմերն ընդարձակ տեղեր կան որ անապատ կ'ըսուին։ Այս անապատներուն մէջ ոչ տուն, ոչ առու և ոչ ծառեր կան։

Չորս կողմը միայն աւազ, քար, ժայռ կը տեսնուին։

Երբոր ճամբորդն այս անապատներէն անցնիլ ուզէ, պէտք է որ ճամբուն համար ամեն պէտք եղածն իր հետն առնէ։

Պէտք է ջուր, կերակուր առնէ այնչափ որ իրեն և իր ուղեկիցներուն համար շատ օրեր բաւեն։

Այս ընդարձակ անապատներուն մէջ ձի մը չկրնար բեռ կրել. բայց Աստուած մարդուն ուրիշ կենդանի մը տուած է որ այս գործին յարմար է։

Այս կենդանին ուղտն է։

Երբոր նաւաստիներ նաւով ծովուն վրայ կը ճամբորդեն, պէտք է որ նաւն ամեն հարկաւոր եղած բաները պարունակէ։ Եւ որովհետեւ ուղտն ալ անապատին մէջ նոյն բանն ընելու պարտաւոր է իր տիրոջը համար, անապատի նաւ կոչուած է։

Երբոր ուղտը բեռնաւորել ուզեն՝ ծունկ կը դնէ, և երբոր ճամբորդութիւնը լմննայ և հանգստանալու օրը գայ ուղտը նորէն ծունկ կը չոքէ որպէս զի բեռն իջեցնեն։

Ուղտը կրնայ շատ ժամանակ քալել առանց կերակուրի, և ճամբայ ելնելէն առաջ, բաւական ջուր կը խմէ որպէս զի շատ օրեր տևէ։

Զարմանալու չէ թէ որ Արաբացին իր ուղտը կը սիրէ և անոր գովեստներ կ'երգէ։ Ձին իր տէրը կոնակը



կ'առնէ կը տանի, կովն անոր կաթ կուտայ և ոչխարը հագուստ ընելու համար բուրդ։ Բայց Արաբացիին համար ուղտն այս ամեն բաներուն տեղը կը բռնէ։

Անապատի ժողովուրդին կաթ և ուրիշ հարկաւոր եղած բաները կը մատակարարէ։ Մեռնելէն ետք՝ ուղտին միսը կ'ուտեն, և իր մազերով հագուստ կը շինեն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Անապատին մէջ ի՞նչ կը գտնուի միա՞յն։ Ի՞նչ բան չկայ։ Ճամբորդն անապատին մէջ հետը ի՞նչ պէտք է տանի։ Ո՞ր կենդանին իր բեռը կը կրէ։ Ինչո՞ւ համար անապատի նաւը կը կոչուի։ Ի՞նչ կ'ընէ երբ բեռնաւորուի ու բեռը առնուի։ Ո՞րչափ ջուր կը խմէ ճամբայ ելնելէն առաջ։

---

## ՇԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քանի մը տարի առաջ՝ պզտիկ տղայ մը, որ հազիւ ութ տարեկան էր, տեղ մը կ'երթար։ Ճամբան երթալու ատեն, կաղ, աղտոտ ու անպիտան շուն մ'առջին ելաւ և սկսաւ անոր ետևէն ցատկռտելով երթալ։

Եթէ դէշ տղայ մ'ըլլար այս շան քարեր պիտի նետէր, բայց մեր ըսած տղան միշտ բարեսիրտ էր և խելօք։

Ուստի տեսաւ որ շունը ծեծեր են ու խեղճը բարեկամ մը կը փնտռէր։ Տղան թողուց որ շունն իր ետևէն գայ մինչև տունը։

Երբոր պզտիկ տղան հարցուց իր մօրն որ արդեօք

հրաման կուտայ որ շունը տունը մանէ, խեղճ կենդա-նին կարծես թէ հասկըցաւ որ ինչ կ'ըսեն։

Շատ տխուր կ'երեւէր և փոքրիկ տղայք սկսան լալ երբոր անոր լայն պայծառ աչքերը տեսան որ դութ կը շարժէին։

Մայրն որ իր զաւակաց սրտլեցուցեր էր բարի ըլլալ, խեղճ, կաղ ու անօթի շունը վռնտել չտուաւ։ Թռ-ղուց որ լուացարանն երթայ և տղաք անոր քիչ մը հաց ու ջուր տուին խմելու, և մաքուր յարդ որ անոր վը-բայ պառկի։

Կենդանին ամեն կրցածն ըրաւ որ իր երախտագիտու-թիւնը անեցուց ցոյց տայ։ Ասդին անդին կը ցատկըր-տէր և իր պզտիկ բարեկամներուն ձեռքը կը լզէր։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Տղուն ետեւէն եկող շունն ի՞նչ վիճակի մէջ էր։ Ի՞նչ պէտք ընէր եթէ չար տղայ մ'ըլլար։ Այս տղան ի՞նչ ըրաւ։ Իր մայրն ի՞նչպէս ընդունեց շունը։ Իր շնոր-հակալութիւնն ի՞նչպէս ցուցուց շունը։

---

Տղաք Թօփ անունը տուին շան, որ իրենց սիրելի բարեկամն եղաւ։

Հիմակ պատմեմ ձեզի թէ ինչպէս բարեկամ եղաւ։ Իրենց հետ դպրոց կ'երթար, և չար տղաքներն անոնց քովէն կը վռնտէր երբոր կը տեսնէր որ իր փոքրիկ տէրերուն վնաս պխտի հասցընեն։

Երբոր տղաք դպրոց մանէին, Թօփ կը դառնար և հաւերուն հետ բակը կը կենար։ Կը նայէր որ հաւերը չփախչին և չկորսուին։ Չար տղայ մը չէր կրնար քար նետել հաւերուն երբոր Թօփ հոն էր։



Երբոր դպրոցէն արձակուելու ժամը գար, տղոց մայ-րը կ'ըսէր. «Թօփ, ատենն եկաւ որ երթաս տղաքը դպրոցէն բերես։»

Թէպէտ շատ ժամանակ անցաւ մինչև որ Թօփ այս խօսքը հասկըցաւ, բայց վերջապէս սորվեցաւ, և երբ որ լսէր այդ հրամանը շուտ մը դպրոց կը վազէր։

Այո՛, աւելի մեծ ճարպիկութիւն ունէր Թօփ։ Անձ-րեւոտ օրեր հովանոցը բերանը կ'առնէր և դպրոց կը տանէր որ իր փոքրիկ տէրերը չթրջուին։

Երբեմն փողոցի տղաք կ'ուզէին հովանոցը բերնէն առնել, բայց Թօփ շուտ շուտ կը վազէր և անվնաս տեղը կը հասնէր։

Այսպէս այս շունն որ ատեն մը կաղ և անպիտան էր, իր պզտիկ բարեկամներուն բարութեան փոխարէնը կ'ընէր։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Տղայք ի՞նչ անուն տուին շան։ Ի՞նչ-պէս իրենց բարեկամ եղաւ։ Ի՞նչ կ'ընէր մայրը երբոր տղո-ցուն տունը հասնէր։

# ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կան կենդանիներ որ բնութեամբ ընկերական են, խումբ խումբ կ՚ապրին, ինչպէս ոչխարը, շունը, ձին, կովը, որ վայրենի տեղերէ քաշուելով ընտանի եղած են, մարդու հետ կ՚ապրին և շատ օգտակար են։ Կան կենդանիներ ալ որ վայրենի են, չեն կրնար ընտանենալ և վնասակար են, ինչպէս առիւծը, կինձը, վագրը։ Պէտք չէ որ չարչարենք ընտանի կենդանիներն որ մեզի շատ ծառայութիւններ կ՚ընեն։

---

ՈՉԽԱՐԸ. — Ոչխարն ի՞նչ կու տայ մեզի։ Բուրդ։

Ի՞նչ կ՚ըսուի ոչխարի մը բոլոր բուրդը։ Գեղմ։

Ի՞նչ կը շինեն բուրդով։ Ասուի, ծածկոց, օթոց, շուխայ, զգեստ, ձեռնոց, գուլպայ և ուրիշ շատ օգտակար բաներ։

Բուրդէն զատ ուրիշ ի՞նչ կ՚օգտուինք ոչխարէն։ Իր մորթէն կաշի կը շինենք, իր միսով կերակուր կ՚ընենք. իսկ իր կաթէն պանիր։

Կաշիով ի՞նչ կ՚ընեն։ Կօշիկ ու մուճակ, փոկ ու գօտի, համետ ու թամբ, գրքի ծածկոյթ և ուրիշ բաներ։

Կենդանիի մը մորթն ո՞վ կաշի կ՚ընէ։ Խաղախորդը։

Ո՞վ կաշիէն մուճակ կը շինէ։ Կօշկակարը։

Ի՞նչ կ՚ըսուի ոչխարին ձագուկը։ Գառնուկ։

Ի՞նչ կ՚ուտէ ոչխարը։ Խոտ։

Շատ մը ոչխարներու ի՞նչ անուն կու տաս։ Հօտ։

Ի՞նչ կը կոչուի անոնց վրայ հսկող մարդը։ Հովիւ։



## ՁԻ

Ձին ազնիւ ու օգտակար կենդանի մ՚է. Համբերող է և աշխատասէր։ Ուրիշի վնաս չըներ և մարդուն կը ծառայէ։ Ուտելու համար ուրիշ կենդանի մը չսպաններ բնաւ, ինչու որ խոտ ու գարի կ՚ուտէ։

Արդէն տեսանք որ կատաղի գայլին դէմ չկրնար ինքզինքը պաշտպանել։ Կրնայ վազել ու փախչիլ, բայց գայլն ալ կրնայ վազել։

Ձին իր տէրը կը սիրէ, և շուտով անոր կը վարժի։

Ձիաւոր մը սիրական ձի մ՚ունէր որ զինք շատ կը սիրէր և շատ վտանգներէ ազատեր էր։ Վերջապէս այս ձիաւորը պատերազմի մէջ կ՚ըսպաննուի ու ձիէն վար կ՚իյնի։ Երբ քանի մ՚օր ետք իր մարմինը գտան, տեսան որ հաւատարիմ կենդանին դեռ անոր քովը կը կենար։ Այս քանի մ՚օրուան մէջ՝ ձին իր տիրոջը քովէն չէր հեռացած։ Առանց կերակուրի ու ջուրի, անոր մօտ սպասեր էր, և գիշակեր թռչունները վռնտեր էր։ Միթէ այս ձին ազնիւ կենդանի մը չէ՞։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ձին ի՞նչ տեսակ կենդանի է։ Ազնիւ է։ Ի՞նչ բան կ՚ուտէ։ Ո՞ր կենդանիին դէմ չկրնար կռուիլ։ Պատմէ ձիաւորին պատմութիւնը։ Ո՞րչափ ատեն անոր քովը կեցաւ։

---

ՁԻ. — Ի՞նչ բանի կը գործածուի ձին։ Մեզ կրելու և սայլակ ու կառք քաշելու։

Ձի մը ինչպէս կը լծեն սայլակի կամ կառքի։ Փոկով ու երկաթի շղթաներով։

Ձիուն վրայ եղած կապերն ու օղակներն ի՞նչ են։ Իր կազմածքը։

Ի՞նչ կ'ըսուի ձիուն կռնակն եղած նստարանը։ Թամբ։
Հապա ձին վարելու համար փոկը՞։ Երասանակ։
Հապա երասանակին միացած ու բերանն եղած երկաթը՞։ Սանձ։
Պզտիկ ձի մը ի՞նչ կը կոչուի։ Մտրուկ։
Ուրիշ ի՞նչ բանի կրնայ ծառայել ձին։ Իր մորթէն կաշի, և իր երկայն մազերով ու պոչովը սանտրներ կը շինուին։

Մենք կ'ուտե՞նք անոր միսը։ Ոչ, բայց կան երկիրներ ուր անոր միսը կ'ուտեն և զամբիկին կաթն իբրև սնունդ կը գործածեն։

---

## ԿՈՎ.

Կովը ամենէն շատ աշխատող ու տոկուն կենդանին է։ Դաշտին մէջ այն կ'աշխատի և ագարակին ամենէ օգտակար սպասաւորն է։ Հողագործին գլխաւոր գանձն է։ Այն կը հերկէ հողը, այն կաթ կուտայ, այն կը պարարէ հողը, այն լաւ միս կուտայ, և հեզ, ընտիր կենդանի մ'է։

---

ԿՈՎ. — Կովէն ի՞նչ կ'առնենք։ Կաթ, մածուն ու սեր։
Իսկ կաթէն ի՞նչ կը շինուի։ Կարագ ու պանիր։
Ի՞նչ անուն տալու է այն մարդուն որ կաթ կը ծախէ։ Կաթնավաճառ։



Կովին բնակած տեղին անունն ի՞նչ է։ Գոմ։
Կովը մեզի ուրիշ բաներ կուտա՞յ։ Կաշի, եղջիւր և միս։
Եղջիւրով ի՞նչ կը շինուի։ Սանտր, դգալ, դանակի կոթ, կոճակ և թաս։
Ի՞նչ է եղջերափող։ Նուագարան մը, պղնձէ շինուած։
Ինչո՞ւ համար եղջերափող կ'ըսուի։ Ինչու որ երաժշտական առաջին նուագարանները եղջիւրէ շինուեցան։
Ի՞նչ կ'ըսուի նորահաս կով մը։ Որթ։

---

ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ. — Ոչխարէն ու կովէն զատ ո՞ր կենդանիները մեզի ուտելու միս կուտան։ Խոզը, հաւը, բադը, սագը, հնդկահաւը, նապաստակը և ճագարը։
Խոզէն ուրիշ ի՞նչ բան կ'առնենք։ Կաշի և իր կարծր մազերը կամ ստեւ որոցմէ խոզանակ կը շինենք։
Սօսինձն ուրկէ՞ կը շինուի։ Կենդանիներու ամբակէն ու մորթէն։
Երբ հաւերը կենդանի են ի՞նչ կուտան մեզի ուտելու։ Հաւկիթ։
Իսկ երբոր մորթուին ի՞նչ կ'ըստանանք։ Միսը. նոյնպէս փետուրներն որով անկողին ու բարձ կը շինենք։
Մետաքսէ կերպասն ուրկէ՞ կը շինուի։ Պզտիկ որդի մը մանած թելերէ։
Ի՞նչ է մուշտակը։ Կենդանիներու մազոտ մորթը։
Գրքերու կողքը շատ անգամ ինչէ՞ կը շինուի։ Իշու կաշիէն։
Ի՞նչ է փետուրէ գրիչը։ Սագի մը թևէն առնուած փետուր մը։
Ուրկէ՞ կը շինուի կանթեղը։ Ճարպէ, կամ կենդանիներու եղէն։

Ուրիշ ի՞նչ բան կը շինեն ճարպէ կամ եղէ ։ Աճառ ։
Ամենէ լաւ ճրագներն ո՞ւսկից կը շինուին ։ Մոմէ, որ մեղուներուն գործն է ։
Մեղուներէն ուրիշ ի՞նչ կ'ունենանք ։ Մեղր ։

---

## ՍԵՒ ԱՐՋԸ

Սև Արջը անտառներու մէջ կ'ապրի ։ Դիւրաւ ծառերու վրայ կը մագլի և շատ անգամ իր բնակարանը կ'ընտրէ ծառի փապարի մը մէջ ։

Արջը շատ կը սիրէ վայրի պտուղներ, որ առատ կը գտնուին անտառին մէջ ։

Նոյնպէս մեղր կը սիրէ արջը և վայրի մեղուներուն փեթակները կը գողնայ ։ Վայրի մեղուներն գոգաւոր ծառերու մէջ կը շինեն իրենց փեթակներն և արջը մեղրին հոտն առնլով՝ փեթակները կը գտնէ ։

Երբոր փեթակ մը կը գտնէ, ծառէն վեր կ'ելլէ և ժամերով կը կրծէ ու կը կրծէ ծառին կեղևն մինչև բաւական լայն ծակ մը բանալը որ թաթն անոր մէջ մտնէ ։

Այն ատեն՝ մեղուներուն խայթոցը բանի տեղ չդնելով արջը ծակին մէջ կը խօթէ թաթն և մեղրին հետ բջիջի կտորներ դուրս կը հանէ ։ Մինչև որ արջը խեղճ մեղուներուն պաշարը չհատցընէ անկից չհեռանար ։

Երբոր ձմեռը կը հասնի՝ արջը խոռոչի կամ փոսի մը մէջ կը պըլլի խիտ ծառերու տակը ։ Անոր մէջ խշտեակ մը կը շինէ տերևներով և ոստերով, և երբ



որ ձիւն վաղի, ձիւնը զինք կը ծածկէ և անոր մէջ հանգիստ կը հանգչի ։ Աչքը կը՛ գոցէ և բոլոր ձմեռը կը քնանայ ։

Երբոր գարունը գայ նորէն աչքը կը բանայ և կ'ըսկսի թափառիլ անտառներուն մէջ ։

Մարդիկ անտառը կ'երթան արջը որսալու ։ Անոր մորթը կ'ուզեն առնել որ վերարկու, ծածկոց ու մուշտակ շինեն ։ Անոր միսն ալ կ'ուտեն և իր ճարպով եղ կը շինեն ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ո՞ւր կը բնակի Սև Արջը ։ Ո՞ւր կը հաստատէ իր բնակարանը ։ Ի՞նչ կը սիրէ ։ Ո՞ւր կը գտնէ մեղրը ։ Ի՞նչ կ'ընէ փեթակները գտնելու համար ։ Ձմեռն ի՞նչ տեղ կ'անցընէ ։ Ե՞րբ կ'արթննայ քունէն ։ Մարդիկ ո՞ւր արջ կ'որսան ։ Իր ճարպէն ի՞նչ կը շինեն ։

---

## ԾՈՅԼԸ

Ծոյլ տղայ մը կ'ըսէր օր մը իր բժշկին. — «Ես չեմ աշխատիր, վասն զի միշտ հիւանդ եմ ։» Բժիշկն անոր պատասխանեց. — «Աւելի ճշմարիտ բան մը խօսած պիտի ըլլայիր եթէ ըսէիր. Միշտ հիւանդ եմ, վասն զի բնաւ չեմ աշխատիր ։ Աղէկ գիտցիր, ծուլութիւնն, որ ամեն չարեաց պատճառն է, հիւանդութիւններ ալ կը բերէ ։»

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ կ'ըսէր ծոյլ տղայ մը ։ Ի՞նչ պատասխան տուաւ բժիշկը ։ Ի՞նչ հիւանդութիւններ կը պատճառէ ծուլութիւնը ։

## ՊԶՏԻԿ ԱՂՋԻԿՆ ՈՒ ՊԷՊԷԿԸ

Վարժուհի մը աղուոր պէպէկ մը ընծայ տուեր էր վեց տարեկան աղջկան մը։ Քանի մ՚օր ետք՝ վարժուհին պզտիկ աղջկան տունը գնաց որ նայի թէ պէպէկին հետ կը զուարճանա՞յ։ Բայց երբոր հարցուց թէ ո՞ւր է պէպէկը, ըսին իրեն որ պզտիկը կրակը նետեր էր զայն։ Այն ատեն վարժուհին աղջիկը կանչեց և անոր ըսաւ. «Իմ պզտիկ սիրուն աղջիկս, ինչո՞ւ համար պէպէկդ կրակը նետեցիր։» Աղջիկը արտասուք թափելով պատասխանեց. «Ի՞նչ ընեմ, ես անոր ըսի որ զինք կը սիրեմ, և ան ինծի պատասխան չտուաւ։»

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ տուաւ վարժուհին պզտիկ աղջկան։ Ինչո՞ւ համար աղջիկը պէպէկը կրակը նետեր էր։

---

## ՄԱՄՈՒԿՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Օր մը մամուկը շերամին հետ խօսքի եկաւ։ Մամուկն ըսաւ. «Ի՞նչ է այս իմ քաշածս մարդերու երեսէն։ Իմ տունս աղուոր կը հիւսեմ և մարդիկ աւելը կ՚առնեն և բոլոր շինածս կ՚աւրեն. ինչ խենդ ու անգութ են։ Հապա դու, շերամ, որ գզուելի միջատ մ՚ես, դու միայն սիրելի ես անոնց. քու հինածդ խնամօք կը ժողվեն կը պահեն, թէև իմ շինածէս աւելի հաստ է։» Շերամը պատասխանեց. «Կ՚աղաչեմ այդչափ մի՛ բար-



կանար. ամէն մարդ գիտէ որ շատ ճարպիկ հիւսող ես, ամէն մարդ կը խոստովանի որ շատ նուրբ թելերով կը բանիս ոստայնդ, բայց ըսէ ինծի ինչ օգուտ ունի, մինչդեռ իմ շինած թելերս ամէն տեղ յարգ ունի։»

Օգտակարութիւնը արժէքի փորձաքարն է։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ինչո՞ւ կը գանգատէր մամուկը։ Մարդերուն համար ի՞նչ կ՚ըսէր։ Ի՞նչ կ՚ըսէր շերամին։ Այս ի՞նչ պատասխանեց։

---

## ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Օր մը անտառի մը մէջ քնացեր էր առիւծը. Քանի մը մուկեր սկսան խաղալ և ատեն ատեն առիւծին վրայ ելնելով կը վազվզէին։ Առիւծն անոնց ձայնէն արթնցաւ. մուկերը փախան, մինակ մէկ հատ մուկ չկրցաւ փախչիլ և առիւծին թաթին տակն ինկաւ։

Առիւծն այդ մուկը պիտի սպաննէր, բայց այնչափ աղաչեց ու պաղատեց կենացը խնայելու որ առիւծը թողուց մուկն որ ազատ երթայ իր տեղը։ Այն ատեն երախտապէտ մուկն ըսաւ. «Ազնիւ առիւծ, յուսամ որ օրին մէկն առիթ պիտի ունենամ այդ բարութեանդ փոխարէնը հատուցանելու։»

Առիւծը խնդաց և չհաւտաց ըսաւ որ անանկ պզտիկ կենդանի մը պիտի կարենայ իրեն օգտակար ըլլալ։

Շատ ժամանակ չանցաւ՝ երբ առիւծը հաստ չուանով շինուած ցանցի մը մէջ ինկաւ։ Քանի մը որսորդներ այս ցանցը փռեր էին անտառին մէջ. Առիւծը

սպրդած տեղը աշխատեցաւ ցանցէն դուրս ելնելու և սկսաւ կատաղաբար մռնչել։

Պզտիկ մուկն անոր մռնչիւնը լսեց և անոր օգնութեան վազեց։ Մուկն սկսաւ իր սուր ակռաներով ցանցը կրծել և երկար ատեն աշխատելէն ետև՝ յաջողեցաւ չուանը կտրել և առիւծն ազատել։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Մուկերն ի՞նչ կ'ընէին առիւծը քնանալու ատեն։ Ի՞նչ ըրաւ առիւծն երբոր արթնցաւ։ Մուկն ի՞նչ ըրաւ երբոր տեսաւ որ առիւծը զինք պիտի ուտէ։ Ի՞նչ ըրաւ մուկն երբոր արձակուեցաւ։ Ինչո՞ւ համար ծիծաղեցաւ առիւծը։ Ե՞րբ հատոյց ըրաւ պզտիկ մուկը։ Ի՞նչ կը սորվեցնէ այս առակը։

---

## ՍԻՐՈՒՆ ԳԱՌՆՈՒԿԸ

Ընտանիք մը կար որ շատ աղքատ էր։ Այս ընտանիքը կերակուրի ու հագուստի համար տան մէջ եղածը ծախեր և միայն սիրուն գառնուկ մը մնացեր էր։ Այս գառնուկը տղոց սիրելին էր և իրենց մայրը՝ մտածելով որ պիտի ստիպուի զայն ալ ծախելու՝ շատ կը տրտմէր։

Վերջապէս չուզելով միտքը կը դնէ ծախու հանել գառնուկն, որուն անունն էր Բամպիկ։ Պէտք էր մսավաճառը կանչել. տղոց մայրը չէր կրնար անոնցմէ մին ղրկել որ մսավաճառը կանչէ. ուստի ինքն անոր գնաց, սիրտը կտրած, և Բամպիկը ծախելու համար սակարկեց։



Երբոր տղաք գառնուկին հետ կը խաղային, մսավաճառն ու իր սպասաւոր տղան դուռն եկան։

«Բարի լոյս, Վարվառէ խաթուն, ըսաւ բարձր ձայնով մը։ Ո՞ւր է գառնուկն, եկայ որ առնեմ տանիմ։

«Ի՞նչ պիտի առնէ տանի, հարցուց տղոց մէկը, մօրը քովը վազելով, և ահ ու դողով՝ անոր երեսը նայեցաւ։

«Ընդդէն գնա՛, սիրական տղաս, ըսաւ Վարվառէ տիկինը՝ տղան կամացուկ մը անդին հրելով։

«Այս իմ գառնուկս է հիմա, Կարոլոս, ըսաւ մսավաճառին տղան, զուարթ ձայնով մը, և գնաց գառնուկին մօտ որ չուանով մը կապէ։

«Չէ, քու գառնուկդ չէ, մերն է» ըսաւ փոքրիկ տղան, անոր առջևը կենալով։

Բայց տղան զանի անդին հրեց, Բամպիկին վիզէն չուան մը կապեց և սկսաւ քաշել խեղճ կենդանին։ Ողորմելի գառնուկն սկսաւ մայել տրտում տխուր։

Գառնուկին ձայնը տան տիկնոջ սիրտը շարժեց և սաստիկ այլայլեցաւ։ Քիչ մ'ատեն՝ բոլոր տղաք անոր չորս դին առին և լալով աղաչեցին որ սիրուն գառնուկը չծախէ։

«Կ'աղաչեմ, ըսէ մանչիդ որ քիչ մը կենայ» ըսաւ Վարվառէ տիկինը վշտալի ձայնով մը մսավաճառին։

Երբոր սպասաւոր տղան իր տիրոջ ձայնը լսեց կեցաւ, գառնուկը չքաշեց և ասոր վրայ մայելը դադրեցուց խեղճ կենդանին։

«Սիրական զաւակներս, ըսաւ տղոց մայրը սրտաշարժ ձայնով մը, ես հիմա շատ աղքատ եմ և չեմ կրնար ձեր հօրը պէս շահիլ, երբոր դեռ ողջ էր։ Բարեսիրտ մսավաճառը Բամպիկին համար ստակ տուաւ ինծի, և այս ստակով հաց պիտի առնեմ որ ուտէք։

«Չէ, չէ, չէ, պոռացին տղաքը։ Մենք չենք ուզեր որ Բամպիկը ծախես։ Մեր գառնուկն է, և պէտք չէ որ ծախես, մայր։ Աւելի աղէկ է որ անօթի մնանք քան թէ գառնուկը ծախենք։»

Պարապ տեղը տիկին Վառվառէն ջանաց հասկցընելու իր տղոց որ գառնուկը ծախելու ստիպուած է։ Որչափ ան կը խօսէր որ համոզէ, այնքան տղաք ալ կը կուլէին որ Բամպիկը չծախուի։

Վերջապէս տիկին Վառվառէն սակը ետ տուաւ, ըսելով մսավաճառին. «Չեմ կրնար, պարոն, հիմա ծախել գառնուկը։ Ուրիշ անգամի մնայ. պիտի ջանամ որ քիչ մ'ատեն ալ դիմանամ։»

Մսավաճառն, որ ամեն բան դիտեր էր, շատ գթաց այս դժբաղդ ընտանիքին վրայ, և երբ տիկին Վառվառէ ձեռքն երկնցուց որ առած սակը ետ տայ, ան ըսաւ. «Ո՛չ գառնուկը կ'ուզեմ և ոչ ոչխարը։ Իրաւ է որ ես մսավաճառ մ'եմ, բայց ես ալ փափուկ սիրտ ունիմ։ Չեմ ուզեր տղոց սիրական գառնուկը յափշտակել։ Բամպիկը քեզմէ ծախու պիտի առնեմ և տղոց պիտի տամ։»

Այսպէս խօսելու ատեն՝ մսավաճառը շատ այլայլած էր և աչքերը լեցուեցան։

Այն ատեն Բամպիկին ազատ ձգեցին, և երբ պզտիկ տղաք անոր չորս դին առին և սկսան շոյել՝ շատ ուրախ ու զուարթ էին։

Քանի մը բարեսիրտ բարեկամներ Վառվառէ տիկնոջ օգնեցին և անկից ետք այնքան տառապանք չքաշեց։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Մայրն ինչո՞ւ ստիպուած էր գառնուկը ծախելու։ Ինչո՞ւ համար սիրտը կոտրած էր։ Ո՞վ գնաց շու-



կան առնելու համար։ Տղոց ի՞նչ կ'ըսէին երբոր մսավաճառն ու էր մտնել եկան։ Ի՞նչ ըրաւ մանչն Բամպիկին մօտ երթալով։ Ի՞նչ պատասխան տուաւ Վառվառ։ Ե՞րբ մերը սիրտը բոլորովին կոտրեցաւ։ Ի՞նչ ըրաւ տղոց սրտին համար։ Վերջապէս ի՞նչ ըրաւ Վառվառէ տիկինը։ Ի՞նչ ըրաւ մսավաճառը։

---

## ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ԿՈՒԺԸ

Արագիլ մը շատ ծարաւի էր, կուժ մը տեսաւ ու գնաց որ անկից քիչ մը ջուր խմէ։ Ջուր կար կուժին մէջ, բայց այնչափ քիչ էր որ խեղճ արագիլն իր կտուցին ծայրն անգամ չկրցաւ թրջել։

«Պէտք չէ յուսահատիլ, ըսաւ արագիլն ինքնիրենը․ ով որ կամք ունի ճամբայ մը կը գտնէ։»

Եւ գլխուն մէջ յանկարծ հնարք մը ծնաւ։ Որովհետև չէր կրնար ջրին հասնիլ, մտածեց որ ջուրն իրեն հասցընէ։

Արագիլն քար մ'առաւ կտուցովն և կուժին մէջ նետեց, վերջն ուրիշ մը, նորէն ուրիշ մ'առաւ, և երբոր քարերը կուժին մէջ ընկան, ջուրն սկսաւ վեր ելնել։

Արագիլն իր աշխատանքին պտուղը վայելեց, և ջրէն խմեց, այնպէս որ եթէ այս հնարքը չմտածէր ծարաւէն պիտի մեռնէր։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Արագիլն ո՞ւր գնաց ջուր փնտռելու։ Կուժին մէջ ջուր կա՞ր։ Ինչո՞ւ չկրցաւ խմել։ Ի՞նչ ըսաւ ինքնիրեն։ Ի՞նչ հնարք մտածեց։ Ինչպէ՞ս ջուրը բարձրացաւ։

## ՇՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՏԻՐԸ

Երիտասարդ մը կ'ուզէր իր շունը գետը նետել ու խեղդել։ Պզտիկ նաւակ մը կը մտնէ, շունն ալ հետը կ'առնէ և ափունքէն կը հեռանայ։ Երբոր հոսանքին մէջ տեղը կը հասնի շունը կը բռնէ և յանկարծ գետը կը նետէ։ Խեղճ շունը ջրին տակը կ'երթայ կըկորսուի, քիչ մ'ետք երեսը կ'ելնէ և յուսահատութեամբ բոլոր ճիգը կը թափէ որ նաւակին հասնի։ Բայց ամէն անգամուն որ նաւակին կը մօտենար՝ իր տէրը թիակովը կը հրէր։ Այս կռիւը՝ շան ու տիրոջը մէջ այսպէս կը շարունակուէր, երբոր տէրը՝ համբերութիւնը հատնելով, երկու ձեռքով թիակը կը բռնէ և շան գլխուն սաստիկ կը զարնէ, բայց նոյն միջոցին՝ ոտքը կը սահի ու ինքն ալ գետը կ'իյնայ։ Այն ատեն տեսարանը կը փոխուի։ Հաւատարիմ շունը գետին տակը կ'երթայ, իր տէրը կը բռնէ և գետեզրը կը բերէ, թէև քիչ մնաց որ հոսանքը զինք պիտի տանէր։

Այսպէս շունն իր տիրոջ մարդասիրութեան օրինակ մը կուտայ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Երիտասարդ մը ո՞ւր նետեց իր շունը։ Խեղդուեցա՞ւ շունը։ Ինչո՞ւ և ի՞նչպէս փրկեց ընկղմող երիտասարդը։ Խեղդուեցա՞ւ։



## ԲԱՐԻ ԳՈՐԾ

Օր մը տղայ մ'իր դաստիարակին հետ դաշտերը կը պտըտէր։ Տունը դառնալու վրայ էին՝ երբոր՝ կէսօրին մօտ՝ զոյգ մը մուճակ տեսան դաշտին ծայրը։ Գործաւոր մը քիչ մը հեռուն կ'աշխատէր և այն մուճակներն այն տեղը հաներ դրեր էր։

Տղան չարասիրութենէ դրդուած՝ իր դաստիարակին ըսաւ. «Եկէք խաղ մը խաղանք այս գործաւորին։ Իր մուճակները ցանկապատին մէջ պիտի պահեմ, և երբ որ կէսօրին ճաշի երթայ պիտի չգտնէ, մենք ալ պիտի խնդանք։»

Ազնուամիտ դաստիարակը պատասխանեց. «Աւելի լաւ խաղ մը կրնաս խաղալ այս մարդուն. ամէն մէկ մուճակին մէջ հինգ փրանքնոց մը դիր, և պիտի տեսնես թէ ինչպէս պիտի գոհ և երջանիկ ըլլայ. դուն ալ պիտի ուրախանաս։

— Իրաւունք ունիք» ըսաւ տղան։ Ուստի գնաց երկու հինգ փրանքնոց դրաւ խեղճ գործաւորին մուճակներուն մէջ։

Կէսօր մօտ էր. տղայ ու դաստիարակ դացին ցանկի մը ետին պահուըտեցան և առանց տեսնուելու սկսան նայիլ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Դաշտն ո՞վ կը պտըտէր։ Ի՞նչ տեսան։ Մուճակներն որո՞ւնն էին։ Ի՞նչ չարութիւն մտածեց տղան և ինչո՞ւ համար։ Դաստիարակն ի՞նչ առաջարկեց։ Տղան ընդունե՞ց։ Ի՞նչ ըրաւ։ Ո՞ր ժամուն։

Երբ կէսօր եղաւ, խեղճ բանւորն իր գործը թողուց և գնաց իր մանչուկները հագնելու. բայց որչափ զարմացաւ երբոր իր ոտքին տակը բան մը զգաց :

Շուտ մը կը ծռի, կը փնտռէ և հինգ ֆրանքնոց մը, կլոր ոսկի մը կը գտնէ : Այս տեսնելուն սաստիկ սիրտը կ'այլայլի, աչքերը կը լեցուին և ծունկի գալով կը պոռայ. «Աստուած իմ, դու ղրկեցիր ինձ այս անակնկալ օգնութիւնը : Գիտէիր որ կինս ու զաւակներս հագնելու համար ստակ չունէի, և այս գումարը տուիր ինձի : Օրհնեալ ըլլաս, Աստուած իմ :»

Դաստիարակն ու աշակերտը չերեւցան բանւորին. այլ երբոր իր տան ճամբան բռնեց ուրախ զուարթ, դուրս ելան : Այն ատեն աշակերտն իր բարեխիղճ դաստիարակին վիզէն պլլուելով սրտաշարժ ձայնով մ'ըսաւ.

«Շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ ձեզի որ այսպիսի ընտիր դաս մը տուիք ինձի : Բնաւ երկու հինգ-ֆրանքնոցը պիտի չմոռնամ : Հիմակ բոլորովին հասկցայ որ երբ բարիք կ'ընէ մարդ ամենէ քաղցր ուրախութիւնը կ'զգայ :

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Բանւորն ի՞նչ ըրաւ երբ կէսօր զարկաւ : Ինչո՞ւ սիրտը կ'այլայլի : Ի՞նչ կ'ըսէ : Նոյն միջոցին ո՞ւր էին դաստիարակն ու աշակերտը : Այս վերջինն ի՞նչ ըսաւ դաստիարակին :

---



## ՃԵՐՄԱԿ ԱՐՋ

Հիւսիսի պաղ երկիրները միշտ ձիւն կայ հողին վըրայ : Ամառն անգամ ցուրտ է, ինչու որ սառոյցի խոշոր կտորներ ծովուն վրայ կը ծփան :

Այս տեղն է Բեւեռային Արջին տունը : Հոգը չէ ցուրտը. ինչու որ Աստուած անոր խիտ մուշտակէ վերարկու մը տուած է որ տաքնայ : Ինչպէս որ դու տաք օդն ու արեւը կը սիրես այնպէս ալ Ճերմակ Արջը կը սիրէ կծու օդը :

Քեզի պէս սառոյցին վրայ չսահիր, ինչու որ ոտքին ներբաններն երկայն մազերով ծածկուած են : Այնպէս յուշիկ կը քալէ որ կարծես թէ զոյգ մը մուշտակէ կօշիկ հագած է :

Արջը ծովու մօտ կը բնակի, վասն զի կը սիրէ ջրին մէջ լողալ : Հոն ալ շատ որս կը գտնէ ուտելու :

Ճաշի համար կ'աշխատի փոկ մը (ծովու հորթ) բռնել : Սառոյցին վրայ կը պտըտի մինչև որ ծակ մը կը գտնէ ուր սառը հալած է :

Արջը գիտէ որ փոկը սովորաբար այն տեղէն գլուխը վեր կը հանէ : Ասոր համար կը նստի ու կը հսկէ : Քիչ մ'ետք՝ փոկին կլոր գլուխը ծակէն դուրս կ'երևի : Արջն անոր վրայ կը ցատկէ, ջրէն դուրս կը քաշէ, պատառ պատառ կ'ընէ և կ'ուտէ :

Երբեմն ձուկի մ'ետեւէն կը վազէ արջը ջուրը նետուելով և այնչափ շուտ որ ձուկը չփախած կը բռնէ : Երբեմն ալ սատկած կէտի մը կտոր մը կը գտնէ և զայն կ'ուտէ :

Երբոր արջը ծովափին վրայ ձուկ չգտնէր այնպիսի տեղեր կ'երթայ ուր ձիւնը հալած է, և հաստապտուղ կ'ուտէ ։ Եթէ շատ անօթի ըլլայ, մինչև անգամ ծովեզրը բուսած խոտերով կ'ապրի ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ո՞ւր կը բնակի Բևեռային Արջը ։ Ինչո՞ւ համար ցուրտէն չվախնար ։ Ինչո՞ւ համար սառոյցին վրայ չսահիր ։ Ինչո՞ւ համար ծովուն մօտ կը բնակի ։ Ո՞ր ուտելիքն աւելի կը սիրէ ։ Երբոր ծովեզրին վրայ կերակուր չգտնար ո՞ւր կ'երթայ և ի՞նչ կ'ուտէ ։

---

## ՏՈՒՆ ՄԸ

ԴՈՒՐՍԻ ԿՈՂՄԸ. — Ամենէն առաջ տուն մը ո՞ր մասը կը շինեն. — Հիմունքը ։

Ո՞ւր կը շինեն. — Հողին տակը ։

Ինչո՞ւ համար հիմերն հողին տակը կը դնեն. — Որպէս զի տունը հաստատուն ըլլայ և պատերուն տակը ջուր չերթայ ։

Հիմերուն վրայ ի՞նչ կը շինեն. — Պատերը ։

Ի՞նչ բանէ կը շինուին պատերը. — Քարով կամ աղիւսով և շաղախով ։

Եթէ քար ու աղիւս չգտնուին ի՞նչ կը գործածեն. — Փայտ, երբեմն երկաթ ։

Ի՞նչ է այն տեղը ուսկից քար կը հանեն. — Քարահանք ։

Աղիւսն ի՞նչ բանէ շինուած է. — Կրակի մէջ այրած կաւէ ու մոխիրէ ։

1376



Շաղախն ինչէ՞ կը շինուի. — Կիրով ու աւազով կամ հողով, որ ջրի հետ կը խառնեն ։

Ի՞նչ է կիրը. — Հնոցի մէջ այրած քար է ։

Ինչո՞ւ համար տղայ մը կրնայ բանալ դուռ մը, զոր տասը տղայ չեն կրնար վերցնել. — Վասն զի իր ծխնիներուն վրայ դիւրաւ կը դառնայ ։

Ինչո՞վ կը գոցեն դուռը. — Նիգով կամ դռնփակով ։

Պատուհանները ինչէ՞ շինուած են. — Փայտէ շրջանակներով, որ ապակիով ծածկուած են ։

Ինչո՞ւ համար ապակիով կը ծածկեն. — Որպէս զի սենեակը լոյս առնէ և հովէն ու անձրևէն պահպանուի ։

Ատակին ինչէ՞ շինուած է. — Աւազով կամ գոյլախճով ու կալաքարով, զոր իրարու հետ կը խառնեն ։

Ինչո՞ւ համար պատուհանները միշտ բանալու է. — Որպէս զի սենեակը թարմ օդ մտնէ ։

Երբոր պատերը շինուին, տան կատարն ինչո՞վ կը գոցեն. — Պրշակով ու սանիքով ։

Տանիքին վրայ ի՞նչ կը դնեն. — Կղմինտրներ ։

Ի՞նչ է կղմինտրը. — Լայն աղիւսներ, կաւէ շինուած ։

Շատ անգամ երդիքներն ինչո՞վ գոցուած են. — Յարդով ։

Պատին ո՞ր մասը տանիքէն աւելի վեր կը բարձրանայ. — Ծխանը ։

Ի՞նչ է այս. — Մուխը տանէն վեր հանելու համար է ։

---

## ՃԱՄԲՈՐԴՆ ՈՒ ԱՌԻՒԾԸ

Ափրիկէի մէջ մարդ մը ճամբորդելու ելեր էր։ Երբ որ ընդարձակ դաշտէ մը կ'անցնէր հեռուէն առիւծ մը տեսաւ։ Առիւծն ալ զինք տեսաւ և սկսաւ կամաց կամաց անոր ետևէն երթալ։

Երբոր ճամբորդը շուտ քալէր, առիւծն ալ շուտ կը քալէր. երբոր կամկ առնէր, առիւծն ալ կամկ կ'առնէր։ Մարդը գիտեց որ առիւծը մինչև իրիկուն իր ետևէն պիտի երթայ և երբ մութը կոխէ իր վրայ պիտի յարձակի։

Չէր կրնար առիւծէն փախչիլ, վասն զի առիւծը իրմէ աւելի շուտ պիտի վազէր։ Այսպէս հնարք մը մտածեց որ զանի խաբէ։

Բարձր բլրի մը վրայ ելաւ, որու տակը խորունկ փոս մը կար։ Գետինը պառկելով ինքզինքը ժայռի մ'ետին պահեց, ուր առիւծը չէր կրնար զինք տեսնել։ Վերջը ճիւղ մ'առաւ ժայռերուն մէջէն, անոր վրայ դրաւ իր գլխարկն ու վերարկուն, այնպէս որ մարդու նմանի։

Եաքը՝ ճիւղը ժայռին վրայ անկեց որու ետին ինք պահուըտած էր։

Քիչ ատենէն առիւծը կամաց կամաց վեր ելաւ։ Երբոր վերարկուն ու գլխարկը տեսաւ անոնց վրայ ցատկեց, և փոսին մէջ ընկաւ ու մեռաւ։

Ճամբորդը պահուըտած տեղէն ելաւ և շուտ մ'իր տունը հասաւ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ճամբորդն ի՞նչ տեսաւ ճամբուն։ Ի՞նչ ըրաւ առիւծը։ Ի՞նչ էր անոր միտքը։ Ի՞նչ հնարք գործածեց ճամբորդն ազատելու համար։ Ո՞ւր գնաց այդ հնարքը գործածելու համար։ Ճիւղին վրայ ի՞նչ դրաւ։ Ի՞նչ ըրաւ առիւծը երբոր զանոնք տեսաւ։ Ի՞նչ եղաւ առիւծը։ Հապա մարդը՞։



---

## ՆԱՊԱՍՏԱԿՆ ՈՒ ԿՐԻԱՅՆ

Նապաստակ մը կը պարծենար միշտ որ շատ շուտ վազող է։ Անգամ մը կրիային հետ մրցումի ելաւ և սկսաւ առջևէն վազվզել, այն միջոցին որ իր հակառակորդը՝ կրիայն, իր տունը կռնակին առած՝ ծանր ծանր կը քալէր։

Նապաստակը կէս ճամբուն վրայ կեցաւ որ նայի թէ կրիայն ո՞ւր մնաց և սկսաւ ըսել խնդալով. «Հա՛, հա՛, բարեկամ, թէ որ կարճ ոտքերդ քիչ մ'աւելի շուտ չշարժես, աշխարհիս ծայրը պիտի հասնիմ մինչև որ դու դաշտին ծայրը հասնիս։»

Կրիայն խօսք մը չըսաւ, բայց շարունակ քալեց։

«Իրաւ որ, ըսաւ անամօթ նապաստակը, եթէ երեք ոտքով ալ քալեմ քեզմէ աւելի շուտ պիտի հասնիմ։ Կարծեմ լաւ կ'ըլլայ թէ որ թեթև քուն մը քաշեմ։ Եթէ դու նշանին անգամ մօտենաս, բաւական է որ ես մէկ երկու հեղ ցատկեմ ու քեզի կը հասնիմ։»

Ուստի նապաստակը խոտին վրայ երկնցաւ և շուտ մը քնացաւ, այնպէս որ չլսեց կրիային ոտքին ձայնն երբոր իր քովէն անցաւ, չտեսաւ զանի երբոր առաջ կ'երթար, առանց ետին նայելու։

Ցանկարծ նապաստակն արթնցաւ ու ցատկեց. պատրաստ էր սլաքի պէս նետուիլ ու նշանին հասնիլ։ Նոյն միջոցին պոռաց. «Ո՞ւր է կրիան։

«Ա՛հա եմ» պոռաց ձայն մը դաշտին ծայրէն. ծանր բայց շարունակ քալողը մրցանակն առաւ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Անգամ մը նապաստակին որո՞ն հետ մրցում եղաւ։ Ո՞վ անցաւ։ Ի՞նչ ըրաւ երբոր ետին նայեցաւ։ Ի՞նչ պատասխանեց կրիան։ Այն ատեն նապաստակն ի՞նչ ըրաւ ժամանակն անցընելու համար։ Կրիան ի՞նչ ըրաւ։ Նապաստակն ի՞նչ պոռաց երբոր արթնցաւ։ Ի՞նչ պատասխան առաւ։

## ԱՐԱԳԱԳՈՐԾՆ ՈՒ ԾՐԱԳԼՈՒԽԸ

«Ըսէ նայիմ, Քրիստինէ քոյրս, թաշկինակդ լմըննալու վրայ է, պոռաց Աննիկ, որու թեթեւ մատները կարծես թէ իր կարին վրայ կը թռթռէին։

«Զէ վայվե՛ր, պատասխանեց փոքրիկ հանդարտ Քրիստինէն՝ առանց աչքը վեր վերցնելու. հազիւ թէ մէկ կողմը լմնցի։

«Մէ՛կ կողմը, ըսաւ Աննիկ՝ այնպիսի ծիծաղով մը, որ ախորժելի չէր։ Հապա մէկտեղ սկսանք կարելու մեր թաշկինակները, և ես չորրորդ կողմը կարելու վրայ եմ։

«Գիտեմ որ ծանր եմ» հառաչեց Քրիստինէ։

«Միշտ այդպէս կ՚ըսես» պոռաց Աննիկ.

«Բայց պիտի ջանամ ժիր ըլլալ և ձեռքէս եկածն ընել» ըսաւ պզտիկ աղջիկը դէրձանին անցընելով, և իր կարը շարունակեց։



«Քանի որ այսպէս շուտ կը կարեմ, պոռաց Աննիկ, ստոյգ եմ որ ճաշի զանգակը չզարկած իմ թաշկինակս պիտի լմնցնեմ։ Ուստի կրնամ քիչ մը պարտէզն երթալ պտըտիլ և նայիլ թէ արդեօք վարդերը բացուե՞ր են. — այսպէս կարն աթոռին վրայ նետելով՝ Աննիկ թռաւ գնաց։

Քրիստինէ ալ կը փափաքէր թարմ օդ ծծել և ծաղիկները տեսնել, բայց կ՚ուզէր որ առաջ ձեռքի գործը լմնցնէ։ Գլուխը ծռեց և շարունակ կարելով իր թաշկինակին երկրորդ կողմն աւարտեց, քոյրը պարտէզէն չդարձած։

«Ա՛հ, դու ժրաջան պզտիկ աղջիկ, պոռաց Աննիկ, պարտէզէն դառնալով, միաքդ դիր որ ինծի չես կրնար հասնիլ։ Դեռ ժամանակ ունիմ, խուցս պիտի երթամ և նոր պատկերս պատէն պիտի կախեմ։»

Աննիկ ուրախ զուարթ նորէն դուրս ելաւ. Քրիստինէ իր կարը շարունակեց, իր թաշկինակին երրորդ կողմն ալ լմնցուցեր էր դեռ քոյրը սենեակը չմտած։

«Աւելի աղէկ չէ՞ ըլլար որ գործդ լմնցնես, քոյրիկ, ըսաւ Քրիստինէ։ Կէսօր մօտ է և ճաշի զանգակը պիտի զարնէ։

«Ո՛հ, փոյթ չէ, ես երկու վայրկենի մէջ կրնամ լմնցնել կարս. միայն կ՚ուզէի կարդալ եղբօրս ըսած պատմութիւնը, որ շատ զուարճալի է ըսաւ։»

Խեղճ Քրիստինէ ձայն չհանեց. անդադար ու հանդարտ ասեղը շարժեց ու շարժեց։ Իսկ Աննիկ այնքան պաշարուեր էր իր գիրքովը որ իր կարը բոլորովին մոռցաւ, և երբ զանգակը զարկին՝ այն ատեն սթափեցաւ։

«Արդեօք ճաշի ատե՞նն է» պոռաց Աննիկ։ «Ո՛հ, սիրելիս, իմ թաշկինակս դեռ չլմնցի. հապա քո՞ւկդ։

«Հիմա լմնցուցի խոս» ըսաւ Քրիստինէ, թաշկինակը կամաց կամաց ծալլելով։

«Ճիշտ այս ալ նախատուածս — կրնայիր առաջին դարձաւ» մտածեց ինքնիրեն Աննիկ, որ՝ թէև յանդուգն ու անպարկեշտ էր, բաւական խելք ունէր և այս բանս իրեն դաս մ'եղաւ։

Թէպէտև արագ շարժումը կրնայ առեն մ'առաջ երթալ, բայց հանդարտ ժրագլուխ աշխատողն վերջապէս կը յաջողի։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Երկու տղայ ի՞նչ գործ կ'ընէին։ Ո՞վ աւելի շուտ կը կարէր։ Ի՞նչ կարծեր ընել այն։ Քրիստինէ աւելի շուտ կը կարէր։ Ի՞նչ կարծեր ընել այն։ Աննիկ ժամանակ ունէր միւս գործ ըրաւ տղըը նստած։ Միւս գործ ըրաւ ինչ ըրաւ։ Երբ դարձաւ, Քրիստինէ միւս գործ ըրած էր։ Աննիկ գործի նստաւ։ Կարդալու ատենն ինչ ըրաւ։ Քրիստինէ գործն աւարտե՞ց էր։ Աննիկ ինչ մտածեց։

——

## ՏՈՒՆ ՄԸ

ՆԵՐՍԻ ԿՈՂՄԸ. — Տան մը ներսի դին ինչե՞ր կան. — Սենեակներ, սանդուղներ, անցքեր։

Ինչո՞ւ համար այս և այլ սենեակներ կան. — Վասն զի աղէկ չէ մեզի համար մի և նոյն սենեակը կերակուր եփել, ուտել և նստիլ։

Ի՞նչ կ'ըսուի այն սենեակն ուր կերակուր կ'եփի. — Խոհանոց։

Հանգստանալու սենեակները՞. — Ննջարան։

Ճաշակելու սենեակը՞. — Սեղանատուն։



Նստելու սենեակը՞. — Խօսարան։

Ո՞րն է ամէնէ լաւ սենեակը. — Սրահը։

Տան ներքեւ գտնուած սենեակներն ի՞նչ կ'ըսուին. — Մառաններ։

Ի՞նչ բանի կը գործածուին. — Գինի, եղ, փայտ, ածուխ պահելու։

Նոյն կարգին մէջ եղած սենեակներն ի՞նչ կ'ըսուին. — Դստիկոն։

Սենեկէ սենեակ ինչպէ՞ս կ'անցնին. — Դռնէ կամ անցքէ։

Դուրսէն վերնայարկն ինչո՞վ կ'ելլեն. — Սանդղով։

Ի՞նչ են սանդուղները. — Փայտէ կամ քարէ շինուած խումբ մը աստիճաններ։

Յատակն ինչէ՞ շինուած է. — Սովորաբար փայտով, որ տախտակի ձեւով կտրուած և իրարու կցուած են։

Խոհանոցի յատակն ինչէ՞ շինուած է. — Աղիւսով։

Սենեակի մը վերին մասն ի՞նչ կ'ըսուի. — Ձեղուն։

Սենեակի մը յատակն ինչո՞վ կը ծածկեն. — Օթոցով, որ բուրդէ կը շինուի։

Պատերն ինչո՞վ ծածկուած են. — Ծեփով, որ կիրի, աւազի ու մազի խառնուրդ մ'է։

Սովորաբար ծեփն ինչէ՞ վրայ կը դնեն. — Փայտէ բարակ շերտերու վրայ որ կցորդք կ'ըսուին։

Ծեփուած պատերը կը ծածկե՞ն. — Երբեմն կը գունեն նկարներով, երբեմն գունաւոր թղթերով։

Ցուրտէն ինչպէ՞ս կը պահուին սենեակները. — Փեղկերը գոցելով։

Գիշերն ինչո՞ւ կը գոցեն փեղկերը. — Հովէ, աղմուկէ ու ցուրտէ պահպանելու։

Գիշերն ինչպէ՞ս կը լուսաւորեն մեր տունը. — Ձէթով, մոմով, քարիւղով, կազով։

Ասոնցմէ ո՞րը չես կրնար տեսնել մինչև որ չվառուի. — Կազը։

Ինչո՞ւ համար. — Ինչու որ օդի նման մարմին մ'է։

Ինչո՞վ շինուած է. — Տեսակ մ'ածուխէ ելած շոգին է, որ երկաթէ տափերու մէջ կը տաքցնեն։

Ի՞նչպէս տունը կը բերեն. — Երկաթի խողովակով, որ հողին տակը կը դրուի։

Ուրիշ ի՞նչ կը բերուի տունը կապարէ խողովակով. — Ջուր։

---

## ԻՇԽԱՆՆ ՈՒ ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԸ

Առնոք իշխան մը կար որ երբեմն իր տէրութեան գլխաւոր բանտերը կը պտըտէր։

Օրին մէկը՝ բանտին բակը հինգ հատ կալանաւոր տեսաւ, որոց գատապարտեէն շղթայ անցուցեր էին, և աշխատելու կ'երթային։

Իշխանը հրամայեց որ քիչ մը կենան և ապա անոնց զատ զատ հարցուց թէ ի՞նչ պատճառաւ բանտ մտեր էին։

Առաջինն ըսաւ որ յանցանք մ'ըրած չէ, և թէ գլխաւոր վկան սուտ խօսեր էր իրեն դէմ։

Երկրորդն ըսաւ որ դատաւորն իրեն դէմ ոխ ունենալուն դատապարտուեր էր։

Երրորդն ըսաւ որ զինք սխալմամբ յանցաւոր դատեր են։

Չորրորդն ըսաւ որ զինքն ուրիշին տեղն առեր են։



Ուստի ամէնքն ալ աշխատեցին թագաւորն որ ներէ և զիրենք բանտէն հանէ։

Վերջը թագաւորը հինգերորդ մարդուն դարձաւ ու հարցուց. «Հապա դուն ինչու համար բանտ մտեր ես։»

«Ափսոս, պատասխանեց մարդը, քսակ մը գողցայ, և չեմ համարձակիր ձեզմէ ներողութիւն խնդրելու։»

«Ուրեմն, ըսաւ իշխանն, դու արժանի չես այսպիսի պատուաւոր մարդերու հետ բնակիլ, որ կ'ըսեն թէ բնաւ յանցանք մը չունին։»

Յետոյ՝ բանտապահին դառնալով ըսաւ.

«Այս մարդուն շղթաները քակէ և թող տուր որ աղատ երթայ։ Իր յանցանքին վրայ նոր յանցանք մի չաւելցուց սուտ խօսելով։»

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Իշխանը հինգ կալանաւորներն ո՞ւր տեսաւ։ Ի՞նչ հարցուց անոնց։ Առաջին մարդն ի՞նչ ըսաւ։ Երկրորդը՞։ Երրորդը՞։ Չորրորդը՞։ Ի՞նչ բան խնդրեցին անոնք։ Հինգերորդն ի՞նչ ըսաւ։ Իշխանն ի՞նչ պատասխանեց։ Բանտապահին ի՞նչ հրամայեց։ Ինչո՞ւ համար։

---

## ԱՌԻԻԾ

Առիւծը կը կոչուի «կենդանիներուն թագաւորը»։ Վայրենի ու յանդուգն է և շատ ուժեղ։

Մեծ առիւծները շատ հեռու, վայրի լեռներն ու Ափրիկէի դաշտերը կը բնակին։

Ասիայի մէջ ալ առիւծներ կը գտնուին, բայց Ափրիկէի առիւծներն աւելի զօրաւոր և մեծ են։

Ցորեկ ատեն շատ քիչ դուրս կ'ելնէ առիւծը. բայց երբոր արևը մարը մտնէ առիւծն իր քարայրը կը ձգէ և որսալու կ'երթայ։ Թեթև ոտքով յառաջ կ'անցնի և քալելու ատեն ձայն չհաներ։

Երբոր ամեն կողմը հանդարտ է, իր սոսկալի ձայնը կը լսուի. գիշերուան մէջ որոտումի պէս կը գոռայ։

Երբոր գիւղի մը մօտ է, շուները կ'ըսկսին հաչել. ձիերը, կովերն և ուղտերը սոսկալով կը փախչին ինչու որ կը ճանչնան առիւծին մռնչիւնը։ Մարդիկ իրենց բնակարանին չորս դին կրակ կը վառեն և ջահերը կ'օրօրեն որպէս զի այն ահարկու կենդանին վախցընեն։

Բայց առիւծին հոգը չէ։ Շիտակ արջառը գտնուած տեղը կ'երթայ և մէկ վայրկենի մէջ ձի մը կամ կով մ'իր ահռելի ճիրանին տակ կ'իյնայ։ Ասոր համար Ափրիկէի բնակիչներն իրենց հօտին ու արջառին մէկ մասն այսպէս կը կորսընցընեն։

Իրաւ է որ առիւծը իրիկուն չեղած իր քարայրէն չելլեր, բայց երբոր անօթի է ցորեկն ալ կը թափառի դաշտերը, ուր վայրի էշեր ու վիթեր շատ կը գտնուին։

Ասոնք հեռուէն կ'առնեն առիւծին հոտը, և երբոր անոր ձայնը կը լսեն, անապատին մէջ կայծակի պէս կը վազեն որ չբռնուին։

Այսպէս ահ ու դողի մէջ եղած ատեն ոմանք առիւծին պահուըտած տեղը կու գան։ Այն ատեն գետինը կը պառկի, իր աչքերը կը շողան, և մէկ անգամ ցատկելով որսին վրայ կ'իյնայ։

Առիւծն երկայն կարծր բաշ մ'ունի, և իր մորթը բաց դեղին է։



Մատակ առիւծն արուէն աւելի փոքր է և բաշ չունի։ Անապատին խորերը կը շինէ իր բնակարանը, և այն տեղ կ'ապրի իր կորիւններով։ Վա՜յ անոր որ մատակ առիւծին քարայրին քովէն կ'անցնի։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ի՞նչ կը կոչուի առիւծը։ Ի՞նչով երևելի է։ Ո՞ւր է մեծ առիւծի բնակարանը։ Ուրիշ ի՞նչ տեղեր կը գտնուի առիւծը։ Ե՞րբ որսալու կ'ելնէ։ Ի՞նչպէս միւս կենդանիները կը սոսկան։ Մարդիկ ի՞նչ կ'ընեն առիւծը հալածելու համար։ Ինչո՞ւ համար երբեմն ցորեկ ատեն դուրս կ'ելնէ։ Ո՞ր կենդանիներու վրայ կը յարձակի։ Ի՞նչպէս կը քալէ։ Մատակ առիւծն արուէն ի՞նչ բանով կը տարբերի։

---

ՎԱԳՐ

Հնդկաստանի մէջ ընդարձակ անտառներ կան խոտերով ու մացառներով լեցուն։ Վագրն անոնց մէջ կը հաստատէ իր որջը։ Գիշեր ցերեկ իր որսը բռնելու պատրաստ կը գտնուի։

Վագրին մորթը գեղեցիկ սև շերտերով ծածկուած է։

Թէև շատ աղուոր է վագրն իր շերտաւոր մորթով, բայց ուրիշ կենդանիներուն մէջ ամենէն կատաղին ու վտանգաւորն է։ Մարդիկ անորմէ աւելի կը վախնան քան թէ առիւծէն։ Առիւծը գոհ կ'ըլլայ երբոր կշտանայ, բայց վագրն անկուշտ է։ Ամեն հանդիպած կենդանիները կ'ըսպաննէ և շատ անգամ ահռելի կոտորած կ'ընէ։

Վագրը կամացուկ մ'անտառին մէջ կը սահի այն-

պէս որ անշշուկ իր որսին կը մօտենայ ։ Այն ատեն արագ ոստումով մ'իր որսին վրայ կ'իյնայ և զայն գետին կը տապալէ ։

Վագրը ձիուն պէս չվազեր, այլ ոստումներ կ'ընէ ամենէ արագընթաց ձիէն շուտ ։

Երբոր բանակ մ'անտառին մօտ գտնուի, մարդիկ միշտ արթուն կը հսկեն, վասն զի վագրն երբեմն անոնց վրայ կը յարձակի ։ Երբեմն մարդ յափշտակելով տարած է, և չեն կրցած ազատել ։

Վագրը շատ լաւ կը լողայ ։ Երբոր որսորդներու հանդիպի և գետի մօտ գտնուի՝ իսկոյն անոր մէջ կը նետուի և՝ անվախ լողալով՝ միւս եզրը կը հասնի ։ Այս կերպով շատ անգամ որսորդներուն ձեռքէն կ'ազատի ։ Հնդկաստանի մէջ վագրը կ'որսան փիղերով և շուներով ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Ո՞ւր կը բնակի վագրը ։ Ի՞նչ տարբերութիւն կայ վագրին ու առիւծին մէջ ։ Վագրին մորթին գոյնն ի՞նչ է ։ Ինչո՞ւ համար մարդիկ վագրէն աւելի կը վախնան քան թէ առիւծէն ։ Ի՞նչպէս կը բռնէ իր որսը ։ Մարդու վրայ կը յարձակի՞ ։ Որսորդին ձեռքէն ի՞նչպէս կ'ազատի երբեմն ։ Ի՞նչպէս կ'որսան զայն ։

---

## ԻՆՁ

Ինձը, որ կատուի ցեղէն է, խիստ գեղեցիկ կենդանի մ'է ։ Թէ Ասիա կը գտնուի և թէ Ափրիկէ ։ Վագրէն չափ մեծ չէ, բայց աւելի շնորհալի ձև ունի և իր դեղին մորթը սև բիծերով ծածկուած է ։



Հնդկաստանի մէջ ինձը ծառի վագր կը կոչուի, ինչու որ կատուի պէս ծառէն վեր կրնայ ելլել և թուփէ թուփ մագլիլ ։ Այսպէս անտառին մէջ շատ կենդանիներ կը բռնէ, որոց չեն կրնար հասնիլ վագրն ու առիւծը ։

Երբոր որսորդը ինձի մ'ետևէն իյնայ, ինձը թուփերու մէջ կը պահուըտի, բայց շուները խոտերուն մէջէն վազելով զայն կը գտնեն և դուրս կը հանեն ։ Երբոր իր պատսպարուած տեղէն դուրս կ'ելնէ, կը ջանայ փախչիլ ծառէն վեր ելնելով ։

Այն տեղ շուներէն ապահով է, բայց որսորդին հրացանէն ազատ չէ ։ Որսորդն ալ շատ չմօտենար ինձին վախնալով որ իր վրայ չյարձակի, հապա հեռու կը կենայ և հրացանով նշան կ'առնէ ։

Երբեմն շուտ մը կը զարնուի և կը մեռնի, բայց թէ որ մինակ վիրաւորուի, որսորդին վրայ կը ցատկէ և շատ անգամ իր ակռաներովն ու ճիրաններովը կ'ըսպաննէ ։

Ինձն ալ աղուէսին պէս վառեակները կը սիրէ և գիշերներն հաւնոցներու բոլորտիքը կը պտըտի ։

Երբեմն ինձը կ'ընտանեցընեն և երբ ընտելանայ շատ զուարճալի է ։ Ինձու կորիւնները սիրուն, շնորհալի են և պզտիկ կատուներու պէս իրարու հետ կը խաղան ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — Կենդանիներու ո՞ր ցեղէն է ինձը ։ Ո՞ւր կը գտնուի ։ Մորթն ինչո՞վ ծածկուած է ։ Ի՞նչ կը կոչեն զայն Հնդկաստանի մէջ ։ Ինչո՞ւ ։ Ի՞նչ կ'ընէ ինձ մ'երբոր որսորդ կը տեսնէ ։ Թուփերէն վռնտուելէն ետև ի՞նչպէս կ'ապաստանի ։ Ի՞նչ կ'ընէ երբեմն ։

# ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

## ՄԱՍՆ Բ.

### ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍ

1. Պզտիկ տղայ եմ, հետաքրքիր եմ, չորս դիս կը նայիմ, շատ բաներ կը տեսնեմ, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ են։

2. Ահա գլխուս վրայ կայ երկինքը, ոտքիս տակը հողը։ Կան բաներ որ կեանք չունին, չեն շարժիր եւ ուր որ են անդ կը կենան. կը տեսնեմ բաներ ալ որ կեանք ունին եւ կրնան մէկ տեղէ ուրիշ տեղ շարժիլ։

3. Ասոնք զարմանալի կ'երեւին ինծի. դեռ աշակերտ եմ, կ'ուզեմ սորվիլ, կ'ուզեմ մտիկ ընել ծնողքիս եւ վարժապետիս տալիք դասերը։

### ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

4. Մեր տեսած ամեն բաները առարկայ կ'ըսուին։ Երեք տեսակ առարկաներ կան։ Առաջին տեսակները կեանք ունին եւ ամեն կողմը կրնան քալել երթալ ուզեն. ասոնք կենդանիներ կ'ըսուին. երկրորդ տեսակներն անոնք են որ հողին վրայ կը բուսնին — այսինքն ծաղիկները, խոտերը եւ ծառերը — ասոնք բոյսեր կ'ըսուին.



երրորդ տեսակէն են կենդանութիւն, շունչ չունեցող բաները — ինչպէս երկինք, երկիր, քարեր, ջուր, տուներ, կարասի, հագուստ եւ ուրիշ շատ բաներ — ասոնք ալ անկենդան առարկաներ կ'ըսուին եւ իրենց դրուած տեղէն չեն կրնար շարժիլ։

5. Աստուած ստեղծած է ամեն բան, թէ կենդանի թէ անկենդան արարածները։ Նա ըրաւ արեւը, լուսինը, աստղերը, մեր բնակած երկիրը կամ աշխարհը, ծովը, խոտերն ու ծառերը եւ բոլոր կենդանիներն որ երկրի վրայ կ'ապրին, օդին մէջ կը թռչին, կամ ջրի մէջ կը լողան։ Ասոր համար Աստուած ԱՐԱՐԻՉ կ'ըսուի, այսինքն ամեն բան ընող։

6. Աստուած անտեսանելի է. թէեւ չտեսնուիր, բայց ամեն տեղ է. ինք ամեն բան գիտէ ու կը տեսնէ։ Նոյնպէս Աստուած բարի ու արդար է, ամեն կենդանի արարածներուն սնունդ ու օդ կուտայ։ Մեր պարտքն է սիրել զԱստուած եւ մեզի ըրած բարիքին համար միշտ շնորհակալ ըլլալ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Դուն ի՞նչ ես. ի՞նչ չես գիտեր։ 2. Ի՞նչ կը տեսնես քու չորս դիդ։ 3. Տեսածդ կը հասկնա՞ս։ 4. Քանի՞ տեսակ առարկայ կայ։ 5. Ո՞վ ըրած է բոլոր արարածները։ 6. Կը տեսնե՞ս Աստուածը։

---

### ԿԵՆԴԱՆԻՔ

1. Ամեն ապրող արարած կենդանի կ'ըսուի։ Կենդանիները կ'ապրին շունչ առնելով ու կերակուր ուտե-

ըով։ Կերակուրն իրենց մնունդ կուտայ․ եթէ մնունդ չգտնեն անօթութենէ կը մեռնին։ Կան շատ կենդանիներ որ զգայարանք ունին, այսինքն կը տեսնեն, կը լսեն, կը հոտոտան, կը ճաշակեն և կը շօշափեն։

2. Պէպէկն ալ աչք ունի բայց չկրնար տեսնել․ զգայարանք չունի, ինչու որ անկենդան առարկայ է։ Աստուած տուած է կեանքը կենդանիներուն։ Մարդ մը կրնայ դէմքով ու աչքով պէպէկ շինել, կրնայ հագուեցընել, բայց անոր կեանք չկրնար տալ։ Միշտ անկենդան առարկայ մը կը մնայ, ոչ կ'ըզգայ և ոչ կը շարժի։

3. Շատ տեսակ կենդանիներ կան, մեծը կայ, պզտիկը կայ երկրիս ամեն կողմը․ ոմանք հողի վրայ կ'ապրին, ոմանք ջրի մէջ։ Կենդանեաց գլուխն է մարդ։

4. Անասունները մազէ, բուրդէ կամ մուշտակէ մորթով ծածկուած են և հողին վրայ կը քալեն չորս ոտքով․ ինչպէս ձին, կովը, շունը, ոչխարը, կատուն և ուրիշ շատ տեսակներ այս կարգէն են։ Չորքոտանի կ'ըսուին այն անասուններն որ չորս ոտք ունին։ Կան անասուններ որ մինակ մէկ սմբակով ոտք ունին, ձիուն պէս․ կան ուրիշ կենդանիներ ալ որ երկուքի ճեղքուած սմբակ ունին, ինչպէս կովը, ոչխարը, խոզը, եղջերուն․ ուրիշ կենդանիներ ալ կան որ մինակ մէկ բթամատ և ճիրաններ ունին, շան պէս, կատուին պէս, առիւծին և արջին պէս։ Մարդիկ կով ու ոչխար կը մորթեն ուտելու համար․ անոնց մորթէն կաշի և մուճակ կը շինուին։ Կովին ու ոչխարին բուրդը կը գզեն և դերձանի պէս կ'ոլորեն և այս դերձանով ընտիր հագուստներ կը հիւսեն։

5. Թռչուններն պզտիկ սիրուն կենդանիներ են։ Փե-



տուրներ ու թևեր ունին որով օդին մէջ կը թռին և շատ հեռու տեղեր կ'երթան առանց յոգնելու։ Թռչուններն ալ ունին երկու սրունք ու ոտքեր, որով կրնան հողի վրայ քալել կամ ծառերու ոստերուն վրայ թառիլ։ Կան թռչուններ որ շատ պզտիկ են, ինչպէս ճնճղուկն ու սարեկիկը, կարմրալանջն ու ցախսարեկը, որ մամուռէ և ուրիշ բաներէ պզտիկ կոկիկ բոյներ կը շինեն ծառերու ու թուփերու վրայ։ Աղաւնին, ագռաւն ու որին մեծ տեսակ թռչուններ են, նոյնպէս հաւերն որ տուներու մէջ կը գտնուին և սերմեր կը հաւաքեն կ'ուտեն։ Սագեր, բադեր ու կարապներն ալ թռչուններ են որ ջուրի մէջ կը լողան և երկու մաշկապատ ոտք ունին, որով կը շարժին լողալու ատեն։ Ամեն թռչուն հաւկիթ կ'ածէ իր բոյնին մէջ․ երբոր ատեն մ'անոնց վրայ նստի ու տաքցընէ ձագուկներ կ'ելնեն․ ասոր կ'ըսեն թխսել։

6. Ձուկերն ալ ջուրի մէջ ապրող կենդանիներ են։ Շատեր կան որ կաշի ունին փայլուն թեփերով․ նոյնպէս ունին լուղակներ որով ջուրին վրայ կը կենան։ Ձուկերը կրնան շատ շուտ լողալ և իրենց որսին վրայ կը վազեն։ Քանի մը ձուկեր խիստ մեծ են, մարդէն շատ աւելի մեծ․ բայց ուրիշներ ալ պզտիկ են, ինչպէս տառեխներն և անձրուկները, որոնք թէ ծովու և թէ գետի մէջ խումբ խումբ կը լողան։

7. Ուրիշ կարգ կենդանիներ ալ կան որ սողուն կը կոչուին, բայց մեր երկիրները շատ չեն տեսնուիր։ Սողուններն, ինչպէս օձերն ու իժերը, յստակ փայլուն կաշի ունին, ձուկերուն պէս, և մեծ խոտերու ու ճահիճներու մէջ կը սողան։ Քանի մը սողուններ, ինչպէս գորտն ու քարաթոշը, ոտքեր ունին, որով կրնան

քալել կամ ցատկել։ Գորտերը սիրուն սողուններ են, որ կը ցատկրտեն և շատ անգամ մարգերու կամ լճակներու մօտ կը գտնուին։

8. **Միջատներն** ուրիշ կարգ կենդանիներ են որ ամեն տեղ կը գտնուին։ Ճանճեր, մժղուկներ, մեղուներ և թիթեռնիկները միջատներ են որ ամառ օրեր ասդին անդին կը թռչտին և երբեմն ոմանք մեզի շատ նեղութիւն կը պատճառեն։

9. Այս կարգի կենդանիներէն զատ՝ ուրիշ այնպիսի պզտիկ կենդանիներու տեսակներ ալ կան որ աչքով չեն տեսնուիր, բայց գոյութիւն ունին և իրենց բնութեան համեմատ կ'ապրին ջուրի կամ ուրիշ նիւթերու մէջ. ասոնք կ'ըսուին **կենդանիկներ**, որ միայն գործիքով մը կրնան տեսնուիլ և այս գործիքն ալ կ'ըսուի **մանրացոյց**։ Բոլոր երկիրը մեծ ու պզտիկ կենդանի արարածներով կը վխտան. չգիտենք թէ շատերն ինչ բանի օգուտ ունին։ Մեծ մասը խոտ, բոյս, տերև, սերմ և պտուղ ուտելով կ'ապրին, ոմանք կ'ապրին պզտիկ կենդանիներ սպաննելով և ուտելով։ Պզտիկ դաս մը կենդանիներ կան որ մարդու խնամքով կ'ապրին, ինչպէս են, ձին, կովը, խոզը, էշը, շունը և կատուն։ Ասոնք **ընտանի կենդանիներ** կը կոչուին և մեզի շատ օգտակար են։ Չորս ոտքով կենդանիները **չորքոտանի** կը կոչուին։ Թռչուն մը չորքոտանի չէ, ուստի **երկոտանի** կ'ըսուի։*

*Այս դասերը տալու ատեն դասատուն պէտք է որ կենդանիներու պատկերներ ցոյց տայ աշակերտներուն և անոնց գլխաւոր յատկութիւնները համառօտ բացատրէ։



ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ է կենդանի. ի՞նչպէս կ'ապրին։ 2. Մարդս կրնա՞յ կեանք տալ ուտելիքի մը։ 3. Ո՞ւր կ'ապրին կենդանիները. մարդն ի՞նչ է։ 4. Ի՞նչ տեսակ անասուններ կան. որո՞նք օգտակար են մարդուս։ 5. Ի՞նչ են թռչունները. ըսէ մէկ քանի մեծ և մէկ քանի պզտիկ թռչուններ. ի՞նչ է թխսել։ 6. Ի՞նչ են ձուկերը. ի՞նչ ունին։ 7. Սողուններն ի՞նչ են. բոլորն ալ կը սողա՞ն։ 8. Ո՞ր կենդանիները միջատ կ'ըսուին. օգտակա՞ր են ամենքը։ 9. Կենդանիկներն ի՞նչ են. աչքով կ'երևի՞ն. ամփոփաբար ի՞նչ ուտելով կ'ապրին կենդանիները։

---

## ՄԱՐԴԻԿ

1. Մարդը կենդանիներուն մէջ ամենէն ընտիր և բարձր տեսակն է, իր զօրութեան և ճարտարութեան կողմէ։ Եթէ աշխարհի վրայ բնակող բոլոր մարդիկը մէկտեղ առնենք **մարդկային ազգ** կը կոչենք։ Հայր մ'ու մայր մը իրենց զաւակներով **ընտանիք** կը կազմեն։ Շատ մ'ազգակից ընտանիքներ մէկտեղ գալով ցեղ կը շինեն, ցեղերն ալ **ժողովուրդ** և ազգ։ Մարդիկ **բանաւոր** արարածներ են, կը խորհին, կը խօսին, կարող են ամեն անասուններու վրայ իշխել։ Չեն քալեր անոնց պէս, այլ երկու ոտքի վրայ կը կենան, թևեր, ձեռքեր ու մատներ ունին, որով կրնան գործել ու աշխատիլ։ Թաւուտ կամ մուշտակի մորթ չունին։ Մերկ է իրենց կաշին և ծածկուելու համար հագուստի կարօտ են։ Բայց կարող են իրենց ձեռքով զգեստ շինել և **գործիքներ** գործածել, որով տուներ, կարասիներ և ուրիշ շատ

օգտակար բաներ կը շինեն ։ Նոյնպէս իրենց կերակուրն եփելու և ցուրտ ժամանակ տաքնալու համար կրակ կրնան վառել ։

2. Մարդիկ առանձին ապրիլ չեն սիրեր ։ Ընտանեօք կ'ապրին կամ ուրիշ ազգականներով, նոյնպէս կ'ուզեն որ դրացիներ ունենան ։ Կան մարդիկ որ դաշտերը կը բնակին խրճիթներու մէջ. բայց շատ մարդիկ գիւղերն ու քաղաքները կը բնակին ։ Գիւղը քիչ տուներ ունեցող տեղ է. քաղաքն աւելի շատ տուներ կան և երկար փողոցներ ։ Այն քաղաքն ուր Թագաւորը կը նստի կամ կառավարութիւնը կը գտնուի՝ մայրաքաղաք կ'ըսուի ։ Կոստանդնուպօլիս Թուրքիայի մայրաքաղաքն է, որ Պոսփորի եզերքը շինուած է ։ Թագաւորի մը կամ իշխանի մը տունը պալատ կ'ըսուի ։

3. Մարդիկ գիւղերու և քաղաքներու մէջ կը բնակին որ իրարու օգնեն, խօսակցին ու տեսնուին ։ Այսպէս մէկտեղ ապրիլն ընկերական ըլլալ կամ ընկերաբար ապրիլ է ։ Նոյն երկրին մէջ բնակող բոլոր մարդիկ՝ այն երկրին բնակիչները կ'ըսուին և ազգ մը կը կազմեն ։ Աշխարհիս մէջ շատ երկիրներ ու ազգեր կան ։

4. Ամեն մարդ երկու անուն ունի, մէկն իր առաջին անունն է, միւսն իր մականունը ։ Աւազանի անունը՝ որ առաջ կը դրուի, մկրտութեան ատեն կ'ընդունի, իսկ մականունը բոլոր ընտանիքին կամ ցեղին վերաբերող անունն է ։ Երբոր կ'ըսենք, Յովհաննէս Աբգարեան, առաջինն աւազանի՝ երկրորդն ընտանիքի անունն է ։

5. Նոյնպէս ամեն ժողովուրդ ազգային անուն մ'ունի, որով ուրիշ ազգէ կը տարբերի ։ Այս ազգային անունը կ'առնենք այն տեղէն ուր ծնած ենք ։ Եթէ



Հայաստանի մէջ ծնէինք, Հայաստանցի պիտի ըսուէինք. եթէ Պոլսի մէջ՝ Պոլսեցի. եթէ Իզմիրի մէջ՝ Իզմիրցի ։ Հայազգի անունն ընդհանուր անուն մ'է որ մեր ազգին հիմնադրին անունէն առած ենք ։

6. Կան ժողովուրդներ որ ճերմակ մորթ ունին, կապոյտ կամ սև աչեր, և դեղին կամ խարտեաշ կամ սև մազեր ։ Կան ժողովուրդներ ալ որ սև մորթ, սև մազ և սև աչեր ունին ։ Բայց բոլորն ալ մարդ են և նոյն կազմուածքն ունին. փոյթ չէ թէ իրենց մորթը ճերմակ կամ սև ու դրսի տեսքը տարբեր ըլլայ ։ Պէտք չէ բնաւ ատել կամ նախատել այն անձերն որ մեր գոյնը չունին կամ տգեղ կերպարանք ունին, այլ պէտք է մարդասիրութեամբ վարուիլ ամենուն հետ ։

7. Մեր մէկ ձեռքը աջ կ'ըսուի, միւսը ձախ ։ Ամեն տղայ ու աղջիկ գիտէ թէ ո՛րն է իր աջ ձեռքը ։ Այն ձեռքն է որով խաչ կը հանենք, ուրիշի ձեռքը կը թօթուենք, կը գրենք և ձախ ձեռքէն աւելի շատ կը գործածենք ։ Նոյնպէս մէկ աջ ու մէկ ձախ ոտք ունինք, մէկ աջ ու մէկ ձախ աչք, աջ ու ձախ կողմ ։ Մեր ձախ կողմն այն է որու վրայ կ'զգանք մեր սրտին զարնելը ։ Ամեն մարդ գիտէ թէ ինչ է ուրիշի մը աջ կամ ձախ կողմը կենալը ։

8. Կենդանիները կը հանգչին ու կը քնանան երբոր յոգնած են ։ Երբոր քնանան կը պառկին ու աչերը կը գոցեն և քնանալու ատեն հանգիստ կը վայելեն ։ Սակայն՝ կան կենդանիներ, ինչպէս ձին, և ուրիշ շատ տեսակ թռչուններ, որ ոտքի վրայ կը քնանան, և ոմանք ալ, ինչպէս նապաստակը, բաց աչքով կը քնանան ։ Քնանալու յարմար ժամանակը գիշերն է, երբոր կը մթնայ ։ Երբեմն քնանալու ատեն կ'երազենք. բայց

երազները սնոտի և աննշան բաներ են որ մտքէ կ'անցնին։ Երբոր կենդանիները չեն քնանար, կ'ըսենք որ արթուն են։

9. Ամեն կենդանի, մարդէն զատ՝ հում կ'ուտէ իր կերակուրը։ Կովն ու ոչխարը դաշտին վրայ կ'արածին խոտով, և գիշակեր անասուններն են որ իրենց սպաննած կենդանիներուն միսն անմիջապէս կ'ուտեն։ Նոյնպէս թռչունները՝ թռելու ատեն՝ մանր ճճիներ կը բռնեն կը կլլեն։ Մարդիկ թարմ բոյսերով կամ հում միսով չեն կրնար ապրիլ։ Մինակ հասուն պտուղներ կամ հասած բոյսեր կ'ուտեն, առանց փափկելու։ Իսկ իրենց սովորական կերակուրը կը պատրաստեն, կ'եփեն և կ'ուտեն, երբոր իրենց ճաշակին յարմար է և սննդաբար։ Մարդիկ կ'ուտեն եփելով կովու միս, հորթու միս, ոչխարի միս, խոզի միս, նապաստակի, ճագարի, սագի, հնդկահաւի, վառեկի, աղաւնիի միս և ուրիշ ցամաքի կենդանիներու միս։ Նոյնպէս մարդ կ'եփէ ու կ'ուտէ ձուկ։ Մեր գլխաւոր սնունդը հաց է, որ ցորենի ալիւրէ շինուած է։

10. Երբոր կենդանիներն աշէկ են և ասդին անդին շրջելով կ'ուտեն ու կը խմեն, կ'ըսենք որ առողջ են։ Երբեմն այնքան տկար կ'ըլլան որ չեն կրնար ճաշել, կամ սովորական կերակուրն ուտել, այն ատեն վատառողջ են։ Մարդիկ շատ դիւրաւ անհանգիստ կ'ըլլան, այլ և այլ ցաւեր կ'ունենան և կը հիւանդանան։ Այն ատեն բժիշկները կ'աշխատին հիւանդները բուժել, պատուիրելով որ իրենց ուտելիքը փոխեն, կրթութիւն ընեն կամ դեղեր առնեն։ Պէտք չէ դեղը մերժել՝ երբ որ հիւանդ ենք, վասն զի բժշկուելու մէկ միջոցն ալ դեղն է։



11. Ամենէ սովորական հիւանդութիւններն են ջերմերը՝ որ շատ անգամ մահ կը պատճառեն։ Ստէպ ջերմը ցուրտէ յառաջ կու գայ։ Երբեմն անոնք որ ցուրտ առած են գէշ կը հազան։ Երբոր հովի առջև կը նստինք քրտնած՝ հարբուխ կ'ըլլանք, նոյնպէս երբոր թրջած հագուստ կամ խոնաւ մուճակներ հագած ենք։ Պէտք է զգուշանալ այս բաներէն։ Ջերմ և ուրիշ հիւանդութիւններ շատ անգամ մեր վրայ կու գան երբոր կը նստինք սենեկի մը մէջ որու օդն ապականած է։ Միշտ պէտք է մաքուր օդ ծծել և կարելի եղածին չափ արև ունենալ, առողջութեան համար։ Յօդացաւն՝ որ շատ նեղութիւն կու տայ մարդու, և երբեմն սրունքը կը կարկամէ, հողէ յատակ ունեցող խոնաւ տուներ բնակելէն յառաջ կու գայ։ Խոնաւութիւն, անմաքրութիւն և գէշ օդն մեր առողջութեան երեք գլխաւոր թշնամիներն են։

12. Կենդանիներ կան որ երկար ժամանակ կ'ապրին, կան այնպիսիներ ալ որ քիչ ժամանակ կ'ապրին։ Շուները մինչև տասն չորս տասն հինգ տարի կ'ապրին, և կան ձիեր ալ որ քսան տարի կեանք ունին։ Իսկ պզտիկ թռչունները միայն քանի մը տարի կ'ապրին, և շատ միջատներ ալ միայն մէկ տարի։ Մէկ քանի միջատներ միայն ժամ մը կ'ապրին։ Փոքրիկ ճճիներ արևուն մէջ քիչ մ'ատեն կը թռթռին և ապա գետինը կ'իյնան կը կորսուին։

13. Ամեն կենդանի արու կամ էգ է, և իրենց պէս ձագեր ունին։ Այս ձագերը կը մեծնան, կը ծերանան և իրենց ձագուկները կարգաւ կը թողուն։ Ասոր կ'ըսեն սերունդէ սերունդ ապրիլ։ Մարդիկ շատ կենդանիներէ աւելի կ'ապրին։ Կան այր ու կին որ մինչև ութսուն տարի կ'ապրին, բայց շատեր ալ մանկութեան ատեն

կը մեռնին հիւանդութենէ ։ Երբ կեանքը դադրի՝ մարմինն անկենդան առարկայ մը կը դառնայ ։

14. Մարդիկ բանաւոր արարածներ կ'ըսուին, ինչու որ խելք ունին որով իրենց տեսածն ու ըրածը կը դատեն ։ Ստորին կարգի կենդանիները չեն կարող մարդու պէս մտածել, խօսիլ ։ Բնազդմամբ հետեւելով կ'ընեն ամէն բան, և բնազդն ալ տեսակ մ'անմշակ խելք է ։

15. Մարդիկ ալ մանկութեան ժամանակ տգէտ են, վասն զի շատ բաներու նշանակութիւնը չգիտեն ։ Չգիտեն թէ որչափ մեծ է աշխարհը և ինչ ձև ունի ։ Տղաք կը կարծեն թէ երկիրը սեղանի պէս տափակ է, բայց պիտի սորվին որ գնդակի պէս կլոր է, ինչպէս որ ուրիշ շատ օգտակար բաներ սորվելու են եթէ միշտ դպրոց գան, աշխատին և դասատուին ըսածները ուշադրութեամբ մտիկ ընեն ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մարդ կենդանի՞ է. ինչ տարբերութիւն ունի միւս կենդանիներէն. ինչ է ընտանիք, ցեղ, ժողովուրդ. մարդիկ բնակա՞ն թէ արուեստական հագուստ ունին. ինչու կը շինեն ։ 2. Ո՞ւր կը բնակին մարդիկ. ինչ տարբերութիւն ունին ։ 3. Մարդիկ կրնա՞ն միշտ ապրիլ. ինչո՞ւ ։ 4. Ի՞նչ է անուն. ինչ մականուն ։ 5. Աչք մ'ուրիշ աչքէ ինչո՞վ կ'որոշուի ։ 6. Ամէն մարդիկ նոյն գոյնն ունին ու նոյն կերպարանքը ։ 7. Ի՞նչ է աջ ու ձախ ։ 8. Ամէն կենդանի պառկա՞ծ կը մնայ. ինչ է երազ տեսնել ։ 9. Ամէն կենդանի նոյն տեսակ կերակո՞ւրը կ'ուտէ. ինչ է մարդու կերակուրը ։ 10. Ի՞նչ է առողջութիւն. ինչ պաշտօն ունին բժիշկները ։ 11. Ի՞նչ են առօրեական հիւանդութիւնները. ինչէ՞ յառաջ կու գան. ինչ պէտք է ընել առողջ մնալու համար. ասոնցմէ կու գայ յօդացաւը ։ 12. Կենդանիները որչա՞փ կ'ապրին. մէկ քանի կենդանիներու տարիքն ըսէ ։ 13. Ի՞նչ է



ծերանալ. ամէն ժամանակ կ'ապրի՞. ինչ է մեռնիլը. ինչ կ'ըլլայ մարմինը ։ 14. Կենդանիները կը մտածե՞ն. որը բանաւոր կ'ըսուի. ինչ է բնազդը ։ 15. Մարդիկ գիտո՞ւն կը ծնին. ինչ պէտք է ընել բան սորվելու համար ։

---

## ԴԱՇՏ — ՄՇԱԿՈՒԹԻՒՆ — ԲՈՅՍ

1. Երբոր ամառը դաշտերը կը պտըտիմ, շատ աղուոր ու ախորժելի բաներ կը տեսնեմ ։ Մարգերուն վրայ թարմ խոտեր կը տեսնեմ, որ գարնան ծաղիկներու և մարգարիտներու հետ խառնուած են. կովերն անոնց վրայ կ'արածին ։ Կը տեսնեմ մեծ ծառեր ու թուփեր որ ծածկուած են տերեւներով. կը լսեմ թռչուններուն զուարթ երգերը. ոստերուն վրայ կը թռթռին կամ իրենց պզտիկ բոյներուն մէջ կեցած կը ճռուողեն ։ Նոյնպէս կը տեսնեմ արեւն որ փառաւոր կերպով կը փայլի և ամէն բանի լոյս ու տաքութիւն կու տայ ։ Կարելի է որ ոչխարներու հօտեր ալ տեսնեմ որ անուշ դալարիին վրայ կը ճարակին, իրենց գառնուկները չորս կողմը կը ցատկռտեն, և հովիւներն ալ իրենց շուներով անոնց վրայ կը հսկեն որպէս զի չկորսուին ։

2. Բայց ասկից զատ՝ դեռ շատ բաներ կան դաշտերը, ինչպէս դաշտամկներ և բզէզներ ։ Կան նաև ջուրի առուակներ, գետակներ՝ որ հովտին մէջէն կը հոսին ։ Մէկ քանի խորունկ տեղեր լճեր կը գտնուին որ ջուրի ընդարձակ աւազաններ են. ուրիշ տեղեր ալ կը

անմտուլին ծաղիկներ ու մորիներ, որ պզտիկ ջրշեղջներ ունին։ Մէկ քանի բարձր բլուրներ որ դաշտին վրայ կը տեսնուին լեռ կ'ըսուին։ Բլրակներուն և լեռներուն մէջ ձորեր կան։

3. Ագարակներէն և գիւղերէն կուգան մեր կերած շատ մը բաներ։ Նախ՝ դաշտերը կը հերկեն ու ակօսներ կը բանան հողագործները սուր մը մեքենայով որ խոփ կ'ըսուի։ Այս խոփը կը քաշեն եզներ կամ ձիեր, առօրէն կապուելով։ Քովէն կը քալէ մշակ, որու աշխատանքը շատ առողջարար ու զուարճալի է, ինչու որ մշակը բոլոր օրը թարմ օդ կը ծծէ և երբեմն այնքան զուարթ կ'ըլլայ որ դաշտին վրայ արօրը քշելու ատեն կ'երգէ կամ կը սուլէ։

4. Երբոր դաշտերը հերկուին, ուրիշ մարդ մը որ սերմնացան կ'ըսուի՝ շատ մը ցորեն կ'առնէ և կ'ըսկսի ցանել ակօսներուն մէջ իր ձեռքովը։ Ասոր կ'ըսեն սերմ-ցան ընել, և երբոր այս գործը կը լմննայ ուրիշ մարդ մը կուգայ տափանով մը, որ վարի կողմը երկաթէ ակռաներ ունեցող տափակ գործիք մ'է, և զայն ձիու մը կապելով կը քշէ դաշտին վրայ, որպէս զի ակօսները գոցէ և սերմը ծածկէ հողին տակ։

5. Այսպէս սերմը հողին տակ գոցուելէն ետև՝ անձրև կը վաղի, սերմը կը թրջէ և հողը զայն ճնշելով կը թուլցընէ։ Ցետոյ սերմը կ'ընձիւղի։ Նախ ամեն մէկ սերմ պզտիկ ծիլ մ'ունի, բայց արևուն ջերմութենէ ընձիւղը կը մեծնայ և կանաչ ցօղունի ձևով կը բուսնի։ Այս ատեն կ'աճի, կատարը ցորենի հասկ մը կ'ունենայ, որ արևէն կը հասուննայ և կը դեղնի։ Երբ որ կտրելու ժամանակը գայ ցորենը կը հնձեն մանգաղով։ Գարնան ժամանակ ցորենը կը ցանեն, որ ամառը կ'աճի,



երբոր արևը շատ տաք է, իսկ աշնան կը հնձեն։ Աշնան՝ ծառերուն տերևներն ալ կ'սկսին թափիլ, և ձմեռն այնքան ցուրտ է որ շատ բան չբուսնիր։ Ձմեռը ձիւն կը վաղի և հողը կը ծածկէ ու չթողուր որ սառի։

6. Աշնան մէջ հունձքի օրերն ախորժելի ու երջանիկ օրեր են։ Հնձողները դաշտերը կ'ելնեն ցորենը կտրելու։ Ո՛րչափ գործունեայ և զուարթ են. իրենց մանգաղովը կը ծռին և հասկերը կը կտրեն. ետևէն մարդ մը կուգայ և որաները կը կապէ։ Այս տրցակներն ետքէն սայլերու վրայ կը դնեն և ագարակին կալերուն կը տանին։

7. Գարին, վարսակը և հաճարը ցորենի տեսակէն են և նոյն կերպով կը հնձուին։ Երբոր ցորենը կալո-րայն կը տանին զայն կը ծեծեն որ խարը ցորենէն զատուի։ Վերջը ցորենը կ'առնեն աղօրին կը տանին որ ալիւր ընեն. ալիւրէն ալ հաց կը շինեն ուտելու համար։

8. Ցորենէն զատ՝ ուրիշ շատ բաներ կը բուսնին դաշտերն և մարդուն օգտակար են։ Ինչպէս գետնախնձոր, որ կարգաւ կը տնկեն արտերուն մէջ և երբոր մեծնան դեռաբոյս գետնախնձորներն արմատէն կը հանեն. ոլոռ ու բակլայ և ուրիշ ընդեղէն արտերու ու պարտէզներու մէջ կը ցանեն, որ պատիճներու մէջ ցօղունին կատարն ու երկու կողմերը կը բուսնին։ Պատիճներն այն պատեաններն են որոց մէջ բակլան ու ոլոռն կարգ կարգ կ'երևին։

9. Պտուղներ են խնձորը, տանձը, կեռասն ու սալորն որ պարտէզի մէջ տնկուած ծառերու վրայ կը հասնին։ Նարինջն ու խաղողն ալ պտուղներ են, որ տաք երկիրներ կ'աճին։ Իսկ հաղարջն ու մորն մանր

միրգեր են որ Թուփերու վրայ կը բուսնին։ Հաղարջին Թուփերն սուր փուշեր ունին ոստերուն վրայ։

10. Այն ամեն բաներն որ երկրի վրայ կը բուսնին, Թէ արտերու, Թէ պարտէզներու մէջ, Թէ լճակներու մօտ բոյս կ'ըսուին։ Բոյսերը Նուրբ ու կենդանի են երբ որ կ'աճին, մեռած են երբոր կը Թառամին և չեն մեծնար։ Բայց բոյսերը չեն կրնար տեղէ տեղ շարժիլ կենդանիներուն պէս։ Ուր որ աճին այն տեղ կը մնան։ Սակայն երբոր ծաղիկները Թաղարներու մէջ տնկենք, այն ատեն կրնանք այդ Թաղարները մեր ուզած տեղը դնել, երբեմն սենեակներու մէջ, երբեմն պատուհաններու մէջ, որպէս զի արևուն լոյսն անոնց վրայ զարնէ։

11. Բոյսերը կ'ապրին հողէն հիւԹ ծծելով՝ արմատներուն միջոցաւ. հիւԹը արմատէն կ'անցնի բունը կը հասնի և անկից բոլոր ճիւղերուն վրայ կը տարածուի։ Այս խոնաւ հիւԹէն զատ՝ բոյսերն օդէն և արևէն պէտք ունին որ աճին։ Երբոր ձմեռը գայ և ցուրտ հովը փչէ, հիւԹը բունէն վար կ'իջնէ կամ տունկին կոճղը մեծցնելու կ'օգնէ, մինչդեռ տերևները կը Թափին և մերկ կը մնան մինչև գարուն, որու ջերմուԹեամբը նորէն տունկերը կը կենդանանան և նոր տերևներու բողբոջներ կ'արձակեն։ Բայց կան տունկեր որոց տերևները ձմեռն ալ չեն չորնար և չեն Թափիր և ասոնք կ'ըսուին մշտադալար։ Կան բոյսեր որ սերմ կը Թողուն և անով ուրիշ նոր բոյսեր կը ծլին։ Ինչպէս կենդանիները նոր սերունդներ ունին, նոյնպէս ունին և բոյսերը։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Երբոր ամառն արտորէնը կը դեղնի ինչ կը դառնայ. ուրիշ. այս բաներուն մէջ կենդանուԹիւն կա՞յ. հովէն ինչ կ'ըլլայ։ 2. Երբոր աշնան պտուղները հասնին ուրիշ ինչ բաներ կ'երևին մեր աչքին. ինչ է



ծառին՝ ըսել։ 3. Երկիրը մեզի ուտելիք կուտայ ինչերէն. ինչ է մշակին գործը։ 4. Ցանել ինչ կ'ըսէ. ինչ կը ցանեն. դաշտով ինչ կ'ըսեն։ 5. Անցրեն ինչ օգուտ ունի. սերմն ինչ կ'ըլլայ. ցորենին ընձյուղը մեծնալու համար ինչէ՞ պէտք է. ցորենը ե՞րբ կը ցանեն, ե՞րբ կ'աճի, ե՞րբ կը հնձեն. ինչպէս կ'երևին դաշտերը յորան ժամանակ. ինչու համար։ 6. Ի՞նչպէս կը հնձեն ցորենը. ուրիշ ինչ արմտիք կան. ինչպէս կը զատեն ցորենը խարէն. հացն ինչէ՞ կը շինուի։ 7. Պարտէզներու մէջ ուրիշ ինչ բաներ կը բուսնին. ինչ է պտուղը։ 8. Անուանէ մէկ քանի պտուղներ։ 9. Ի՞նչ անուն կուտան այն բաներուն որ երկրի վրայ կ'աճին. ե՞րբ Նուրբ ու կենդանի են. կը շարժի՞ն։ 10. Բոյսերն աճելու համար ինչ բաներու պէտք ունին. ե՞րբ կը մեռնին. բոլորովին կը չորնա՞ն. ինչ են մշտադալար բոյսերն. սերունդ ունի՞ն։

---

## ՓԱՅՏ — ԾԱՌ.

1. Շատ տեսակ փայտեր կան. ոմանք կոշտ են, ոմանք ընտիր։ Երբոր ծառերը շատ տարիներ ապրելով մեծնան ու հաստանան, այն ատեն մարդիկ զանոնք արմատէն կը կտրեն, ճիւղերը կը քշտեն և բուներէն կամ կոճղերէն փայտ կամ տախտակ կը շինեն։ Վերջը՝ կան մարդիկ որ փայտը սղոցներով կը կտրեն, երկայն կտորներ ու գերաններ կը հանեն և ապա աԹոռներ, սեղաններ, տուներ, սայլեր և ուրիշ շատ բաներ կը շինեն։ Ասոնք կ'ըսուին ատաղձագործ։ Մեծահասակ ծա-

ռներ են եղեւինը, ուռին, թեղօշի, ոփին, նոճին, սօսին։ Կոհենին շատ ընտիր փայտ մ'է որ օտար երկիրներէ կը բերեն և անով աղուոր սեղաններ, աթոռներ և ուրիշ կարասիներ կը շինեն։

2. Ծառերն ալ շատ համով պտուղներ կու տան։ Ծառերուն տեսքը շատ զմայլելի է և ամառուան տաքին զովարար հովանի ունին։ Երբեմն մինակ պարտէզներու և դաշտերու մէջ կ'աճին, երբեմն ալ խումբ խումբ կը բուսնին արտերու և անտառներու մէջ։ Ծառերն ալ միւս բոյսերուն պէս կ'աճին, հիւթն իրենց արմատէն վեր ելնելով կոճղին և ապա ճիւղերուն կը հասնի։ Ամեն ծառ կեղեւով պատած է. այս կեղեւը կը պահպանէ ծառը և մեծնալու կ'օգնէ։ Եթէ ծառի մը կեղեւը վնասուի՝ ծառը կը տկարանայ և քիչ ատենէն կը չորնայ։ Ուստի պէտք չէ որ տղաք ծառերուն կեղեւները քերթեն ու կտրեն, վասն զի անոնց մեծ վնաս կը պատճառեն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Քանի՞ տեսակ բոյս կայ. ի՞նչպէս կը շինեն տախտակը. ի՞նչ կը գործածուի. անուանէ քանի մը ծառեր. ի՞նչ է կաղնին։ 2. Ո՞ւրկէց կը քաղենք պտուղները. ո՞ւր կը բուսնին. ի՞նչպէս կ'աճին. ծառին կեղեւն ի՞նչ օգուտ ունի։

———

## ԱՆԿԵՆԴԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ — ՔԱՐԵՐ, ԹԵՐԹԱՔԱՐ, ՔԱՐԱԾՈՒԽ, ԿԱՒ, ԱՂԻՒՍ, ԱՊԱԿԻ, ՄԵՏԱՂՆԵՐ.

1. Փողոցներուն սալայատակները քարերով կը շինուին. նոյնպէս շատ տուներ ու պատեր քարերով շինուած են։



Շատ քարեր գետնէն կը հանուին փորելով, կամ ժայռեր ու լեռներ կտրելով։ Քարեր խորտակելու համար վառօդ ու տապար կը գործածեն և զայս այլ և այլ ձեւեր տալու համար կը տաշեն։ Այն տեղն ուր քարեր կը կտրեն կամ փորելով կը հանեն կ'ըսուի քարհանք։

2. Կան քարեր որ կարծր և հաստատուն են, կան նաև քարեր որ կակուղ ու դիւրաբեկ են։ Կարծր ու պինդ քարերն շէնքի աւելի յարմար են, վասն զի աւելի երկար կը տեւեն։ Կակուղ քարերը ջուրէն կը մաշին և անոնց մասերն աւազ կը դառնան։ Ծովեզրը աղուոր փայլուն աւազ կայ որ ժայռերէն կը փշրի երբ որ ալիքներն անոնց կը զարնեն։ Շատ քարեր անթափանցիկ են, այսինքն այնքան թանձր են որ անոնց մէջէն բան չերեւիր. բայց կան քանի մը քարեր ալ որ թափանցիկ են ու շողուն, և անոնց մէջէն կրնանք տեսնել որպէս թէ ապակի ըլլային։ Թերթաքարը տեսակ մը կապոյտ քար է, որ կաւերու մէջ կը գտնուի և բարակ բարակ կտրելով տուներու տանիքին վրայ կը դնեն։ Իսկ երբ որ թերթաքարը յղկուի դպրոցի տղոց համար գրատախտակ կ'ըլլայ։

3. Քարածուխը սեւ նիւթ մ'է, որ սովորաբար երկրին խորերը կը գտնուի և զայն կը հանեն գետնափոր փոսեր կամ ականներ բանալով։ Այս ականներուն յատակը հանքերը կան, ուսկից քարածուխը կը փորեն և մեքենայով վեր կը հանեն։ Քարածուխը մեծ մասով բուսային նիւթերէ եղած է, որոց վրայ հող ընկնելով ճնշուած և երկար ատեն գետնին տակը մնացած է։

4. Քարածուխը շատ տեղ կը գործածուի իբրև վառելիք, որով մարդիկ կերակուր կ'եփեն, կը տաքնան, և ուրիշ բաներու համար կը գործածեն։ Ամենէ մեծ ա-

ծուխի հանքերը Անգլիոյ մէջ կը գտնուին ։ Քարածուխէն զատ՝ մարդիկ փայտածուխ ու փայտ կը գործածեն ։

5. Կաւը կակուղ նիւթ մ'է որ երկրի մէջ կը գըտնուի ․ անով կուժ, բարձ, պնակ և ուրիշ բաներ կը շինուին ։ Բայց այս ամանները գործածելու համար նախ հնոցի մէջ կ'եփեն կ'ապակեն որպէս զի յղկեն ։ Երբոր լմննան կաւեղէնք կը կոչուին ․ ճենապակը տեսակ մ'ընտիր կաւեղէն է, որ կաւէ ու գայլախազէ կը շինուի ։ Չենք կարող կաւեղէն ամանի մէջէն տեսնել, ինչպէս որ կը տեսնենք ապակիին մէջէն, ինչու որ գիմահար է ։ Շատ ապրանքներ կամ նիւթեր գիմահար են ։

6. Աղիւսներն ալ կաւէ կը շինուին ։ Կաւը աղիւսի ձեւով կը կտրեն և մեծ հնոցի մը մէջ կ'այրեն ։ Երբոր աղիւսները կը պաղին, տուներ և պատեր շինելու համար կը տանին կը գործածեն ։ Աղիւսը քարին պէս պինդ չէ, բայց քար չգտնուած տեղեր շատ կը գործածուի ։ Կղմինդրն ալ որով տուներու պշրակները կը ծածկեն կաւէ է ։

7. Ապակին պայծառ, ողորկ նիւթ մ'է ։ Աւազ ու կալաքար (սոտա) կրակով կը հալեցնեն և ապակի կը շինեն ։ Երբոր տաք է, ապակին կակուղ կ'ըլլայ և դիւրաւ տափակ թերթի ձեւ մը կ'առնէ ։ Իսկ երբոր այդ թերթը պաղի, ապակի կը դառնայ ։ Պատուհաններու համար մանր կտորներ կը կտրեն ։ Ապակին աղւոր թափանցիկ նիւթ մ'է, դիւրաբեկ կամ դիւրաւ կոտրուող ։ Պիլօրն ալ ապակիի ընտիր տեսակն է, որով բըշակ, մանր բաժակներ և ուրիշ ամաններ կը շինեն ։

8. Շատ բաներ կան որ մետաղէ շինուած են ․ տեսակ տեսակ մետաղ կայ ։ Մետաղները գետնին տակէն կը փորեն կը հանեն, ժայռերու մէջ կը գտնուին և



սովորաբար հողով և ժայռոտ նիւթերով խառնուած են ։ Այն ատեն ատոնք հանքաքար կ'ըսուին ։ Հանածոյքը հնոցի մէջ կը դնեն և մետաղը մաքուր դուրս կ'ելնէ ։ Երբոր պաղի, գործածելու յարմար է ։ Մետաղները պինդ, ծանր են և փայլութիւն ունին ։ Անոնցմէ մէկ քանին կռելի են, այսինքն երբոր կռանով ծեծուին կը բարակնան առանց կոտրուելու ։ Գլխաւոր մետաղներն են, ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, անագ և զինկ ։

9. Ոսկին դեղին մետաղ մ'է, քիչ կը գտնուի ու սուղ է ։ Բոլոր մետաղներէն աւելի արժէք ունի ։ Անով դրամ կը շինեն, նոյնպէս մատնի և ուրիշ զարդեր ։ Արծաթը ճերմակ, աղւոր մետաղ մ'է ․ անով ալ դրամ կը շինեն, բայց ոսկիին չափ սուղ չէ ։ Մետաղներուն մէջ ամենէն օգտակարը երկաթն է ։ Անով կը շինուին գամեր, փականք, ծխնի, կացին, մուրճ, ուռն և ուրիշ շատ գործիքներ ։ Նոյնպէս ամաններ, սաներ և խոհանոցի համար ուրիշ անօթներ երկաթէ կը շինուին ։ Երբոր երկաթը շատ կարծր ընեն պողպատ կ'ըսուի, որով դանակ, ասեղ, սուր և ուրիշ բաներ կը շինեն ։ Պղինձը թուխ է, որով տասնոց, քսաննոց և զուրուշնոց դրամ կը կտրեն, նոյնպէս լայն թերթեր կը շինեն այլ և այլ բաներու գործածելու համար ։ Կապարը քիչ մը կապոյտ է և միւս մետաղներէն աւելի թեթեւ ։ Անով խողովակներ կը շինեն և զանազան բաներու կը գործածեն ։ Անագը բաց գոյն ունի և կապարէն աւելի պինդ է ։ Խոհանոցի անօթներն անով կը ծեփեն որպէս զի չժանգոտին ։ Զինկէն լայն թերթեր կը կտրեն ոչ միայն տանիքները ծածկելու այլ ուրիշ բաներու գործածելու համար ։

10. Երբոր մարդիկ երկու մետաղ հալեցնելով իրարու հետ խառնեն ուրիշ մետաղ մը կը շինեն։ Այս տեսակ մետաղները խառնուրդ կ'ըսուին։ Արոյրը պայծառ դեղին մետաղ մ'է՝ պղինձով ու ցինկով խառնուած։ Շատ զարդեր կարասիներու վրայ արոյրէ շինուած են։ Զանգակներն ալ պղինձի ու անագի խառնուրդէ շինուած են։ Կան զանգակներ (հնչակ) որ փոքր են, տուներու մէջ կը կախեն թելերով կամ սեղանի վրայ կը դնեն, որ պէտք եղած ատեն ծառաները կանչեն։ Կան զանգակներ ալ որ խոշոր են և մարդու չափ մեծ են։ Այս խոշոր զանգակներն եկեղեցիներու զանգակատուններէն կը կախեն և զարնելով ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրեն։ Դպրոցի տղաքը դասարանները կոչելու համար ալ զանգակ կը զարնեն։ Մանր զանգակները բարակ սուր ձայն մ'ունին, իսկ մեծերը բարձր ու խորունկ հնչիւն մը կը հանեն որ շատ հեռուէն կը լսուի։*

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Քարերն ի՞նչ բաներու համար կը գործածուին. ուսկից և ինչպէ՞ս կը հանեն։ 2. Քարերը կակո՞ւղ են. ատաղձն ինչ է. ո՞ւր կը գտնուի. քարայրէ դիմահար ու Նախճաւանի քարերը. գրատախտակն ի՞նչ է։ 3. Ո՞ւսկից կը հանեն տորփածուխը. ի՞նչ է։ 4. Ի՞նչ բանի կը գործածուի. ուրիշ ի՞նչ օգուտ կայ։ 5. Կաւ, աղիւս, ճենապակի, ինչպէ՞ս և ինչպէս կը շինեն. յախճապակին ի՞նչ է։ 6. Ուրիշ ի՞նչ բաներ կը շինուին կաւէն. ինչպէս. ինչէ՞ կը ծառայեն։ 7. Ի՞նչ

(*Այս դասերուն մէջ միայն գլխաւոր անկենդան առարկաներ յիշուած են։ Դաստատուն կրնայ ուրիշ բնական ու արուեստական առարկաներ ցոյց տալ տղոց և զանոնք բացատրել, իբրև մտային կրթութիւն։ Շատ կարևոր է որ ամեն ծաղկոց ու նախակրթարան այլ և այլ առարկայից հաւաքածոյ մ'ունենայ մանր տղոց կրթութեան և զուարճութեան համար։)



է ապակին. ինչպէ՞ս շինուած է. դիմացկո՞ւն է. ի՞նչ է պէտքը։ 8. Մետաղներն ո՞ւսկից կը հանեն. Երկաթ ուրեմն ի՞նչ կ'ըսուի. ի՞նչ յատկութիւն ունին. որո՞նք են գլխաւորները։ 9. Ո՞ր մետաղը հաստատուն ու առաջ է. ի՞նչ կը շինուի. հողէ արծաթը. երկաթը. պողպատը. պղինձը. կապարը. անագը. ցինկը։ 10. Ի՞նչ մետաղ է արոյրը. ի՞նչ կը շինեն. զանգակներն ի՞նչ բանէ կը ձուլեն։

---

## ՋՈՒՐ — ՈՎԿԻԱՆՈՍ — ՆԱՒԵՐ — ԳԵՏԵՐ

1. Ջուրը հեղուկ մարմին մ'է։ Աւազի պէս կը հոսի, և մէկ ամանէ ուրիշ աման կը թափուի։ Աշխարհիս մեծ մասը ջրով պատած է, որ ընդարձակ ծովեր են և Ովկիանոս կ'ըսուին։ Ծովուն ջուրն աղի է և այնքան դառն է որ չխմուիր։ Երբոր աղի ջուրը կամ աղջուրը խաշենք երկար ժամանակ և հեղուկը ցնդելով շոգի ըլլայ, նիւթ մը կը մնայ որ աղ կ'ըսուի, և կերակուրի համար կը գործածուի։

2. Ծովը բնաւ հանդարտութիւն չունի։ Ալիքները կը շարժին դէպ 'ի ցամաք վեց ժամ և ապա ետ կը դառնան վեց ժամու չափ։ Ջուրերուն գալն ու երթալը կ'ըսուի մակընթացութիւն ու տեղատուութիւն։ Քսան ու չորս ժամուան մէջ երկու անգամ ջուրերու հոսանք կը պատահի, այնպէս որ հոսանքին բարձրութիւնն ամեն յաջորդ օր քիչ մ'ուշ կը պատահի։ Կը կարծուի որ ծովու մակընթացութիւնն ու տեղատուութիւնը լուսնին միջոցաւ յառաջ կուգայ։ Ամիսն երկու անգամ,

երբոր լուսինը նոր է, նոյնպէս երբոր լեցուն է, մակընթացութիւնը սաստիկ կ՚ըլլայ։ Ծովուն ծայրը գտնուած ցամաքը կ՚ըսուի եզր կամ ափն։ Ծովեզրին մէկ քանի տեղուանքը բարակ աւազ կայ, մէկ քանի տեղուանքն ալ ժայռոտ են։

3. Նաւերը ծովու վրայ կը սահին, և տեղէ տեղ կ՚երթան երբոր առագաստները հովով կը լեցուին, և ղեկավարը զանոնք կը կառավարէ ղեկով մը։ Նաւուն մէջի գործաւորները նաւաստի կ՚ըսուին, որ նաւուն մէջ այլ և այլ գործեր կ՚ընեն։ Նաւը հրամայողը նաւապետ կ՚ըսուի։ Սոսկալի բան մ՚է երբոր ծովու վրայ նաւը փոթորկի հանդիպի և ժայռերու կամ աւազակոյտերու զարնուի. այն ատեն նաւը կը բեկի (նաւաբեկութիւն) և երբեմն նաւորդներն ալ կը խեղդուին։

4. Շոգենաւերն ալ տեսակ մը նաւեր են որ առագաստով չեն նաւարկեր և հովուն դէմ ալ կրնան քալել. վասն զի երկու կողմէն անիւներ ունին և այս անիւները շոգեշարժ մեքենաներու միջոցաւ կը շարժին։ Կան նաև շոգենաւներ որ մեծ պտուտակով կը շարժին, որ բոլորակի շուտ շուտ կը դառնայ։ Երբ նաւ մը տեղէ մ՚ուրիշ տեղ կ՚երթայ կը նաւարկէ, կ՚ուղևորէ։

5. Նաւաստիները ծովու վրայ կը քշեն իրենց նաւերն առանց ցամաքը տեսնելու, և իրենց ճամբան չեն կորսնցըներ, վասն զի կողմնացոյց անունով գործիք մ՚ունին։ Կողմնացոյցը պզտիկ շրջանակ մ՚է ժամացոյցի պէս, մէջ տեղը ասեղով մը, որ միշտ դէպ ՚ի Հիւսիս կը նայի։ Շրջանակը չորս գլխաւոր մաս բաժնուած և վրան գրուած է. Հիւսիս, Հարաւ, Արևելք, Արևմուտք, և այս գլխաւոր մասերուն մէջ դարձեալ ուրիշ բաժանումներ նշանակուած են։



6. Մեզի այնպէս կ՚երևի որ արևն առաւօտուն կը ծագի արևելքի կողմէն, և իրիկուընը արևմտեան կողմէն մայր կը մտնէ։ Բայց իրօք երկիրը կը դառնայ։ Երբ որ մեր երեսը դէպ ՚ի հիւսիս դարձած կենանք, մեր կռնակը դէպ ՚ի հարաւ է, մեր աջ ձեռքը դէպ ՚ի արևելք, և մեր ձախ կողմը դէպ ՚ի արևմուտք կ՚իյնայ։ Երբոր մարդ մը հեռու տեղ մ՚երթալ ուզէ և ճամբան չգիտէ, կը հարցընէ թէ նոյն տեղն որ կողմը կը գտնուի, հիւսիսային թէ հարաւային կողմը, արևելեան թէ արևմտեան կողմը. երբոր իմանայ, անոր վրայ իր ճամբան կը շարունակէ։ Այս կերպով քաղքի կամ գիւղի մէջ ամեն տեղ կարելի է գտնել։

7. Ճամբորդներն այլ և այլ տեղուանք գտնելու համար աշխարհացոյցներ ալ կը նային։ Աշխարհացոյցը կտոր մը թուղթ է որու վրայ երկրի մը պատկերը գծուած է, իր քաղաքներուն, գիւղերուն, գետերուն, լեռներուն, ծովերուն անուններովը և ամենքն ալ իրենց յատուկ տեղը։ Այնպէս երբոր աշխարհացոյց տախտակ մը տեսնենք կարող ենք մեր ուզած երկրին և անոր այլ և այլ տեղերուն վրայ գաղափար մ՚առնել։ Աշխարհացոյց տախտակներու մէջ՝ հիւսիսը միշտ վերի կողմն է, արևելքն աջ կողմը, արևմուտքը ձախ, իսկ հարաւը վարի կողմը։

8. Պայծառ գիշերները՝ երբոր աստղերը կ՚երևին, կարող ենք տեսնել հիւսիսային կողմը մեր գլխուն վրայ աստղ մը, որ Հիւսիսային Աստղ կ՚ըսուի։ Տղաք պարտաւոր են ճանչնալ հիւսիսային աստղը, որպէս զի երբոր գիշերով դուրսը գտնուին, գիտնան թէ ո՛ր է հիւսիս։ Նաւապետները գիտեն հիւսիսային աստղը, և կարող են անոր նայելով իրենց նաւը առաջնորդել։

Բայց ոմանք չունին անոր նայելու, վասն զի իրենց կողմնացոյցն ունին, որ իրենց կը ցուցընէ թէ ո՛ւր է հիւսիսային կողմը, թէ գիշեր ըլլայ և թէ ցերեկ։ Եթէ ուզեն հիւսիսի կողմն երթալ, կը նային կողմնացոյցին ասեղին, որ միշտ հիւսիսի կողմը դարձած է. եթէ հարաւային կողմն երթալ ուզեն, հիւսիսին հակառակ կողմը կը բռնեն, և այսպէս իրենց ուզած կողմը կրնան դիմել՝ միշտ կողմնացոյցին նայելով։

9. Շատ տեսակ կենդանիներ ծովուն մէջ կ'ապրին, ոմանք ջուրին մէջ կը լողան, ոմանք խեցիներու մէջ կը բնակին, որ Ովկիանոսին յատակը սփռուած են կամ ծովեզերեայ ժայռերու մէջ։ Ձկնորսները նաւակով ձուկ որսալու կ'երթան, և ապա ցանցը բերելով ձուկ ուզողներուն կը ծախեն։ Ձուկերը կարթով կամ ուռկանով կ'որսան, շատ մեծ քանակութեամբ։ Ուռկանը նաւակին մէջէն ծովը կը նետեն և քիչ մը ետքը նորէն վեր կը քաշեն զայն ձկնորսները, և ուռկանն իր ճամբուն մէջ որչափ ձուկ որ հանդիպի իր հետը կը բերէ։

10. Ամեն գետերն ու առուակներն անուշ ու թարմ ջուր ունին։ Այս ջուրերն ակունքներէ կը բղխին և վազող անձրևներու ջուրերն ալ կ'ընդունին։ Գետերն երբեմն քանի մը մղոն տեղէ հոսելէն ետև՝ ծովը կը թափին, բայց ծովն այս ջուրերով չմեծնար, վասն զի արևուն տաքութենէ ջուրերը մշուշ կամ շոգի կ'ըլլան և օդին մէջ բարձրանալով ամպ կը դառնան։ Ասով գետերուն թափած ջուրերուն չափ ջուր շոգի ըլլալով վեր կը բարձրանայ։ Ամպերը ցրտէն անձրև կ'ըլլան կը վազին և նորէն լեռներու ակունքը լեցընելով գետերուն ջուր կուտան։



ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ջուրն ինչ մարմին է. ինչ է հեղուկը. ովկիանոսը. ջուրը ուրկէց կ'ելլէ։ 2. Ծովը հանդարտ է. Բացատրէ մակընթացութիւնն ու տեղատուութիւնը. պատճառ. ինչ է եզր։ 3. Քանի՞ տեսակ նաւ կայ. ինչպէս կը գործէ առագաստաւոր նաւ մը. որո՞նք են նաւուն գործաւորները. 4. Շոգենաւը նաւէն ինչ տարբերութիւն ունի. Նկարագրէ. [illegible] ինչ է։ 5. Բացատրէ կողմնացոյցը։ 6. Ո՞ր է հիւսիս. հարա՞ւ և այլն. Եթէ չգիտցած տեղդ երթաս ճամբան ինչ կը հարցնես. 7. Ինչ օգուտ ունի աշխարհացոյցը։ 8. Հիւսիսային աստղն ո՞ր է. ինչ օգուտ ունի։ 9. Ձուկն ինչո՞վ և ինչպէս կը բռնեն։ 10. Գետերուն ջուրն ուրկէց կուգայ՝ ո՞ր կ'երթայ. ծովը կրնա՞յ լեցնել։

---

## ԶԳԱՅԱՐԱՆՔ

1. Մարդ հինգ զգայարանք ունի. տեսնելու զգայարանք, կամ տեսանելիք, լսելու զգայարանք, կամ լսելիք, հոտոտալու զգայարանք, կամ հոտոտելիք, ճաշակելու զգայարանք, կամ ճաշակելիք, բռնելու զգայարանք, կամ շօշափելիք։ Ուրեմն մարդ կ'զգայ հինգ կերպով՝ տեսնելով, լսելով, հոտոտալով, ճաշակելով, շօշափելով։ Այս ամեն մէկ զգայութիւնն ունենալու համար հինգ գործարան ունի, այս է աչք, ականջ, քիթ, լեզու, ձեռք կամ մարմին, որ շատ օգտակար են, և առանց անոնց մարդ պիտի չկրնար հասկընալ թէ ինչ կայ աշխարհիս մէջ։

2. Աչքը պզտիկ աղուոր և պայծառ առարկայ մ'է, կնդակի պէս կլոր: Գլխու վրայ է և կը շարժի առանց իր տեղը փոխելու: Աչքը կը տեսնէ միայն երբոր լոյս կայ. երբոր մութ է բան մը չտեսներ: Փափուկ գործարան մ'է աչքը և շուտով կը վնասուի: Անոր վրայ բարակ մաշկ կամ ծածկոյթ մը կայ որ Թարթ կ'ըսուի: Այս թարթը կը բացուի ու կը գոցուի մանաւանդ երբ որ վնասուելու վախ կայ, և երբոր կը քնանանք: Աչքը պահպանելու համար բարակ մազեր ալ կան որ թարթին ծայրերէն կը բուսնին, ու Արտեւանունք կ'ըսուին: Արտեւանունքը չթողուր որ աչքը փոշի երթայ կամ ճճի մտնէ և արեւուն լոյսը սաստիկ զարնէ:

3. Աչքին մէջ տեղը պզտիկ կէտ մը կայ որ հայլիի պէս կը փայլի. այս է Բիբը. մեր տեսած բաներն անոր վրայ կը զարնեն, կը ցոլանան, Այս ցոլումը մանր նկարի կը նմանի: Այս նկարը ջիղի մը միջոցաւ ուղեղին կը հասնի և ասոր համար կը տեսնենք: Երբեմն հիւանդութենէ աչքի լոյսը կը կորսուի. կան ծերեր ալ որ աչքէ զուրկ են. այս շատ մեծ դժբաղդութիւն մ'է: Ասանկ մարդիկ կոյր կ'ըսուին. չեն կրնար մինակ տեղ մ'երթալ, ու եթէ շարժին, ձեռքով ու ոտքով կը խարխափեն որ վար չիյնան: Կոյրերուն շօշափելիքը շատ զօրաւոր կ'ըլլայ. աչքի տեղ ան կը գործածեն, բայց ստիպուած են ուրիշ մարդերու հարց ու փորձ ընել որ հասկընան թէ իրենց չորս դին եղած բաներն ինչ են: Բայց երբեմն ուրախ զուարթ կ'ըլլան կոյրերը, ինչու որ գիտեն թէ անօգուտ է տրտնջալ իրենց վիճակին համար և մարդիկ անոնց հետ անուշութեամբ կը վարուին:

4. Ականջները լսելու գործարանն են: Երբ ձայն ելնէ, այդ ձայնը ականջներուն ծակէն կը մտնեն և ներսի դին թմբուկի պէս թաղանթի մը կը զարնեն. ասկից լսելու զգայութիւնը կ'ունենանք, կամ ախորժելի կամ անախորժ ձայներ: Երբոր ձայներն այնպէս կարգով կ'ելնեն որ շատ հաճելի են, Ներդաշնակութիւն կ'ըսուին. իսկ եթէ անհաճոյ՝ Անդաշնակ կ'ըսեն: Կան մարդիկ որ լսելու զգայարանքէն զուրկ են և կ'ըսուին Խուլ. այս ալ մեծ դժբաղդութիւն մ'է: Ելած ձայներն իրենց ականջին մէջ կը մտնեն, բայց գործարանը աւրուած ըլլալուն՝ չեն լսեր կամ շատ անորոշ կը լսեն: Ականջի միջոցաւ երաժշտական երգեր ու եղանակներ կը վայելենք. երաժշտական նուագարաններն են, սրինգը, ջութակը, դաշնակը, վինը և այլն:



5. Քիթն է հոտոտելիքի գործարանը. մեր ռնգունքին ներսի դին նուրբ ջիղեր կան, որով օդին մէջ ցրուած կամ ծաղիկներէ ելած հոտերը կ'առնեն:

6. Լեզուն ճաշակելիքի գործարանն է, որ նոյնպէս բարակ ջիղերով ծածկուած է և անով կ'որոշենք թէ բան մը համո՞վ է թէ ոչ, երբոր մեր բերանն առնենք: Կան բաներ որ ճաշակի անուշ կուգան, կան բաներ ալ որ դառն են. իսկ անոնք որ բնաւ ճաշակ չունին, Անհամ կ'ըսուին: Հոտոտելիքն ու ճաշակելիքը միւս զգայարանաց չափ կարեւոր չեն:

7. Ձեռքը շօշափելիքի գլխաւոր գործարանն է. բայց այս զգայարանքը բոլոր մեր մարմնոյն վրայ կը տարածուի: Մեր մատներուն ծայրերը բարակ ջիղեր կան որով կ'զգանք: Շօշափելիքը շատ կ'օգնեն տեսնելու բան մը: Պզտիկ տղաք շատ բաներու ձեւը կը սորվին ոչ միայն տեսնելով այլ և շօշափելով: Այսպէս, երբ որ մեր զգայարանքը կը գործածենք մէկ տեղ, շատ բա-

ները կերպարանքը կամ ձեւը կը սորվինք, եւ առարկայ մ'ուրիշ առարկայէ որոշելու կը վարժինք։

8. Երբոր մեր բոլոր զգայարանքը կը գործածենք եւ անով շատ բաներ քննելէն ետեւ կը բաղդատենք, կը գատենք, այն ատեն կը յիշենք որ փորձառութիւն ստացած ենք, եւ մեր վրայ աւելի խնամք տանելու կը յաջողինք։ Այսպէս զգայարանքը շատ պիտանի են մեզի համար։ Տեսակ մը ճամբաներ են որով միտքը այլ եւ այլ գիտութիւն կը սորվի. եթէ զգայարանք չըլլար բոլորովին տգէտ եւ տխար պիտի մնայինք։

9. Մարդուն պէս՝ չորքոտանիները, թռչուններն եւ ուրիշ կենդանիներ մի եւ նոյն զգայարանքն ունին, բայց կան կենդանիներ որոց մէկ քանի զգայարանքը շատ աւելի զօրաւոր են։ Կատուն աւելի սուր զգայարանք ունի լսելու, եւ քանի մը շուներ աւելի զօրաւոր զգայարանք ունին հոտոտելու քան թէ մարդիկ։ Պատճառն այս է որ կատուն աւելի պէտք ունի լսելու որպէս զի իր որսը, մուկը, կարենայ բռնել մութին, եւ շուներն ալ պէտք ունին աւելի սուր հոտառութիւն ունենալու որ կարող ըլլան որսին հոտն առնել եւ բռնել կամ հալածել։ Ուրիշ շուներ ալ՝ որ չէ թէ հոտոտելիքի այլ տեսանելիքի միջոցաւ կ'որսան, շատ զօրաւոր աչքեր ունին, որով իրենց որսալիք կենդանին շատ հեռուէն կը տեսնեն։

10. Կատուները կրնան իրենց աչքը լայնցընել որ աւելի լաւ տեսնեն երբոր քիչ մը մութ է։ Բայց երբ որ լոյսը բոլորովին քաշուի եւ կատարեալ խաւար ըլլայ կատուներն ալ չեն կրնար տեսնել։ Ամեն կենդանի իրեն պիտոյքին յարմար քիչ շատ զօրաւոր զգայարանք ունի։



ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Քանի՞ զգայարանք ունինք. ինչ է անոնց գործը. արտաքին բան մը հասկընալու համար ինչ պէտք է։ 2. Ի՞նչ է աչքը. միշտ կը տեսնէ՞. քանի՞ մաս ունի. ինչ օգուտ ունի։ 3. Ձեռքը կը տեսնէ՞. ինչու. քիթն ինչ է. կոյրին որ զգայարանքը զօրաւոր է։ 4. Ո՞ր գործարանը կը լսէ. ինչ է լսելը. ներդաշնակ որ ձայներն են. ով չլսեր։ 5. Ինչու համար քիթը հոտ կ'առնէ։ 6. Ո՞րն է համ առնելու գործարանը. ամէն բան համ ունի՞։ 7. Ո՞ր զգայարանքն ամենէ պիտանի է. ինչու։ 8. Բոլոր զգայարանքով ինչ կրնանք հասկընալ։ 9. Մինակ մա՞րդ զգայարանք ունի. կատուին որ զգայարանքը սուր է. իսկ շան. ինչու։ 10. Կատուն կատարեալ մութին կը տեսնէ՞։

---

ԳՈՅՆ

1. Աշխարհի մէջ շատ բաներ կան որ աչքի հաճոյք, զուարճութիւն կուտան։ Երկինքը, դաշտերը, ծաղիկները, այլ եւ այլ կենդանեաց մորթեր ու խեցիներ եւ առ հասարակ ամեն բան այնպիսի սիրուն գոյներ ունին որ մարդ կ'ըղձայ անոնց վրայ նայելով։ Ամենէ աւելի երկար ատեն նայելու կ'արժէ մարդ կանաչ գոյնը, եւ ասոր համար բնութեան մէջ կանաչ գոյնն աւելի շատ կայ։ Կան կանաչ գոյներ որ պայծառ բաց են, կան նաեւ որ աւելի մութ են. այս տարբերութիւնը կը տեսնուի արօտին խոտերուն, ծառին տերեւներուն ու թուփերուն վրայ։

2. Շատ բնական տարբեր գոյներ կան, նոյնպէս արուեստական գոյներ կան, բայց մեր տեսած կամ երևակայած բոլոր գոյներն երեք գոյնէ շինուած են, որ կ'ըսուին նախնական գոյներ։ Այս նախնական երեք գոյներն, որոցմէ միւսները յօրինուած են, ասոնք են․ կարմիր, դեղին և կապոյտ։ Երբոր այս գոյներն այլ և այլ կերպով խառնենք, միւս գոյները կը յօրինուին, որ կ'ըսուին բաղադրեալ գոյներ։

3. Կանաչ գոյնը դեղին ու կապոյտ գոյնէ բաղադրուած է։ Երբոր խառնուրդին մէջ կապոյտը շատ ըլլայ և դեղինը քիչ՝ կանաչ գոյնն աւելի մութ կը դառնայ։

4. Նարնջագոյնը կը շինուի դեղինն ու կարմիրը խառնելով։

5. Ծիրանի գոյնն ունենալու համար պէտք է խառնել կապոյտ գոյնը կարմիր գոյնին հետ։ Եթէ կապոյտ գոյնն աւելի դնենք մանիշակի գոյն կ'ըստանանք։

6. Թուխը, շեփորուկի, մոխրի և ուրիշ գոյներ կամ երանգներ նոյնպէս նախնական գոյներն իրարու հետ խառնելով կը շինուին։ Ճերմակ գոյնը կատարեալ պայծառ գոյն մ'է կամ անգոյն բան մը․ իսկ սև գոյնը կատարեալ մթութիւն է։ Իրօք սպիտակն ու սևը գոյն չեն, թէև թէ բնութեան և թէ արուեստի մէջ կ'երևին։ Ձիւնը ճերմակ գոյնի կատարեալ օրինակը կուտայ մեզի․ մաքուր կտաւը, բամպակն և թուղթը ճերմակ են։ Սևի օրինակը կուտայ մեզի գիշերուան խաւարը, կամ լոյսի պակասութիւնը։

7. Ծաղիկներն ու թռչուններու փետուրներն այլ և այլ բնական գոյներ ունին։ Ծիրանի գօտին կամ ծիածանն ալ այլ և այլ գոյներու աղուոր շարք մ'է։ Երբ որ անձրև գայ և արևուն ճառագայթներն անձրևի կաթիլներէն անցնին երկնից վրայ եօթն այլ և այլ գոյներ կ'երևին կամարաձև որ ծիրանի գօտի կ'ըսուի։ Այս գոյներն երեք նախնական և չորս բաղադրեալ գոյներէ բաղկացած են, այս կարգով․ կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, կապոյտ, ծիրանի և մանիշակագոյն։ Այս գոյները կ'երևին նաև երբոր ճառագայթներն եռակողմեան ապակիի մը մէջէն կ'անցնին, որ հատուածակողմ կ'ըսուի, ուստի և երբեմն գոյներն ալ հատուածակողմեան գոյներ կը կոչուին։



ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ո՞ւր կ'երևին գոյները․ բնութեան մէջ ո՞ր գոյնն աւելի շատ կայ․ տարբերութիւնն ունի՞։ 2. Շատ գոյներ կա՞ն․ ի՞նչ են նախնական գոյները․ որո՞նք են բաղադրութիւնները․ ի՞նչպէս կը շինուին։ 3. Կանաչ գոյնն ի՞նչ գոյներու խառնուրդ է․ նարնջագոյնը․ ծիրանին․ մանիշակագոյնը։ 4. Ի՞նչ է ճերմակ ու սև գոյնը․ ո՞ր առարկաներուն վրայ կը տեսնուին։ 5. Ո՞ր առարկաներն այս այլազան գոյներու օրինակը կրնան տալ մեզի․ ի՞նչ է ծիածանը․ քանի՞ գոյն ունի․ ըսէ․ հատուածակողմն ի՞նչ է։

——

## ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ՁԵՒԵՐ

1. Մեր տեսած ամեն առարկաները ձև մը, կերպարան մ'ունին։ Տեսնելով ու շօշափելով միայն բանի մը ձևը կամ կերպարանը կ'իմանանք և ասոնք մտքով ուրիշ ձևերու հետ կը բաղդատենք։ Շատ օգտակար է իրերու ձևերը գիտել, յիշել և անուանել։ Անուշադիր

եղողը չկրնար երբէք բանի մը Ճիշդ ձեւն ըսել, միշտ սխալներ կ՚ընէ և ինչ որ ըսեն չհասկընար ։ Պէտք է միշտ մտադիր ըլլալ և առարկաներու այլ և այլ ձեւերը սորվիլ, նոյնպէս այս ձեւերուն անունները գիտնալ ։

2. Ամեն մարդ գիտէ թէ ինչ է ուղիղ գիծը ։ Եթէ առնենք թուղթի կտոր մը, քանակ մը և մատիտ մը և մատիտը քանակին երկայնութեամբ թուղթին վըրայ քաշենք, ուղիղ գիծ մը կըգծենք, այսպէս ———
Նոյնպէս թէ որ թուղթը շիտակ ծալլենք այդ ծալքով ուղիղ գիծ մը կը գծենք. ուստի եթէ գրչով կամ մատիտով ալ չգծենք կրնանք հասկընալ թէ ինչ է ուղիղ գիծը ։

3. Ուղիղ գիծ մը կրնայ այլ և այլ կերպ քաշուիլ, այլ և այլ ուղղութիւն ունենալ, ինչպէս վերէն, վարէն կամ քովնտի ։ Երբոր մէկ ծայրէն միւս ծայրը շիտակ քաշուած է գիծը՝ կ՚ըսուի հորիզոնական գիծ, երբոր վերէն վար երկնցած է գիծը՝ կ՚ըսուի ուղղահայեաց գիծ ։




Ահասիկ օրինակ մը որու մէջ կը տեսնուի ուղղահայեաց գիծ մ՚որ հորիզոնական գծի վրայ կ՚իջնէ .



Ուղիղ գծերը կրնան նաև ըլլալ շեղակի կամ հակ, այսպէս .





Ահասիկ օրինակ մ՚որու մէջ խոտորնակ կամ շեղակի գիծ մը հորիզոնական գծի մը վրայ կ՚իջնէ .



Երբոր տախտակ մը կամ որ և է ուղիղ ու տափակ առարկայ մը այսպէս կը հակի ուրիշ առարկայի մը վրայ հակ կամ շեղակի մօտեցած կ՚ըսուի ։ Դար 'ի վեր Ճամբայ մ՚որ դէպ 'ի բլուրը կ՚ելնէ կամ տան մը ծուած յարկը խոտորնակ մակարդակի օրինակներ են ։

4. Երբոր գիծ մը շիտակ ուրիշ գծի մը վրայ կ՚իջնէ, այսպէս.



Երկու գծերուն գոյած կողմն ուղիղ անկիւն կ՚ըսուի ։ Եթէ վերէն իջնող կամ վարէն ելնող գիծը շեղ է, այսպէս,



Երկու գծերուն միացած կէտը սուր անկիւն կ՚ըսուի ։ Բայց թէ որ գիծն այսպէս իջնէ՝



այն ատեն անկիւնը բութ անկիւն կը կոչուի։

5. Երբոր չորս հատ հաւասար ուղիղ գծեր իրարու միանալով չորս հատ ուղիղ անկիւններ կը շինեն, շինուած ձեւը քառակուսի կամ քառանկիւն կ'ըսուի։ Եթէ իրարու ներհակ գծերը միւս երկու գծերէն երկար ըլլան՝ շինուած ձեւը զուգահեռագիծ կ'ըսուի.



քառակուսի  զուգահեռաձեւ

Այսպէս կ'ըսուի որովհետեւ գիծերն իրարմէ հաւասար հեռաւորութիւն ունին կամ իրարու դէմ շիտակ դիրք ունին։

6. Երբոր երեք հատ ուղիղ գծեր իրարու կը միանան՝ եռանկիւն մը կը շինեն։ Բուրգի մը կողմը եռանկիւնաձեւ է։ Եթէ առարկայ մը վեց հաւասար կողմեր ունենալով վեց անկիւն կը շինէ, կ'ըսուի վեցանկիւն։ Նոյն երկայնութեամբ ութ կողմ ունեցող առարկայ մը ութանկիւն կ'ըսուի։



եռանկիւն  վեցանկիւն  ութանկիւն



7. Ձեռքով շինուած շատ բաներ կան որ ուղիղ գիծեր ունին։ Գրքի մը կամ սեղանի մը եզրները, տան մը յարկը, դռներու կողմերն ուղիղ գծերու օրինակներ են։ Երբոր առարկայ մը վեց կողմ կամ երես ունի, որ իրարու հաւասար են եւ բոլորովին քառակուսի, խորանարդ կ'ըսուի։



խորանարդ

8. Առարկայ մ'որ երեք կամ աւելի հաւասար երեսներ ունի, բայց այս երեսները քանի վեր ելնեն կը նեղնան եւ կատարը հանելով կը միանան, բուրգ կ'ըսուի։



բուրգ

Այս տեսակ ձեւերու գագաթը սուր կ'ըսուի։ Ամեն շէնքի յատակը, ինչ ձեւ որ ունենայ, հիմ կամ խարիսխ կ'ըսուի։

9. Ամեն գիծ ուղիղ չէ։ Կան նաեւ գծեր որ կոր կամ ծուռ են։ Աւասիկ կոր գիծ մը.



Այսպիսի կոր գծեր կը տեսնենք թէ բնական և թէ արուեստական իրերու մէջ։ Սաստիկ քիչ ուղիղ գիծեր կան բնութեան մէջ. ծառերու բուները կոր կամ կլոր են. արեւն ու լուսինը կլոր ձեւ ունին. գետերը շրջաններ կ'ընեն ու կը պտտին իրենց ընթացքին մէջ. մեր մարմինն անգամ՝ շատ մը կոր կամ կլոր գծեր ունի։ Կոր գծերն աւելի աղւոր են քան թէ շիտակ գծերը, բայց միշտ աւելի կարճ է շիտակ ճամբով երթալ քան թէ ոլորուն ճամբով։

10. Բոլորովին կլոր գծով քաշուած ձեւը բոլորակ կ'ըսուի։ Բոլորակին ամբողջ գիծը շրջագիծ է. այն գիծն որ շրջագիծը մէկ կողմէն միւս կողմը կը կապէ կեդրոնէն անցնելով՝ տրամագիծ կ'ըսուի։ Իսկ կեդրոնէն բոլորակին կցող գիծը շառաւիղ կ'անուանի։ Բոլորակի մը կէսը կիսաբոլորակ է։



11. Բոլորաձեւ առարկայի մը կէսը մահիկ է։ Լուսինը՝ երբ նոր է, մահիկի ձեւ ունի։

12. Խողովակի մը ձեւը կամ թղթի գլանը բոլորակի մ'օրինակն է ուղիղ գծերով։ Գլանը՝ թէ ներսէն և թէ դրսէն կլոր է, մինչդեռ մէկ ծայրէն միւս ծայրը հասած գծերը ուղիղ են։ Նոյնպէս զուգահե-



ռական են երկու կողմի գծերը։ Այսպիսի առարկայ մը երբեմն գլան կը կոչուի։



Գլան

13. Թղթի կտորով մը կարելի է գլար մը շինել, այնպէս որ զուգահեռական գծեր ունենալու տեղ խոտորնակ գծեր ունենայ։ Այսպիսի պատկեր մը կոն կը կոչուի, կամ կոնոյդ։ Շաքարի գլուխ մը կոնաձեւ է, վարի մասը լայն իսկ գագաթը պզտիկ։



14. Կան առարկաներ ալ որ կէտ են, գնդակի մը պէս։ Նարինջը գրեթէ կլոր է, նոյնպէս Երկիրը գրեթէ կլոր է։ Կլոր առարկայ մը գունդ կ'ըսուի երբեմն, կամ գնդոյն։

15. Կան ձեւեր որ ձուաձեւ են, այսպէս.



Ձուաձեւը կ'ըսուի նաեւ ձուաձիր, որ բոլորովին գնդաձեւ

կամ բոլորաձև չէ . կը նմանի գունդի մ'որու երկու կող-մէն քաշած ըլլաս ։ Հաւկիթ մը ձուաձև է կամ ձուա-ծիր . բայց կատարեալ ձուաձև չէ , վասն զի անոր մէկ կողմը սովորաբար միւս կողմէն աւելի պզտիկ է ։

**16.** Ամէն տղայ գիտէ թէ ինչ է տափակ կամ շիտակ երես ։ Սեղանը տափակ է , սենեկի մը յատակը տափակ է (հարթ) նոյնպէս ուրիշ շատ բաներ ։ Սակայն կան առարկաներ որ բոլորովին տափակ չեն , բոլոր կամ ցցուած երես մ'ունին ։ Երբոր բանի մ'երեսը բոլորաձև կը ցցուի , կորնթարդ կ'ըսուի ։ Ահաւսիկ օրինակ մը .



**17.** Կան նաև առարկաներ որ երկու կողմէն կորնթարդ են , այսպէս .



Ակնոցներու ու դիտակներու ապակիները սովորաբար կորնթարդ են , այսինքն մէջ տեղն աւելի խիտ են քան թէ ծայրերը ։

**18.** Մակարդակները կրնան գոգաւոր ըլլալ ։ Գոգաւոր մակարդակ մը բոլոր խոռոչ մ'է կոնքի մը ներսի կողմին պէս ։ Առարկայ մը թէ ներսէն և թէ դրսէն գոգաւոր կրնայ լինել ։





(Աւելորդ է ըսել որ վերը դրուած ձևերը շատ պարզ ու նախնական ձևեր են ։ Դասատուն անշուշտ սև տախտակի կամ թղթի վրայ , կաւիճով կամ մատիտով ու կարկինով ուրիշ շատ խառն ձևեր կրնայ ցոյց տալ , ուղիղ և կոր գծեր քաշելով ։)

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ է ձև կամ կերպարան . ի՞նչ կերպով կը ճանչնանք . բաւակա՛ն է նայիլ ու շօշափել ։ 2. Ի՞նչ է ուղիղ գիծ . հորիզոնակա՞ն . ուղղահայեա՞ց . խոտորնակ կամ շե՞ղ . գծէ տախտակին վրայ այդ ձևերը ։ 3. Ուղիղ գծի մը վրայ ցցուած ուրիշ ուղիղ գիծ մը ի՞նչ կը շինէ . անկիւնը ե՞րբ սուր կ'ըլլայ . ե՞րբ բութ ։ 4. Բազմանկիւն ի՞նչ է . հապա զուգահեռագիծը ։ 5. Երեք ուրիշ գծով ի՞նչ կրնաս շինել . վեցանկիւնն ի՞նչ է . ութանկիւնը ։ 6. Ցոյց տուր առարկաներ որ ուղիղ գծեր ունենան . ի՞նչ է խորանարդ ձևը . գծէ ։ 7. Բուրգը՞ . գագաթը կամ սուրը ո՞ր է . հիմը ։ 8. Ամէն գիծ ուղի՞ղ է . ցոյց տուր կոր գծեր առարկաներու վրայ ։ 9. Կոր գիծն ի՞նչ անուն ունի . ի՞նչ է շրջանակ . տրամագիծ . շառավի՞ղ . կիսաբոլորա՞կ . գծէ բոլորն ալ ։ 10. Նոր լուսինն ի՞նչ ձև ունի ։ 11. Խաղողակ մը ի՞նչ ձև ունի . նկարագրէ . անունը տո՛ւր ։ 12. Ի՞նչ է կոնը . օրինակ ։ 13. Նարինջն ի՞նչ ձև ունի ։ 14. Ձուաձևն ի՞նչ է . ուրիշ ի՞նչ կ'ըսուի ։ 15. Հաւկիթը կատարեալ ձուաձև՞ է ։ 16. Ցոյց տուր տափակ երեսներ կամ մակերևոյթներ . ի՞նչ է կորնթարդը . գծէ ։ 17. Ակնոցի ապակիներն ի՞նչ ձև ունին ։ 18. Գոգաւորն ի՞նչ է . կրկին գոգաւոր առարկան ի՞նչ է ։

## ԱՌԱՐԿԱՅԻՑ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՉԱՓԸ

1. Առարկաներն այլ և այլ մեծութիւն ունին. ոմանք մեծ են, ոմանք պզտիկ: Բլուր մը տունէ մը աւելի մեծ է, մարդ մ'աւելի բարձր է քան տղայ մը: Առարկաներուն չափը կրնանք հասկընալ ինչ կերպով որ կը հասկընանք անոնց ձևը, այսինքն տեսնելով ու շօշափելով, նոյնպէս բաղդատելով: Առարկայ մը երեք յատկութիւն ունի մեծութեանը կողմէ. — երկայնութիւն, լայնութիւն և խանձրութիւն: Այս յատկութիւններն իրենց տարածութիւնները կ'ըսուին: Առարկայի մ'ամէնէ երկայն մասն իր երկայնութիւնն է: Գրքի մը գլխէն մինչև վարը իր երկայնութիւնն է, մէկ կողմէն միւս կողմն, իր լայնութիւնն է, մէկ կողքէն միւս կողքն իր թանձրութիւնն է:

2. Առարկաներուն երկայնութիւնը կրնայ չափուիլ: Զուխայի մը կտորն որչափ երկայն է, տեղէ տեղ որչափ հեռու է կրնանք չափել: Ամէն ժողովուրդ տարբեր չափեր ունի: Մենք կանգուն (արշին) ըսուած չափը կը գործածենք, այլ և այլ իրերու երկայնքը հասկընալու համար: Մէկ կանգունն ութ մասի բաժնուած է, ամէն մէկը րուպ կ'ըսուի:

3. Հեռաւորութիւն մը չափելու համար այլ և այլ չափեր կը գործածուին, ինչպէս՝ ֆարսախ, մղոն, ֆարսախ և այլն:

4. Առարկաներուն բարձրութիւնը կը չափուի ինչպէս կը չափեն երկայնութիւնը: Կարող ենք դռներու, պատուհաններու, տուներու բարձրութիւնը չափել, նոյնպէս լեռներու բարձրութիւնը: Կան տուներ որ տասը, քսան մինչև երեսուն կանգուն բարձր են. կան բլուրներ որ մէկ մղոն և աւելի բարձրութիւն ունին: Առարկաներուն վերէն վար եղած երկայնութիւնը խորութիւն կ'ըսուի, որ բարձրութեան պէս կը չափուի: Կան հորեր որ տասը, քսան կանգուն խորութիւն ունին, իսկ ծովահանքները շատ աւելի խորունկ են:

5. Քանի մը քարեր աւելի ծանր են քան ուրիշ քարեր: Մեծ քար մ'աւելի ծանր է քան փոքր քար մը. երկաթի կտոր մ'աւելի ծանր է քան նոյնչափ փայտի կտոր մը: Կան քարեր որ իրենց կշռին համեմատ գին ունին, և այդ կշիռն իրենց ծանրութեան չափն է: Ծանրութեան սովորական չափը օխան է, որ 400 դրամի բաժնուած է: Ամէն խանութպան ու շաքար, խահվէ, թէյ և ուրիշ ուտելիք կը ծախեն այս չափը կը գործածեն:

6. Հեղուկ նիւթերն ալ իրենց քանակութեան նայելով կը չափուին: Ամէնէ սովորական չափը մեր մէջ օխանոց ամանն է, որ այլ և այլ բաժանումներ ունի թանձր բաներու չափին պէս:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ամէն մարմին նոյն մեծութիւնն ունի՞. օրինակով բացատրէ. Ինչպէս կը համեմատես առարկայ մը մեծութիւնը. Քանի՞ ուղղութեամբ կը համեմատես մեծութիւնը. օրինակ: 2. Երկայնութեան չափն ի՞նչ է. ամէն տեղ միշտ է. քանի՞ մաս կը բաժնուի կանգունը: 3. Ինչո՞վ կը չափուի հեռաւորութիւնը: 4. Ինչո՞վ բարձրութիւնը. ի՞նչ է խորութիւնը. օրինակ: 5. Ամէն մարմին մի և նոյն ծանրութիւնն ունի՞. օրինակ. Ծանրութեան չափն ի՞նչ է. որչափ կը բաժնուի: 6. Հեղուկ նիւթերն ի՞նչպէս կը չափուին:

## ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ — ԼԵԶՈՒ

1. Մարդ իր միտքը կամ գաղափարը կը բացատրէ ձայներ հանելով բերնէն։ Այս ձայները հանելու համար գլխաւոր գործիքը **լեզուն** է։ Այս ձայները զատ զատ **բառեր** են որով **խօսք** կը շինուի։ Խօսելու կարողութիւնը մարդ միայն ունի։ Անբաները, թռչուններն և ուրիշ կենդանիներ չեն կրնար մեզի պէս խօսիլ. իրաւ է որ զգացում ունին, բայց չեն կրնար այդ զգացումները բառերով բացատրել։

2. Ամեն կենդանի բան մը յայտնելու համար իրեն յատուկ ձայնը կամ **ճիչ** ունի։ Ձին կը վրնջէ, շունը կը հաջէ ու կը մռմռայ, աքլորը կ'երգէ, հաւը կը կարկաչէ ու կը գրգայ, կովը կը բառաչէ, ոչխարն ու գառնուկը կը մայէ, առիւծը կը մռնչէ, գայլը կ'ոռնայ, աղուէսը կը կաղկանձէ, մուկը կը շչէ, գեղձանիկը կ'երգէ, ծիծեռնիկը կը ճչէ, ճնճղուկը կը ճռուողէ, ագռաւը կը կռկռայ, մեղուն կը բզզայ, աղաւնին կը մնջէ, կատուն կը մլաւէ, խոզը կը խռնչէ, հնդկահաւը կը ղօղանջէ, սիրամարգը կը ճչէ, էշը կը զռայ, բադը կը կարկաչէ, բուն կը գոչէ, գորտը կը կռնչէ և օձը կը սուլէ։ Այս տեսակ ձայներով կենդանիները զուարճութիւն, կամ ցաւ, կամ բարկութիւն կամ երկիւղ կը յայտնեն, և երբեմն իրարու ձայն կուտան։

3. Անասուններուն հանած ձայներն երբեմն կենդանիներու կամ թռչուններու լեզու կը կոչեն, բայց շատ անկատար լեզու մ'է։ Կան կենդանիներ, ինչպէս պապակայն, որոց բառեր կը սորվեցնեն, բայց այդ բառերուն իմաստը չգիտեն, այլ միայն գոց կ'ըսեն իրենց սորվածը։



4. Կենդանիները խորհիլ և խօսիլ չկրնալով շատ աւելի ստորին վիճակի մէջ կը գտնուին մարդիկներէն։ Չեն կարող իրարու ըսել թէ ո՛ւր ծնած են, և քանի՛ տարեկան են, և ի՛նչ անուն ունին։ Ուստի չեն կրնար զիրար կրթել կամ երջանիկ ըլլալու խորհուրդներ ունենալ։ Թէպէտ երբեմն կը յաջողինք անասուններուն այլ և այլ խաղեր սորվեցնելու, սակայն մեքենապէս կը կատարեն այդ խաղերը։

5. Խօսելու ձիրքը մարդու միայն տրուած է։ Մարդ մտածելու կարող է և լեզու ունի իր մտածմունքը յայտնելու։ Լեզուն և կոկորդը **խօսքի գործարաններն** են։ Կան մարդիկ որ չեն կարող խօսիլ և ասոր համար **համր** կ'ըսուին։

6. Մեր գաղափարները խօսելով իրարու կը յայտնենք։ Ինչ որ լսած ենք մեր պապերէն կրնանք պատմել, և այն մարդիկ որ հմուտ են և շատ բան սորվեր են, կրնան պզտիկներուն ըսել շատ բաներ զոր թերևս երբեք չպիտի գտնէին։ Այսպէս մարդիկ իրենց գիտցածն իրարու հաղորդելով, ամեն մէկ նոր սերունդ իրմէ առաջ եղող սերունդէն աւելի գիտուն կ'ըլլայ, և այս կերպով մարդկային միտքն աստիճանաբար կը զարգանայ։

7. Ամեն անձինք խօսիլ կը սորվին երբոր դեռ շատ պզտիկ են, իրենց մօրը միջոցաւ։ Այս պատճառաւ իր մօրմէն ամենէ առաջ մարդուս սորված լեզուն իր **մայրենի լեզուն** կ'ըսուի։ Ամեն մարդիկ պարտաւոր են լաւ սորվիլ իրենց մայրենի լեզուն։ Միշտ յստակ և մաքուր խօսիլ պարտաւոր են, և ամեն պարագայի մէջ միշտ ճշմար-

տութիւնը խօսելու պիտի ջանան։ Պէտք չէ որ երկդիմի բաներ ըսեն, և ստախօսութիւնն ամենէ վատ մոլութիւնն է։ Ամեն մարդ, ծեր ու կին, աղջիկ ու տղայ, հարուստ ու աղքատ անվայելչ խօսքեր ըսելու չեն, և միշտ քաղցրութեամբ խօսելու են իրարու հետ, որպէս զի իրարու սիրտ չկոտրեն, ծանր խօսքեր ըսելով։

8. Գրեթէ ամեն ազգ իր բնիկ լեզուն ունի, այնպէս որ երկրի մը բնակիչները չեն կրնար ուրիշ երկրի մը բնակիչներուն ըսածը հասկընալ։ Մեր խօսած լեզուն հայերէն լեզու կ'ըսուի, և ամենէ առաջ այս լեզուն կը սորվինք։ Գաղղիայի մէջ խօսուած լեզուն ֆրանսերէն է, Անգլիացին անգլիարէն կը խօսի, Թուրքերը Թուրքերէն։

9. Սովորաբար այն լեզուներն որ չեն խօսուիր մեռած լեզուներ կը կոչուին, և միայն ուսումնական մարդիկ զանոնք կը սորվին։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչպէս իրարու միտք կը հասկըցընեն մարդիկ. կենդանիները լեզու ունի՞ն։ 2. Ի՞նչպէս կը խօսին կենդանիները. ըսէ մէկ քանի կենդանիներու խօսելու կերպը. ի՞նչ կը յայտնեն այս ձայներով։ 3. Ի՞նչ է անասնոց լեզուն. պատճառն և ուրիշ կենդանիներ խօսիլ գիտե՞ն։ 4. Անխօս կենդանիները մարդիկներէ վե՞ր են. ուրիշ ի՞նչ կողմէ կենդանիները մարդիկներէ վար են. կարո՞ղ են շիտակ քալել։ 5. Ի՞նչով խօսելու ձիրք ունինք. որո՞նք են խօսքի գործարանները. համրն ի՞նչ է։ 6. Խօսքով ի՞նչ կ'ընենք. ի՞նչ օգուտ ունի խօսիլը։ 7. Ամեն ազգին տղաք պարտաւո՞ր են իրենց մայրենի լեզուն սորվիլ. ինչո՞ւ համար։ 8. Ամեն ազգ լեզու մ'ունի՞. լեզուներով որոշէ քանի մ'ազգեր։ 9. Ի՞նչ կ'ըսուին հին լեզուները։



## ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏ — ԳԻՐՔ

1. Գրելու համար տեսակ մը նշաններ կը գործածենք որ ձայնական լեզուն կը նշանակեն։ Այս նշանները այբուբենի տառերն են։ Ամեն մէկ ձայն իր յատուկ տառը կամ գիրն ունի, որ միասին գալով կը շինեն վանկեր և վանկերէ ալ կը շինուին բառեր։ Կան բառեր որ մէկ վանկ ունին, ինչպէս հաց, ջուր, բայց կան բառեր ալ որ աւելի երկայն են, աշակերտ, որ երեք վանկ ունի։ Տառեր իրարու միացընելը հեգել է։ Երբ քանի մը բառեր իրարու այնպէս կը միացընենք որ նշանակութիւն մ'ունենայ, բոլորը մէկ խօսք կամ նախադասութիւն կը շինեն։ Ամեն տղայ բնականապէս խօսիլ կը սորվի իր ծնողքէն, իսկ վարժութեամբ գրելու ալ կ'ըսկսի, և այսպէս երկու կերպով կրնայ իր միտքը յայտնել, բանաւոր ու գրաւոր կերպով։

2. Այս երկու կերպն ալ իր կանոնն ունի, որ լեզուէն յառաջ կուգայ. այս կանոնը քերականութիւն կ'ըսուի։ Տղայ մը առանց քերականութիւնը գիտնալու կը խօսի, բայց առանց գիրերը ճանչնալու ու գրելու չկրնար ոչ կարդալ և ոչ գրել։ Պէտք է միշտ գիտնայ թէ ինչ է բառի մը ցոյց տուած առարկան, որ ամեն բառն իր յարմար տեղը գործածէ, ապա թէ ոչ սխալ կը խօսի։ Ասոր համար աշակերտ մ'երբոր բառ մը կը լսէ, պէտք է որ հարցընէ թէ ինչ բանի պատկերն է այդ բառը։ Երբոր ծառ ըսեմ և չգիտնամ թէ ծառն ինչ տեսակ առարկայ է, մինակ բառ մը, ձայն մը սորված կ'ըլլամ և չէ թէ իր մը։

3. Ուղիղ գրելու համար ուրիշ պայման մը կայ, այս է կէտադրութիւնը։ Որովհետեւ կարելի չէ մէկ շնչով երկար խօսք մ'արտաբերել կամ առանց դադարումի երկար խօսք մը կարդալ կամ գրել, բնական է որ իմաստին նայելով խօսքի մ'այլ եւ այլ տեղերը կանգ առնենք եւ բառերու մէջ կամ վերջը կէտեր դնենք։ Այսպէս կէտեր գործածելը կէտադրութիւն կ'ըսուի։ Կէտերը մանր նշաններ են որ իմաստները բաժնելու կ'օգնեն։ Ասոր եւ այլ կէտեր կան, ինչպէս Բութ՝ որ բառի մը վերջի ձայնը կը դրուի, որպէս զի նախորդ բառ մը՝ նոյն խօսքին մէջ՝ յաջորդ բառէն զատէ՝ իրարու հետ կապակցութիւն չունենալով. (Ով որ ծոյլ է՝ պատիժ կ'ընդունի)։ Ստորակէտ այսպէս , որ ետեւէ ետեւ կրկնուած բառերու վերջը կը դրուի կամ զատ զատ կարճ խօսքերու վերջն որ նախադասութիւն մը կ'ամբողջացնեն, (ոսկին, արծաթը, երկաթը եւ պղինձը մետաղ են։ Ես կը կարդամ, եղբայրս կը գրէ, քոյրս կար կը կարէ)։ Միջակէտ . որ գլխաւոր խօսքեր իրարմէ կը զատէ (Տունէն ելայ դպրոց եկայ. դաս ինծի տուաւ)։ Վերջակէտ ։ որ ամբողջ խօսքի մը վերջը կը գործածուի (Դուն ո՞ւր էիր, երբ ես եկայ։)

4. Երբ բութ կայ պէտք է թեթեւ կանգ մ'առնել եւ ապա շարունակել. ստորակէտին քիչ մ'աւելի կանգ առնելու է. միջակէտին ալ աւելի. իսկ վերջակէտին՝ կատարեալ հանգիստ է։

5. Ուրիշ նշաններ ալ ունինք, ինչպէս ապաթարց ՚ որ դուրս ձգուած ձայնաւորի տեղը կը դրուի (քանի մ'անգամ). Չակերտ « որ ուրիշի կողմէ ըսուած խօսքին սկիզբն ու վերջը կը դրուի (ըսաւ «Գացէ որ հայրս տեսնեմ»։) Փակագիծ ( ) որ երկրորդական բառի կամ խօսքի



երկու կողմը կը դրուի, իբրեւ բացատրութիւն (Մանկիկը կուլար (ուրիշ միջոց չունէր) հաց ուտելու համար)։ Պարոյկ ՞ որ հարցման նշան է (Ո՞ւր է գիրքդ)։

6. Գրութիւնը շատ օգտակար է մեզի։ Գիր գիտցողը կարող կ'ըլլայ իր մտածմունքը թղթի վրայ գրել կամ գիրք ընել եւ ապա ուրիշ հեռաւոր մարդու ղրկել ու տալ որ կարդայ։ Այս կերպով մեր բոլոր խորհուրդները տեղէ տեղ ու դարէ դար յաջորդ սերունդին կ'անցնին։ Գրել գիտցողը կրնայ ուրիշ բարեկամի մը գրել թէ ինչ կ'ընէ, ինչ կը փափաքի ընել, թէեւ այդ բարեկամը հեռու ըլլայ։

7. Մարդիկ սովորաբար գրչով ու մելանով թղթի վրայ կը գրեն, բայց գրքի տառերը գրելու տառերէն տարբեր ձեւ ունին։ Երբոր մէկը նամակ մը կը գրէ եւ անոր տակն իր անունը կը դնէ, կը ստորագրէ։ Նամակը ծալլելէն ետեւ կը գոցեն եւ անոր վրայ կը գրեն այն մարդուն անունն որու պիտի ղրկուի նամակը, նոյնպէս բնակած քաղաքը։ Ասոր կ'ըսեն հասցէ։ Ետքը նամակը թղթատարը կը ձգեն որպէս զի հասցէին տրուի։

8. Գրելու համար կը գործածուի երբեմն մատիտ որ սեւ կապարէ շինուած է, բայց անով գրուած գիրը դիւրաւ կ'աւրուի առաձգական խէժով։ Կարելի է նաեւ թերթաքարի կտորով մը գրել գրաքարի վրայ։ Բայց աւելի աղէկ է թղթի վրայ գրելը գրչով։ Հին ատեն՝ մարդիկ ոչխարի բարակ կաշիի վրայ գիր կը գրէին, նոյնպէս ծառերու բարակ կեղեւներու ու տերեւներու վրայ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Գրելու համար ի՞նչ կը գործածուի. Վանկն ի՞նչ է. Խօսքն ինչէ՞ կը շինուի. Ի՞նչ է բառ մը. Ի՞նչ է նախադասութիւնն. առանց [illegible] գիտնալու [illegible]

մը կրնայ խօսիլ։ 2. Կէտերն ինչ են. ինչո՞ւ կը գործածուին։ 3. Նշանակէ՛ գլխաւոր կէտերը. ամէն մէկն երբ և ո՞ւր կը գործածուի. օրինակներով բացատրէ։ 4. Ամէն մէկուն վրայ որչափ կանգ առնելու է։ 5. Ուրիշ ինչ նշաններ կան. ապաթարցն ինչ է. Չակերտը՞. փակագիծը՞. պարոյկը՞։ 6. Ի՞նչ օգուտ ունի գիրը։ 7. Գրքի ու գրելու տառերը նոյնն են. ի՞նչ է տարբերել. հարցը՞. Թղթատա՞ն։ 8. Միայն գրի՞չ կը գործածուի գրելու համար. Թուղթէ զատ գրելիք չկա՞յ։

---

## ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Հին ատեն՝ խելացի մարդիկ այլ և այլ բաներու վրայ կը գրէին գիրքերու մէջ որ տեսակ մը տերևներէ կամ մագաղաթէ շինուած էին։ Մագաղաթն ալ ոչխարի ողորկ ու ճերմակ կաշի է։ Ուրիշ մարդիկ ալ այդ գիրքերը կ'օրինակէին ու այլ և այլ օրինակներ կը գրէին։ Այսպէս շատ աշխատանք ու նեղութիւն քաշել պէտք էր այս գիրքերը գրելու, անկէ զատ շատ ժամանակի ալ կորուստ կ'ըլլար. ասոր համար շատ գիրք չկար և եղածներն ալ չափէն աւելի սուղ էին, այնպէս որ մինակ հարուստ մարդիկ կրնային ծախու առնել։ Մինակ ձեռագիր Աստուածաշունչ մը ատենօք քանի մը հարիւր ոսկիով կ'առնուէր։ Այսպէս շատ դարեր անցան մինչև որ տպագրութեան արուեստը գտնուեցաւ, 1437ին, այսինքն չորս հարիւր քառասուն տարիէն աւելի առաջ։ Տպագրութեան արուեստը հնարողն եղաւ



Գերմանացի մը, Կութէմպէրկ անունով, որ Մայանս քաղաքը կ'ապրէր։ Այս քաղքէն տպագրութեան արուեստն ելնելով քիչ ատենէն Եւրոպայի այլ և այլ տեղերը տարածուեցաւ։

2. Տպագրելու համար ձուլած տառեր ու մամուլ պէտք է։ Այս տառերը կապարէ շինուած են։ Այրուբենի ամեն մէկ տառն այնպէս թափուած է որ թղթի կտորի մը վրայ կոխուելով կրնայ տպուիլ։

3. Տառերը՝ գրանոցի այլ և այլ խորշերու մէջ գրուած են, այնպէս որ իւրաքանչիւր խորշ մի և նոյն տառերէն շատ մը կը պարունակէ, և երբոր պէտք ըլլայ բառ մը շարել, խորշէ մը տառ մը, ուրիշ խորշէ ուրիշ տառ մը կ'առնեն մինչև որ թափծու տառերով խօսքը շինեն. յետոյ այս բառերը քովէ քով բերելով ամբողջ երեսներ կը կազմուին։

4. Երբոր շարուած տառերով երեսները կը շինեն, մամլոյ վրայ կը դնեն և կակուղ գլանի մը միջոցաւ անոնց վրայ մելան կը քսեն։ Ետքը՝ թղթի թերթ մ'երեսներուն վրայ կը դնեն և երբոր մամուլը կը շարժեն ու կը կոխեն, շարուած տառերը կը տպուին։ Յետոյ ուրիշ թերթ մը կ'առնեն կը տպեն և այսպէս հետզհետէ ուրիշ թերթեր ալ տպելով հարիւրաւոր ու հազարաւոր օրինակներ կը հանեն։ Ամեն թերթերուն մէկ երեսը տպելէն ետև՝ տպիչը կը դարձնէ միւս երեսն ալ կը տպէ մինչև որ բոլոր թերթերը լմննան։ Այս թերթերը տպելէն ետև՝ շարուած երեսները վար կ'առնեն և տառերը մաքրելով նորէն գրանոցներու մէջ կը դնեն, որմէ առնելով գրաշարը նոր թերթեր կը շարէ։

5. Կան մամուլներ որ պարզ են, և մարդու ձեռօք

կը գործածուին, կան նաև մամուլներ որ շոգեշարժ են և աւելի շուտ ու շատ կը տպեն: Այս արագ ու պարզ կերպով ամէն տեսակ գիրքեր կը տպուին, զատ զատ թերթերով և շատ աժան գնով: Հիմակ Կտակարան մը կարելի է ստանալ քառասուն կամ յիսուն ղուրուշով, այնպէս որ ամէն աղքատ մարդիկ ալ կրնան առնել կարդալ, մինչդեռ ատեն մը հազիւ քսան երեսուն ոսկիով կ'առնուէր, երբոր տպագրութեան արուեստը դեռ հնարուած չէր:

6. Այն մարդիկ որ գիրք կը գրեն հեղինակ կամ մատենագիր կ'ըսուին: Անոնք որ տպագրութեամբ կ'զբաղին գրաշար, տպիչ, մելանատու կ'ըսուին: Գիրքի մը թերթերը տպուելէն և ծալլելէն ետև՝ իրարու հետ կը կարեն և հաստատ պահելու համար ծածկոցներու մէջ կ'ամփոփեն. անոնք որ այսպէս գիրքեր կը կարեն կազմարար կ'ըսուին: Գիրքերը կազմարարէն առնելէն ետև՝ շուկայ կը տանին և գրավաճառին կուտան ծախելու համար:

7. Այն գիրքերն որ քիչ թերթերէ կը բաղկանան և առանց կազմի իրարու հետ կարուած են՝ գրքոյկ կ'ըսուին: Այն գրատետրներն որ այլ և այլ նիւթի վրայ կը խօսին և որոշեալ ժամանակներ կը հրատարակուին պարբերական թերթեր կ'ըսուին: Հանդէսները պարբերական թերթեր են: Լրագիրն ալ տեսակ մը պարբերական է, որ շաբաթն անգամ մը կամ ամէն օր կը հրատարակուի: Լրագիրները լուրեր կը հրատարակեն, այսինքն մեր երկրին կամ ուրիշ երկիրներու մէջ պատահած դէպքերուն վրայ տեղեկութիւններ կուտան: Այն մարդիկ որ պարբերական թերթերու կամ լրագիրներու համար նիւթ կը պատրաստեն ու յօդուածներ կը գրեն խմբագիր կամ հրատարակիչ կ'ըսուին:



8. Երկու տեսակ գրուածք կայ. արձակ ու բանաստեղծական: Շատ գիրքեր արձակ գրուած են: Արձակ շարադրութիւնն իրարու ետև գրուած տողեր են և տողերը վերէն վար շարունակ կ'իջնեն ու ամբողջ երես կը կազմեն, ինչպէս այս գիրքին մէջ: Բանաստեղծութիւնը սովորաբար ոտանաւոր կը գրուի, որու նիւթը շատ անգամ երևակայական է: Ոտանաւորի մէջ ամէն մէկ տող տասն կամ տասներկու վանկ կ'ունենայ և ամէն մէկ տող գլխագրով մը կ'սկսի: Ոտանաւոր գրուած բան մը քերթուած կ'ըսուի. իսկ հեղինակը բանաստեղծ: Ամէն օրհներգ, շարական, երգ, սովորաբար քերթուած են: Շատ անգամ քերթուածի մը տողերուն ծայրը նոյն ձայնը կը հանէ, նոյն յանգն ունի:

9. Տեսակ տեսակ տառեր կան որով գիրքեր կը տպեն. այս տառերը բոլորագիր, շեղագիր, նոտր կ'ըսուին: Ու հասարակ բոլորագիր տառերով կը տպուին գիրքերը, ինչպէս այս գիրքին տառերը: Երբեմն բառ մը կամ մի շատ տողեր նոտր գրով կը տպուին, ցոյց տալու համար որ կարևոր բաներ են, կամ ուշադրութեան արժանի են: Այն գրուածքը լաւ է որ պարզ ոճով է և դիւրաւ կը հասկցուի:

10. Կան բառեր որ գրուելու ատեն կը կրճատուին, ինչպէս օրինակի համար ՟յ, որ ըսել է, այսինքն, ևն, որ ըսել է և այլն: Գիրքերուն ետևը սովորաբար Վերջ կը գրեն, ցոյց տալու համար որ գործը վերջացած է: Ժողովրդեան մը բոլոր գիրքերը մէկտեղ առնելով՝ գրականութիւն կ'անուանենք: Ինչպէս Հայոց մէջ գտնուած գիրքերն հայ գրականութիւն կ'ըսուի, Անգլիացւոցը, անգլիական գրականութիւն և այլն: Հին կամ դպրոցի գիրքերը դասական կ'ըսուին: Գիրքեր կան որ շատ օգտա-

կար բանիրու վրայ գրուած են. խելացի տղան որ կ'ու-զէ միշտ բան սորվիլ այդ տեսակ գիրքեր կը կարդայ ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Հին ատեն ինչ բանի վրայ կը գրուէին գիրքերը. շատ կայի՞ն. ինչո՞ւ. մինչեւ որ ժամանակ գիրքերն հազուագիւտ ու սուղ էին ։ 2. Շապէն ինչ է. ինչ մետաղէ շինուած են տպագրութեան տառերը ։ 3. Ո՞վ կը գտնէ. ինչ կերպով կը շարեն. ինչպէս կը տպեն. նոր գիրքեր տպելու համար միշտ նո՞ր գիր պէտք է. մէկ հատ միայն կը տպուի գիրք մը ։ 4–5. Քանի՞ տեսակ ձեռագիր կայ. հիմակ գիրքերն ինչո՞ւ աժան են ։ 6. Ի՞նչ է ձարէնագիրը. գրաշարը. տպիչը. մելանաթո՞ւղը. կազմարարն ինչ կ'ընէ. գրածո՞ւրը ։ 7. Ի՞նչ է գրատետր. պարբերակա՞նը. լրագրական թերթերն ինչ կ'ըսուին. մէկ տանի հատ յիշէ. խմբագիրն ինչ կ'ընէ և ինչ պարբերութեան անի ձարէնագրէն ։ 8. Ի՞նչ պարբերութեան կայ արդեօք շարադրութեան ու ներկուածի մէջ ։ 9. Քանի՞ տեսակ տառեր կան. ամփոփաբար գործածուած տառերն ինչ կ'ըսուին ։ 10. Ի՞նչ է բառ կրճատել. գրականութեան ըսելով ինչ կը հասկընաս. դասական գիրքերն ինչ են ։

———

ՀԱՄՐԱՆՔ — ԹԻՒ

1. Առարկաները համրելու համար պէտք է թիւ գիտնալ ։ Նոյնպէս թիւ գիտնալու է որ բան մը որ-



չափ սատակ կ'արժէ ըսենք ։ Համրելու սովորական կերպը բառերով համրելն է. ինչպէս երբոր մատերդ կը համրես, ինչ կ'ըսես — մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն, ութ, ինն, տասն ։ Բայց գրքի կամ գրաքա-րի վրայ գրելու համար աւելի կարճ կերպ մը կայ քան բառերով համրանքը ։ Վասն զի բառեր գրելու տեղ տեսակ մը նշաններ կը գործածեն ։ Միայն տասը նշան կայ, որ են, իրենց անուններով.

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 0 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| մէկ, | երկու, | երեք, | չորս, | հինգ, | վեց, | եօթն, | ութ, | ինն, | ոչինչ ։ |

Ամէն թիւերը, որչափ մեծ ըլլան, միայն այս նշաններով կը գրուին, ինչպէս որ բոլոր բառերը գրելու համար տառեր կը գործածուին ։

2. Վերջին նշանն այս է 0, որ սովորաբար ոչինչ կամ զրօ կը նշանակէ. վասն զի երբ մինակ է, բան մը չնշանակեր և համրանք մը չցուցըներ ։ Բայց երբոր զայն կը գրենք 1էն ետքը, այսպէս 10, տասը համրանքը կը շինենք, եթէ 2էն վերջը գրենք, քսան կը շինենք, այսպէս զրօն (0) ուրիշ թիւերու ետևը գրուելով աւելի մեծ համրանք կուտայ ։ Երբոր երկու զրօ դնենք 1էն ետքը, կ'ըլլայ 100, որ կը նշանակէ հարիւր. իսկ եթէ 1էն ետք երեք հատ զրօ գրուի, 1000 հազար կը նշանակէ ։

3. Այս թիւերը 1, 3, 5, 7, 9, 11, 13 և այսպէս շարունակաբար անզոյգ թիւեր են ։ Իսկ 2, 4, 6, 8, 10, 12 և այսպէս շարունակ՝ զոյգ թիւեր կ'ըսուին ։

4. Թիւերը հետևեալ կերպով կը համրեն.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | մէկ | 11 | տասնմէկ | 21 | քսանմէկ |
| 2 | երկու | 12 | տասներկու | 22 | քսաներկու |
| 3 | երեք | 13 | տասներեք | 23 | քսաներեք |
| 4 | չորս | 14 | տասնչորս | 24 | քսանչորս |
| 5 | հինգ | 15 | տասնհինգ | 25 | քսանհինգ |
| 6 | վեց | 16 | տասնվեց | 26 | քսանվեց |
| 7 | եօթն | 17 | տասնեօթն | 27 | քսանեօթն |
| 8 | ութ | 18 | տասնութ | 28 | քսանութ |
| 9 | ինն | 19 | տասնինն | 29 | քսանինն |
| 10 | տասն | 20 | քսան | 30 | երեսուն |

Եւ այսպէս կը զանենք, 40 քառասուն, 50 յիսուն, 60 վաթսուն, 70 եօթանասուն, ութսուն, 90 իննսուն, 100 հարիւր, 101 հարիւր մէկ։ Այս թիւն ալ շարունակելով կը հասնինք հարիւրներու և հազարներու. 1,000 հազար, 10,000 տասը հազար, 100,000 հարիւր հազար, 500,000 հինգ հարիւր հազար, 1-000,000 մէկ միլիոն. հազար ութ հարիւր եօթանասուն ութ այսպէս կը գրուի — 1878։

5. Նոյնպէս թուանշաններ կը գործածեն առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն ցոյց տալու համար, ամէն մէկ թիւին վրայ երորդ կամ րորդ մասնիկն աւելցնելով, այսպէս,

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1երորդ | 2րդ | 3րդ | 4րդ | 5րդ |
| առաջներորդ, | երկրորդ, | երրորդ, | չորրորդ, | հինգերորդ, |
| 6րդ | 7րդ | 8րդ | 9րդ | 10րդ |
| վեցերորդ, | եօթներորդ, | ութերորդ, | իններորդ, | տասներորդ։ |

և այս կերպով բոլոր թիւերը կրնանք շարունակել։



6. Թուանշաններն հասարակ թիւեր կ'ըսուին, վասն զի սովորաբար համրելու համար կը գործածուին։ Հին ատեն տառերն ալ իբրև թուանշան կը գործածէին, բայց հիմակ միայն Հայոց թուականը, գրքերու գլուխները կամ քանիերորդ ըլլալը ցոյց տալու համար կը գործածեն։ Այլ և այլ աստիճան կամ կարգ ցուցնելու համար այսպէս կը գործածուին տառերը.

| | | |
|---|---|---|
| Ա. մէկ կամ առաջին | Ի. 20դ | Յ. 300 |
| Բ. երկրորդ | Լ. 30 | Ն. 400 |
| Գ. երրորդ | Խ. 40 | Շ. 500 |
| Դ. չորրորդ | Ծ. 50 | Ո. 600 |
| Ե. հինգերորդ | Կ. 60 | Չ. 700 |
| Զ. վեցերորդ | Հ. 70 | Պ. 800 |
| Է. եօթներորդ | Ձ. 80 | Ջ. 900 |
| Ը. ութերորդ | Ղ. 90 | Ռ. 1000 |
| Թ. իններորդ | Ճ. 100 | |
| Ժ. տասներորդ | Մ. 200 | |

Ինչպէս Հայոց թուականն, որ է ՌՅԻԷ (1327) նոյնպէս անուան ետեւը տառեր կը դնեն նոյն անուն թագաւոր քանի հատ ըլլալը յայտնելու համար։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Համրելու համար ի՞նչ կը գործածենք. համրելու քանի՞ կերպ կայ. բառերով ի՞նչպէս կը համրես. թիւերո՞վ. քանի՞ թուանշան կայ. գրէ՛ տախտակին վրայ։ 2. Ի՞նչ կը նշանակէ զրօ. ե՞րբ արժէք մ'ունի. քանի՞ մ'երենայ տալ։ 3. Ո՞ր թիւերը զոյգ կ'ըսուին. որո՞նք են անզոյգ թիւերը։ 4. Ի՞նչ կերպով կը համրեն թիւերը։ 5. Ո՞ր մասնիկը աւելցնելու է կարգ յայտնելու համար։ 6. Հասարակ թիւե-

րէն զատ՝ ուրիշ ինչ կը գործածուէր առէն մը. գրէ 35 տառերով. գրէ 1005 և այլն. Հիմա երբե՞ք կը գործածուին տառերն իբրև թուանշան։

---

## ԺԱՄԱՆԱԿ

1. Ամեն տղայ գիտէ թէ ինչ է առաւօտ։ Այն ժամանակն է երբ անկողնէն կ'ելնենք, երբ մեր զգեստները կը հագնինք, և երբ արևը կ'սկսի փայլիլ։ Ամեն մարդ գիտէ նաև թէ երբ գիշեր է։ Այն ժամանակն է երբ մենք անկողին կ'երթանք, երբ արևը մարը կը մտնէ, և մութը կը կոխէ։ Առաւօտէն մինչև միւս առաւօտ մէկ օր է։

2. Բոլոր օրը քանի մը մաս կը բաժնուի. առաւօտ, կէսօրէն առաջ, կէսօր, վերջը կուգայ կէսօրէն ետք, երեկոյն և գիշերը։ Մարդիկ առաւօտ կ'արթննան և նախաճաշիկ կ'ընեն։ Այնուհետև մինչև կէսօր կ'աշխատին, կէսօրին ճաշ կ'ընեն, յետոյ նորէն կ'աշխատին, կամ կը զուարճանան, մինչև երեկոյ, երբ ընթրիք կ'ընեն. գիշերը անկողին կը մտնեն և մինչև առաւօտ կը քնանան։ Կան եղանակներ երբ մութը շուտով կը հասնի իրիկունը. և որովհետև այն ատեն շատ կանուխ է քնանալու համար, ճրագ, կանթեղ և կող կը վառեն մարդիկ որպէս զի աշխատին կամ կարդան կամ իրենց ընտրած գործը կատարեն։

3. Օրը ժամերու բաժնուած է։ Ամեն օր քսանչորս



ժամ է։ Ամեն ժամ վաթսուն վայրկեան է, և ամեն մէկ վայրկեան վաթսուն րոպէի բաժնուած է։ Ժամերը համրելու համար առաւօտեան մէկէն կ'սկսինք մինչև կէսօր տասներկուքին, որ օրուան կէսն է, երբ արևն ամենէ բարձր կէտն է կամ միջօրէականն է։ Երբոր կէսօրուան տասներկուքին կը հասնինք այնուհետև նորէն մէկէն համրելու կ'սկսինք մինչև տասներկու։ Այս տասներկու ժամուն կէս գիշեր է։

4. Կարևոր է որ օրուան ժամերուն չափը գիտնանք, որպէս զի ճշգիւ իմանանք թէ ո՞ր ժամուն ու վայրկենին մէջ կը գտնուինք և ամեն բան ժամանակին կատարենք։ Ժամերը ճշգիւ համրելու համար մեծ ու պզտիկ ժամացոյցներ հնարուած կան։ Ժամացոյցները յետին ծայր հետաքրքրական գործիքներ են, որ ժամանակը ճշգիւ կը չափեն։ Ժամացոյցները շրջանակ ունին որու բոլորտիքը գրուած են 1էն մինչև 12։ Մէջ տեղէն երկու ասեղ կը շրջին թիւերուն վրայ. մէկը՝ կարճը, ժամերը կը ցուցնէ, միւսը՝ երկարը՝ վայրկեանները։ Երկար ասեղը շրջանակը կը բոլորէ մէկ ժամու մէջ, իսկ կարճն աւելի ծանր կը քալէ նոյն միջոցին կամ ժամէ ժամ կը դառնայ։ Երբոր կարճ ասեղը 12ին վրայ գայ կը նշանակէ կէսօր, երբոր ցորեկ է, կէս գիշեր՝ երբոր մութ է։ Ամեն տղայ պարտաւոր է համրել սորվիլ ժամացոյցին ժամերը որպէս զի աշխատելու և դպրոց երթալու ատենը գիտնայ։*

5. Տղայք օրուան ժամերը սորվելէն ետև՝ պէտք է որ սորվին նաև թէ ինչ է շաբաթը, ամիսը, տարին։

*Պէտք է ժամացոյց մը ներկայել տղոց և անոր ասեղը և թիւ ժամերը՝ կարելի եղածին չափ, բացատրել։

Շաբաթ մը, եօթն օր է — կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ։ Կիրակին շաբաթուան առաջին օրն է, որ հանգստեան օր է։ Բայց շաբաթուան միւս օրերը լուր օրեր են, այսինքն գործելու օրեր։ Մէկ ամիսը գրեթէ չորս շաբաթ է։

6. Տարին յիսուն երկու շաբաթ կամ 365 օր է։ Տարուան մէջ տասներկու ամիս կայ — յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր։ Յունուարի առաջին օրը տարուան առաջին օրն է կամ Կաղանդ է։ Բոլոր ամիսները նոյն թուով օրեր չունին։ Կան որ 30 օր են, կան որ 31 օր։ Երեսուն օր ունին ապրիլ, յունիս, սեպտեմբեր և նոյեմբեր, իսկ միւսներն 31. փետրուար միայն 28 օր է, բայց չորս տարին անգամ մը փետրուարը 29 օր կ'ունենայ, և այն տարին նահանջ տարի կ'ըսուի։

7. Տարին չորս եղանակ ունի — գարուն, ամառ, աշուն և ձմեռ — ամեն մէկն երեք ամիս կը տևէ։ Սովորաբար գարնան ամիսներն են, փետրուար, մարտ և ապրիլ. ամառուան ամիսներն են, մայիս, յունիս և յուլիս. աշնան ամիսներն են, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր. ձմեռուան ամիսներն են, նոյեմբեր, դեկտեմբեր և յունուար։

8. Տարի մ'անցնելէն ետև, ուրիշ տարի մը կ'ըսկսի և այսպէս հետզհետէ կը շարունակուի։ Քրիստոնեայք տարիները կը համրեն Քրիստոսի ծնունդէն, որ կ'ըսուի Քրիստոսի թուական։ Ամբողջ հարիւր տարին մէկ դար է։ Արդէն տասնութ դարը լմնցած է, և հիմա մենք կը գտնուինք տասնևիններորդ դարուն մէջ։ Երբոր



այսպէս կը գրենք, 1850, կամ 1856, կամ 1878, կ'ուզենք ըսել որ այսչափ տարի անցած է Քրիստոսի ծնելէն 'ի վեր։

9. Ինչ դէպք որ պատահի անոր ճշգրիտ ժամանակը կ'ըսուի թուական։ Երբոր նամակ մը գրենք, նախ կը նշանակենք մեր գտնուած քաղքին անունը, ամսուն անունն ու թիւը, և տարին։ Այսպէս, Իզմիր, 5 Նոյեմբեր 1878 կը ցուցնէ որ գրուածքը Իզմիրի մէջ եղած է նոյեմբերի 5ին և 1878 թուականին։ Երբեմն տարուան թուականին առջև Յ. Տ. գլխագիրները կը գրուին, որ ըսել է Յամի Տեառն։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ե՞րբ է առաւօտ. գիշե՞րը. օ՞րը։ 2. Օրը քանի՞ մաս կը բաժնուի. ե՞րբ է նախաճաշի՛ն, ճաշի ու ընթրիքի ժամերը. ճաշն ե՞րբ կ'ըլլայ։ 3. Օրը քանի՞ ժամ է. ժամը քանի՞ վայրկեան. վայրկեանը քանի՞ րոպէ. ի՞նչպէս կը համրենք օրուան ժամերը. ե՞րբ կէսօր է. ե՞րբ կէս գիշեր։ 4. Կարևո՞ր է օրուան ժամերը չափելը. ի՞նչ է ժամանակի չափը. ցուցարէ ժամացոյցը. ի՞նչ բանի կը ծառայէ։ 5. Ժամանակն ուրիշ բաժանմունք ունի՞. քանի՞ օր է շաբաթը. ըսէ օրերը։ 6. Քանի՞ շաբաթ մէկ տարի է. տարին քանի՞ օր է. քանի՞ ամիս կայ տարուան մէջ. ըսէ. ի՞նչ է Կաղանդը. ո՞ր ամիսներն 30 օր ունին. ե՞րբ փետրվար 29 օր կ'ըլլայ։ 7. Տարին քանի՞ եղանակ ունի. համրէ. ամեն եղանակ քանի՞ ամիս է. մայիս ո՞ր եղանակին մէջն է. դեկտեմբե՞ր. սեպտեմբե՞ր։ 8. Ի՞նչ է թուական. մենք ո՞ր թուականը կը գործածենք. ո՞ր ժամանակէն կ'սկսի. հարիւր տարին ի՞նչ կ'ըսուի. ո՞ր դարուն մէջն ենք։ 9. Նամակի կամ գրուածքի մը թուականն ի՞նչպէս կը գրուի։

## ԿԱԼՈՒԱԾՔ — ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ամէն մարդ քիչ շատ պիտոյք ունի։ Գլխաւոր պիտոյքն են հագուստ, ուտելիք, բնակարան։ Ասոնք հոգալու համար պէտք է որ մարդ աշխատի։ Աշխատանքը կալուածքի հիմն է. աշխատանքով է որ մարդ այլ և այլ բաներ կ'ըստանայ։ Ծուլութիւնը բան մը առաջ չբերեր։ Ի՛նչ որ կը տեսնենք, տուն, մշակուած արտեր, ցորեն, հաց, զգեստ, գիրք աշխատանքի արդիւնքն են և բոլոր մարդիկ աղքատ ու վայրենի պիտի մնային եթէ աշխատութիւն չըլլար։

2. Կան մարդիկ որ հարուստ են, տուներ և ուրիշ շատ բաներ ունին, թէպէտ անոնք չեն աշխատած այդ բաները վաստըկելու համար, հապա իրենց նախնիքներէն ժառանգած են, կան մարդիկ ալ որ չքաւոր են, իրենց օրական աշխատանքով ապրուստ կը ճարեն։ Բայց հարուստն ալ աղքատ կ'ըլլայ թէ որ չաշխատի։ Աւելի աղէկ է որ մարդ իր ճակտին քրտինքովը իր պիտոյքը հոգայ քան թէ յոյսը դնելով ուրիշի կամ ժառանգութեան վրայ որ կրնայ կորսուիլ։ Ուստի տղայք ալ պարտաւոր են որ իրենց աշխատանքին վստահին, որպէս զի իրենց պէտք եղածը հոգան, երբոր մեծնան։

3. Երբոր մարդ մ'իր աշխատանքով բան մը կը հանէ, կը շինէ կամ կ'արտադրէ, այդ բանն իրն է և մէկն իրաւունք չունի զայն ձեռքէն առնելու։ Ինչպէս, երբոր տղայ մը կաւ առնէ և անով գնդակ մը շինէ խաղալու համար, ուրիշ տղայ մ'իրաւունք չունի զայն իրմէ շորթելու կամ յափշտակելու։ Գնդակը՝ զայն շի-



նող տղուն կալուածքն է։ Կան տղաք որ փառեակներ կը սիրեն։ Եթէ տղայ մը զոյգ մը փառեակ ունենայ, անոնք իր ստացուածքն են, և եթէ անոնց համար ուտելիք առնէ, կերակրէ, հաւկիթներ ստանայ և այդ հաւկիթներէն ալ ուրիշ ձագուկներ ելնեն, այդ ձագուկներն ալ իր ստացուածքն են։ Անշուշտ կը բարկանայ եթէ չար տղայ մ'ելնէ իր փառեակները ձեռքէն առնել ուզէ։ Այդ չար տղուն պիտի ըսէ. «Այդ փառեակները իմ ստացուածքս են, իմս են. դու անոնց վրայ աշխատութիւն չունիս, ուստի քուկդ չեն։» Բայց եթէ չար տղան փառեակները նորէն յափշտակէ այն ատեն անոնց տէրը դատաւորին պիտի երթայ, չար տղուն վըրայ պիտի գանգատի և չար տղան պիտի պատժուի։

4. Ինչպէս որ տղան իր գնդակը կամ փառեակները կը պահպանէ, նոյնպէս մարդիկ իրենց կալուածքը կը պահեն։ Ամէն մարդ իրաւունք ունի իր ստացուածքը պաշտպանել, վասն զի երբոր չքաւոր մարդ մը գիտնայ որ աշխատելով կրնայ ստացուածքի տէր ըլլալ և թէ ուրիշ մը չկրնար իր ձեռքէն յափշտակելու, այն ատեն աւելի սրտով կ'աշխատի որ ունեցածն աւելցնէ։ Իսկ թէ որ գիտնայ որ իր աշխատութեան պտուղն ուրիշ մէկը պիտի առնէ ուտէ, այն ատեն բնաւ չպիտի աշխատի, իր բոլոր օրերը ծուլութեամբ պիտի անցընէ և շատ աղքատ վիճակի մէջ պիտի ապրի։

5. Կան մարդիկ որ տուներ ու հողեր ունին և կ'ըսուին հողատէր կամ կալուածատէր։ Բայց որովհետև այս մարդիկ չեն կրնար միշտ գործածել իրենց հողերն ու տուները, ուրիշներու վարձու կու տան։ Անոնք ալ ժամանակի մը համար հասոյթ կամ վարձք կը վճարեն։ Սովորաբար հողի հասոյթը կամ տան վարձքը տարուէ

տարի կամ վեց ամիսն անգամ մը կը վճարուի ։ Կան վարձուորներ ալ որ ամէն ամիս կամ շաբթէ շաբաթ տան վարձք կը վճարեն ։

6. Երբոր մէկն ուրիշին եղած բանն առնել ուզէ՝ պէտք է որ նախ հրաման խնդրէ կամ պէտք է որ զայն ծախու առնէ ։ Բնաւ պէտք չէ որ այն բանը գողնէ կամ բռնի կամ խարդախութեամբ ձեռք ձգէ, վասն զի այն ատեն այդ բանը գողցած կ'ըլլայ և ինքն ալ գող կ'ըլլայ ։ Աստուած պատուիրեց. մի՛ գողնար, և ամէն մարդ այս պատուէրը պարտաւոր է պահել ։ Կան տղաք որ կարծեն որ եթէ կորսուած բան մը գտնեն կրնան այդ բանը պահել ։ Բայց այդ գտնուած բանն կորսնցընողին ստացուածքն է և պէտք է շուտ մ'անոր դարձընել առանց վարձատրութեան, եթէ գտնողը պահէ գողութիւն ըրած կ'ըլլայ ։

7. Կան բաներ որ ամէն մարդու ստացուածքն են. բնութիւնը տուած է մեզի. օդն որ կը ծծենք, արեւուն լոյսն որ մեր վրայ կը փայլի, ջուրն որ կը խմենք և ուրիշ բաներ բնականապէս ձրի կը վայելենք ։ Ուրիշ բնական բաներ ալ կան որ մեր աշխատութեամբ օգտակար կ'ըլլան մեզի ։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ է պէտքը. ստացուածքի տէր ըլլալու համար ի՞նչ պէտք է. ծոյլն ի՞նչ կը շահի. մեր ունեցած բոլոր բաներն ինչի՞ արդիւնք են ։ 2. Ամէն մարդու նիւթական վիճակը նոյնն է. ինչո՞ւ հարստութիւններ կան. մարդ ի՞նչ բանի վրայ դնելու է յոյսը. հարուստ մարդու որդին պէտք է աշխատի՞ ։ 3. Ի՞նչ կերպով մարդիկ բանի մը տէր կ'ըլլան. եթէ քրտինքով մը շինես այդ որո՞ւն ստացուածքը կ'ըլլայ. ուրիշ օրինակ մը տուր. ստացուածքին գործն ի՞նչ է ։ 4.



Եթէ աշխատանքին պտուղը ուրիշը յափշտակէ ի՞նչ կ'ըլլայ. եթէ աշխատանքը դադրէր աշխարհ ի՞նչ կը դառնար ։ 5. Հաւաքել ի՞նչ է. հասոյթ. վարձք ։ 6. Ի՞նչ բան է գողութիւնը. եթէ կորսուած բան մը գտնես կրնա՞ս պահել. ինչո՞ւ ։ 7. Ի՞նչ բան ձրի կը վայելենք. փայտը բնական տուրք մ'է. աշխատութեամբ ինչպէս օգտակար կ'ըլլայ ։

———

## ԳՆԵԼ — ԾԱԽԵԼ — ԴՐԱՄ

1. Այն մարդիկ որ ապրանք ունին՝ ուրիշներուն կը ծախեն երբոր անոնք ուզեն գնել ։ Մարդիկ դրամով կ'առնեն բան մը կամ կը ծախեն ։ Եթէ դրամ չըլլար, այն ատեն պիտի ստիպուէինք ապրանք մը ուրիշ ապրանքի հետ փոխել և այս բանս շատ դժուարութիւններ պիտի պատճառէր ։

2. Դրամը մետաղեայ պզտիկ կտորներ են, որոշ ձեւով կը կոխեն ։ Ստակի համար երեք տեսակ մետաղ կը գործածեն մարդիկ. անոնք են ոսկի, արծաթ և պղինձ ։ Այս մետաղները ստակ կտրելու համար ընտրուած են, ինչու որ հաղուագիւտ ու սուղ են ։ Ոսկին ու արծաթը թանկագին մետաղ կ'ըսուին, ինչու որ ամենէ թանկ և քիչ են ։

3. Ամէն մարդ չկրնար ստակ կտրել. միայն թագաւորը կամ կառավարութիւն մ'իրաւունք ունի ստակ կտրելու ։ Բայց թագաւորն իր ձեռօք չկտրեր ստակը. ինք պաշտօնատարներ ունի որ դրամատան մէջ կ'աշխատին և

ստակ կը կոխեն։ Թագաւորն ալ ստակ կտրել տալով չկրնար հարուստ ըլլալ, ինչու որ այդ մետաղները գնելու պարտաւոր է որպէս զի դրամ շինէ։ Այս մետաղները օտար երկիրներէն կը բերեն։

4. Դրամը կլոր մետաղ մ՚է. անոր երկու երեսներուն վրայ պատկեր ու բառեր կը դրոշմեն։ Այս պատկերն ու բառերը կը ցուցնեն թէ ո՛ր թագաւորին օրովը կոխուած են։

5. Ամեն երկիր նոյն դրամը չունի. Ֆրանսայի մէջ ֆրանք, Անգլիա՝ շելին, Աւստրիա ֆիորին և այլն կը գործածեն։ Թուրքիայի մէջ գործածուած դրամը ղրուշն է. ղրուշը քառասուն փարա է. մէճիտը ողջ քսան ղրուշ կ՚արժէ. հինգ մէճիտէն քանի մը ղրուշ աւելին մէկ օսմանեան ոսկի է։ Արծաթ մէճիտն ալ չորս մաս կը բաժնուի, որ քառորդ մէճիտ կ՚ըսուին։

6. Պղնձէ մէկ ղրուշը ճերմակ հինգնոցէ աւելի մեծ է, բայց անորմէ հինգ վեց անգամ աւելի քիչ կ՚արժէ։ Պատճառն այս է որ պղինձն աւելի առատ է քան թէ արծաթը։ Ամենէն սուղ մետաղը ոսկին է և այնչափ դժուար է ձեռք ձգել որ մէկ օսմանեան ոսկին ողջ հարիւր հինգ ղրուշ է։ Կան տղաք և աղջիկներ որ կը փափաքին տեսնել առատ ոսկի և արծաթ դրամ որպէս զի քարերու պէս հաւաքեն և իրենց գրպանները լեցնեն։ Բայց եթէ անոնք այնչափ առատ ըլլային բնաւ բան մը պիտի չարժէին։ Եթէ ամեն մարդ ուզածին չափ ոսկի ու արծաթ դրամ ժողվէր, այն ատեն մարդ մը չէր առներ և փոխարէն ապրանք չէր ծախեր։ Այս բանէս կ՚երևի որ դրամի նուազութիւնն է որ անոր արժէքը շատ է։

7. Երբեմն դրամի տեղ մարդիկ թուղթ կը գործածեն։ Այս թղթերը կը բանին. անոնց փոխարէն դրամ մը տեղ մը պահուած է, թէ ոչ լոկ թուղթ են և արժէք մը չունին։ Թղթադրամը թեթև է և տեղէ տեղ դիւրաւ կը տարուի։ Թղթերուն վրայ գիրեր կան որ կը ցուցնեն թէ ինչ գին ունին և անոր տեղ որչափ ստակ տալ պէտք է։ Ամեն մարդիկ որ թղթադրամ կը հանեն սեղանաւոր կ՚ըսուին։



ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Գնել ու ծախել ինչ է. ինչ բանով կը ծախենք ու կը գնենք. եթէ դրամ չըլլար ինչ ընելու էինք։ 2. Ի՞նչ է դրամը. ինչէ՞ կը շինուի. ինչու համար այդ մետաղներով դրամ կը շինեն։ 3. Ո՞վ կը կտրէ դրամ. դրամ կտրողը հարուստ կ՚ըլլա՞յ։ 4. Դրամին երեսներուն վրայ ինչ կայ։ 5. Ամեն տեղ մի և նոյն դրամը կայ. ամեն երկիր նոյն տեսակ ստակը կը գործածուի. Թուրքիոյ սովորական դրամն ինչ է. մէկ մէճիտն ինչ կ՚արժէ. ոսկին. ինչու համար այսչափ սուղ է։ 6. Ինչու համար պղնձէ ղրուշն աւելի մեծ է ճերմակ արծաթ հինգնոցէն. աւելի՛ աղէկ չէ՞ր ըլլար եթէ քարի չափ առատ ըլլար ոսկին։ 7. Ինչ է թղթադրամը. ի՞նչ արժէք ունի. ինչ դիւրութիւն ունի. որո՞ւ կ՚ըսեն սեղանաւոր։

---

## ՊԱՇՏՕՆ ՈՒ ԱՌՈՒՏՈՒՐ

1. Մարդիկ աշխատելով ստակ կը վաստըկին որ ուտելիք, հագուստ, տուն և ուրիշ պիտանի բաներ ծա-

խու առնեն ։ Եթէ չաշխատին ինչ ուտելիք որ արդէն ունին քիչ ատենէն պիտի սպառի , բոլոր հագուստները պիտի մաշին և ուրիշ ամեն բաները պիտի հիննան , այնչափ որ քաղաքի կամ երկրի մը բնակիչներն անօթութենէ պիտի տառապին և թշուառ պիտի մեռնին ։

2. Ամեն մարդ սահմանուած է արուեստ մը , պաշտօն մ'ընտրել և աշխատիլ ։ Այս բնական օրէնք մ'է ։ Ուստի մեղք է ծուլութեամբ անցընել օրերն և աշխատելու փափաք չունենալը ։ Նոյնպէս աւելի երջանիկ ենք երբոր աշխատինք քան երբոր անգործ ենք ։

3. Որովհետև տղաք շատ կան աշխատելու կարող չեն , իրենց ծնողաց խնամօք ժամանակ մը կը կերակրին ։ Բայց երբոր մեծնան , 'ի հարկէ իրենց համար պիտի երթան աշխատելու ։ Կան տղաք որ այնքան ալէտ են , կամ անանկ գէշ բնաւորութիւն ունին , որ կարծեն թէ շատ ախորժելի բան մ'է միշտ ծնողաց խնամօք ապրիլ ։ Բնաւ հոգ չեն ըներ թէ որչափ սուղ կը նստին իրենց ծնողաց , որ երբեմն այնչափ կը վշտանան իրենց տղոց ընթացքէն որ սրտամաշուքէ կը մեռնին ։ Այս տեսակ տղոց այս ընթացքը շատ պարսաւելի է , և պէտք չէ որ լաւ տղաք անոնց հետեւին ։ Անոնք որ առողջ և ուժեղ են պէտք է որ իրենց յատուկ ապրուստին համար աշխատին ։

4. Այս ընդարձակ աշխարհիս մէջ ամեն մարդ կարող է օգտակար գործ մը գտնել և ապրիլ ։ Կան մարդիկ որ մարմնով ուժեղ և ծանր արուեստներ բանելու յարմար են . կան այնպիսիներ ալ որ մարմնական ոյժ չունին , բայց գործունի միտք ունին և յարմար են այնպիսի գործերու որոց մէջ աւելի խելք պէտք է քան թէ ոյժ ։ Բայց ամեն տղայ պարտաւոր է նախ կրթուիլ և ապա իրեն յարմար գործն ընել ։ Իսկ անոնք որ չեն



կրնար որոշել թէ ո՛ր պաշտօնին աւելի ընդունակ են , պէտք է որ աւելի փորձառու մարդոց խորհուրդ հարցնեն և այնպէս գործի մը հետեւին ։

5. Երբոր մարդիկ այսպէս այլ և այլ արուեստներ կամ պաշտօններ կը կատարեն որպէս զի իրենց ապրուստը ճարեն , նոյն միջոցին իրարու ալ կ'օգնեն ։ Դերձակը զգեստներ կը կտրէ ու կը կարէ , կօշկակարը մուճակներ կը շինէ , որմնադիրը տուներ կը շինէ , ատաղձագործը կարասիք կը շինէ , տպագրիչը գիրքեր կը տպէ , մսավաճառը կենդանիներ կը մորթէ ուտելու համար , մշակը երկիրը կը հերկէ ու կը ցանէ , ջաղացպանը ցորենը կ'աղայ որ ալիւր շինէ , հացագործն ալիւրէն հաց կը շինէ ։ Թէպէտև բոլոր այս մարդիկ տարբեր արուեստներ կը բանին , բայց դարձեալ իրարու կ'օգնեն ։ Դերձակն ուրիշներուն համար ալ զգեստներ կը պատրաստէ և փոխարէն անոնց շինած բաներէն մաս մը կ'առնէ ։ Կօշկակարն ուրիշներուն համար մուճակներ կը շինէ և անոնց շինած բաներուն փոխարէն շատ բաներ կը գնէ , և այս կերպով ամեն մարդ իր շինածին աւելորդ մասն ուրիշին կը ծախէ և փոխարէն առած ստակովը ուրիշ բան կը գնէ ։ Փոխանակութիւնն ապրանք ապրանքի հետ չեն ըներ , վասն զի այս բանս շատ անյարմար է , փոխանակութիւնը դրամի միջոցաւ կ'ըլլայ , որ այս նպատակին համար եղած է ։

6. Դերձակ , մուճակագործ , ատաղձագործ և ուրիշ մարդիկ որ գործածելու համար զանազան բաներ կը շինեն , արուեստաւոր են և ժողովրդեան մէջ ամենէ շատուոր մասն են ։ Այն մարդիկ որ ուրիշ շատ բաներ կը գործածեն և անոնց աշխատութեան փոխարէն [illegible] կը վճարեն , գործատէր կ'ըսուին ։ Ասոնք ալ ի-

ընեն ապրանքը խանութպաններու կամ ուզողին կը ծախեն։ Երբոր խանութպանը մուճակ մը կը ծախէ, մուճակին համար իր վճարածէն քիչ մ'աւելի բան կը պահանջէ, և այս իր վաստակն է։ Եթէ գրածախը հինգ դուրուշ վճարէ գիրքի մը համար, և զայն վեց դուրուշի ծախէ, մէկ դուրուշ վաստակ կամ շահ ունի։ Եթէ գործատէր ու խանութպան իրենց ապրանքէն շահ չունենան, չեն կրնար ծախել, վասն զի միայն անոր վաստակովն է որ կ'ապրին։

7. Գործատէրի մը շինել տուած զգեստներն՝ շատ անգամ վաճառականները կը գնեն։ Վաճառականներն ալ զանոնք օտար երկիրներ կը ղրկեն, երբոր այն տեղերը հարկաւոր են, և երբոր ժողովուրդը կ'ուզէ գնել։ Այսպէս շատ ապրանք խիստ հեռաւոր երկիրներ կը ղրկուին նաւերով։ Նաւերն ալ օտար երկիրներէն այնպիսի ապրանք կը բերեն որ մեր հայրենիքը չկան։ Թէյ, շաքար և ուրիշ շատ ապրանքներ որ ամեն օր կը գործածենք այն հեռաւոր երկիրներէն կը բերուին։ Երբոր այսպէս այլ և այլ երկիրներու վաճառականներ իրարու հետ կը հաղորդակցին և առուծախ կ'ընեն այս գործողութեան վաճառականութիւն կամ առեւտուր կ'ըսեն։

8. Այն քաղաքն որ շատ ապրանք ու տարազ կը հանէ վաճառաբեր քաղաք կ'ըսուի. իսկ այն քաղաքն ուր շատ առուտուր կ'ըլլայ վաճառաշահ քաղաք կ'ըսուի։ Մանչէսթէր, Պիրմինկէմ և Շէֆֆիլտ մեծ վաճառաբեր քաղաքներ են. Լոնտոն, Պոլիս, Իզմիր մեծ վաճառաշահ քաղաքներ են։ Սովորաբար նաւարկելի գետերու կամ ծովերու մօտ կը գտնուին վաճառաշահ քաղաքները, որպէս զի նաւերը դիւրաւ մտնենան և ապրանքները փոխադրեն։ Մթերանոցներ կ'ըսուին այն շէնքերն որոց մէջ ապրանքները կ'ամբարեն։



9. Շատ մարդիկ օգտակար գործեր կ'ընեն ընկերութեան մէջ. ոմանք կը կրթեն, ոմանք կը զուարճացընեն, ոմանք ուրիշներուն խնամք կը տանին։ Դասատուները դպրոցներուն մէջ տղաքը կը կրթեն, իսկ խնամակալներ ու դաստիարակներ ընտանեաց մէջ հրահանգ կուտան։ Եկեղեցականներ ժողովրդոց կը սորվեցընեն իրենց կրօնական պարտաւորութիւններն և կը ջանան համոզելու որ պարկեշտ կեանք վարեն։ Գիրքերու հեղինակներ, լրագիրներու խմբագիրներ, երաժիշտներ, պատկերհաններ, և ուրիշ մարդիկ միտք կը կրթեն, կը զուարճացընեն իրենց նմաններն և անոնց պարապոյ ժամերն օգտակար կերպով անցընելու կ'օգնեն։ Բժիշկները ժողովրդեան հիւանդութիւնները կը բժշկեն, և վիրաբոյժներն անոնց վէրքերը։

10. Ամեն մարդ իր գտնուած պաշտօնին մէջ իր նմաններուն օգտակար ըլլալու կը ջանայ։ Կան անձեր ալ, մեծ ու փոքր, որ ծոյլ կամ դանդաղ են, և չեն ուզեր կանոնաւոր գործ ընել, և ուրիշներ ալ իրենց վաստըկած դրամը պարապ տեղ կը վատնեն։ Ասոնք թշուառ և աղքատ վիճակի մէջ կ'իյնան։ Այսպէս աղքատնալով՝ ընկերութեան վրայ բեռ կ'ըլլան։ Ուրիշ մարդիկ ալ անխոհեմութենէ կամ անբաղդութենէ չեն յաջողիր իրենց գործերուն մէջ և այսպէս իրենց ըրած բաները կը կորսուին։ Այս տեսակ ձախորդութեան հանդիպող անձերուն օգնել պէտք է։ Կան շատ մարդիկ ալ որ ծերութեան կամ տկարութեան պատճառաւ կ'աղքատնան, այն ատեն պէտք է անոնց հոգ տանիլ և օգնել։ Մուրացկան մը աղքատ մարդ մ'է որ առանց ամըչնալու ողորմութիւն կը խնդրէ։ Այն մարդիկ որ իրենց ապրուստը ճարելու համար աշխատելու կարող

են, պէտք է որ ամչնան մուրալու և աղքատներու կարգն անցնելու:

11. Աստուած այնպէս կարգադրած է որ աշխատող ու խնամաւոր կեանք վարող մարդոց պէտքերը հոգացուին: Այս պիտոյքը իրօք շատ չեն և գլխաւորապէս ասոնք են. օդ, սնունդ, ջուր, ջերմութիւն, բնակարան, զգեստ: Ասոնցմէ մէկ քանին ձրիապէս կ'ընդունինք իսկ միւսներն աշխատելով կ'ըստանանք: Կան մարդիկ որ գոհ կ'ըլլան եթէ միայն կենաց անհրաժեշտ պիտոյքը ձեռք ձգեն, այս է պարզ ուտելիք և կօշտ զգեստ:

12. Կան մարդիկ որ քիչով գոհ կ'ըլլան, կան նաև մարդիկ որ շատ փափաքներ կ'ունենան այնպէս որ անոնց համեմատ պիտոյքներն ալ կրնան աւելնալ: Պէտք է աշխատիլ և նոյն պիտոյքներն աշխատութեամբ գոհ ընել: Այն որ կարող է դիւրաւ ստակ շահիլ որպէս զի աւելի լաւ սնունդ, լաւ զգեստ, լաւ բնակարան, լաւ կրթութիւն ստանայ և չաշխատիր, յանցաւոր է: Ամէն մարդ պարտաւոր է իր վիճակը բարւոքել իր ճարտարութեամբ և օրինաւոր աշխատութեամբ:

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մարդիկ ինչ կը ճարեն աշխատելով. Ինչ կը պատահի, եթէ չաշխատին: 2. Ամէն մարդ պարտաւո՞ր է աշխատիլ. ինչո՞ւ: 3. Տղաք դպրոց կ'երթա՞ն. Ի՞նչ է իրենց պարտքը. Ինչ ընթացք բռնելու են: 4. Ամէն մարդ գործ կրնա՞յ գտնել. Տղոց գործն ի՞նչ է. Երէցն ինչ պաշտօն ընելու են: 5. Մարդ մը գործ չ'ընելով միայն ինքն իրե՞ն օգտակար է. Ինչո՞ւ տարբեր արուեստներ կան. Մարդ մը լոկ արուեստ մը գիտնալով կրնա՞յ ամէն պէտքերը հոգալ. Ի՞նչ է փոխանակել: 6. Բացատրէ, ի՞նչ է արուեստաւոր և գործաւոր. Վաճառականն ի՞նչ է: 7. Ամէն տեսակ ապրանք մի և



նոյն տեղէն կրնա՞յ ելնել. Ուրեմն ապրանք կը տանի՞ն տեղէ մը մէկ. Ի՞նչ է առևտուրը: 8. Ի՞նչ է վաճառաբեր քաղաք. Վաճառատուն. Ինչ օգուտ ունին մթերանոցները: 9. Մարդիկ ինչ տեսակ գործեր կ'ընեն. Մէկ քանին ըսէ. Ամէն մարդ նոյն վիճակն ունի. Ե՞րբ մարդ մը օգնութեան արժանի է. Ի՞նչ է մուրացկանը: 11. Մարդուս գլխաւոր պէտքերն ի՞նչ է. Ամէն մարդ գոհ է իր վիճակէն: 12. Պիտոյքները չափ ունի՞ն. Ուսկից կը ծագին. Ինչ ընելու պարտաւոր է մարդ:

---

## ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ — ԶԲՕՍԱՆՔ — ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ

1. Երբ մարդ չափէն աւելի աշխատի իր առողջութեան կը վնասէ: Եթէ մեր կարողութենէ վեր, կամ օրը շատ ժամ աշխատինք, կը տկարանանք, հիւանդ կ'ըլլանք: Ուստի պարտաւոր ենք զգուշանալ, վասն զի ամէն բանի մէջ չափաւորութիւն պէտք է:

2. Չափաւոր աշխատանքի համար սովորաբար եօթն ութ ժամ կը բաւէ օրը. բայց նոյն միջոցին պէտք է մէկ երկու անգամ դադրիլ, մանաւանդ կերակուրի ատեն: Պէտք է ծանր ուտել կերակուրը և ճաշելէն ետև քիչ մը հանգստանալ:

3. Ոչ միայն տէրունական օրեր կը հանգստանանք, այլ և պէտք է պատահապէս զբօսնուլ ու զուարճանալ: Աշխատութենէ ետք հանգիստը կարևոր է: Սակայն մեր զբօսանքը պէտք է որ անմեղ ըլլայ և օգտակար մեզի համար: Ամէնէ լաւ զբօսանքն է բաց օդին

շրջագայիլը և բարեկամներու հետ խօսիլ ու կարդալը։ Առողջութեան համար արտաքին կրթութիւնք շատ օգտակար և ախորժելի են։

4. Կան մարդիկ որ շատ ստորին ճաշակ ունին. ոգելից ըմպելիք խմելով ու գինովնալով կը զուարճանան։ Արբած մարդն իր խելքը կը կորսնցնէ և ըրածը գրածը չգիտէ։ Չէ կարող շիտակ քալել, այլ կ'օրօրի կամ գետինը կը գլորի, ամենուն զզուանք պատճառելով։ Գինովութիւնը զզուելի մոլութիւն մ'է որ թշուառութեան ու աղքատութեան կը տանի։ Պէտք է զգուշանալ այս ախտէն։

5. Պարտաւոր ենք ամեն կերպով ջանալ մեր առողջութիւնը պահելու։ Ասոր համար՝ ոչ միայն պէտք է անմեղ զբօսանքով զուարճանալ այլ և միշտ մաքրութիւն պահել։ Պէտք է ամեն օր լուացուիլ և մաքուր ջրով մաքրուիլ։ Պէտք է մաքուր օդ ծծել և մաքուր ու չոր տուներու մէջ բնակիլ։ Կարելի եղածին չափ խոնաւութենէ զգուշանալու է։ Նոյնպէս կարեւոր է բնութեամբ ուրախ ու զուարթ ըլլալ և անհիմն բաներու համար հոգ չընել։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ե՞րբ քնանալու ե՛ւ ելլալու աշխատանքը. ի՞նչ պէտք է։ 2. Զաւակը աշխատանքէն ետքը քանի՞ ժամ կը քնէ. Կերակուրն ինչպէս ուտելու է։ 3. Ի՞նչ տեսակ զբօսանք պէտք է ընել. որո՞նք են լաւագոյն զբօսանքը։ 4. Ոմանք ինչ բանի մէջ չափազանցութիւն կը գործեն. գինովութիւնն ինչ կ'ընէ մարդուն. ուր կը տանի զինք։ 5. Առողջութիւնը պահպանելու համար ինչ կարեւոր միջոցներ կան։

---



# ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ — ՆՇԱՆՆԵՐ — ԿԱՐԳԵՐ

1. Այն ժողովուրդն որ երկրի մը մէջ կ'ապրի ազգ կը կազմէ։ Շատ ազգեր կան աշխարհիս մէջ, ինչպէս անկլիացի ազգը, ֆրանսացի ազգը, յոյն ազգը, հայ ազգը։ Դարձեալ երկու տեսակ ազգ կայ. բարբարոս ու բարեկիրթ։ Բարբարոս ազգերու մէջ մարդիկ կէս վայրենի են, հանգիստ տուն, հագուստ չունին և անասուններուն պէս կ'ապրին։ Բարեկիրթ ազգերը կանոնաւոր կառավարութիւն ունին, աղէկ տուներ և գեղեցիկ քաղաքներ ունին։ Իրենց մէջ արուեստները, վաճառականութիւնը ծաղկած է և հանգիստ կեանք անցընելու համար կարող են պէտք եղած բաները ճարել։ Հողերը լաւ մշակուած են, և եկեղեցիներ, դպրոցներ, աղքատանոցներ և ուրիշ լաւ բաներ պակաս չեն։ Մենք քիչ շատ բարեկիրթ երկրի մէջ կ'ապրինք։

2. Երբոր կանոնաւոր կառավարութիւն կ'ըսենք կ'իմանանք իշխանութիւն մ'որ ազգը կը կառավարէ և անոր օգուտը կը մտածէ։ Եթէ կառավարող չըլլայ երկրի մը մէջ, տգէտ ու չար մարդիկ բարի ու խաղաղասէր մարդերուն չարիք կը հասցընեն։ Կան անանկ անզգամ մարդիկներ որ կ'ուզեն բռնի ուրիշին ստացուածքը յափշտակել, ինչպէս որ խոշոր և ուժեղ շուն մը պզտիկ ու տկար շան մը բերնէն ոսկորը կը յափշտակէ։ Կառավարութիւնը պարտաւոր է արդարութիւն հաստատել, ոճիրները պատժել և տկարները զօրաւորին դէմ պաշտպանել։

3. Նոյնպէս կառավարութիւնը պէտք է որ ազգի մը

ընդհանուր գործերը տեսնէ և անկարգութիւններն արգիլէ ։ Եթէ ժողովուրդ մ'ուրիշ ժողովուրդի մը հետ ուզէ խօսիլ կարևոր բանի մը վրայ, երկու ժողովրդոց կառավարութիւններն այդ յարաբերութիւնը կը հաստատեն ։

4. Կառավարութիւն մ'ուրիշ պարտաւորութիւններ ալ ունի․ պէտք է որ ամեն մարդու կեանքը, պատիւն ու ստացուածքը պաշտպանէ և երկրին լաւութեան համար պէտք եղած բաները կարգադրէ ։ Ասոր համար պաշտօնեաներ կան որ ժողովրդեան կողմէ այլ և այլ պաշտօններ կը վարեն ։ Կառավարութիւնն իրաւունք չունի ուրիշին անձնական գործերուն ու ընտանեաց խառնուելու ։ Այս գործերը կատարելու համար կառավարութիւնը ժողովուրդէն տուրք կ'առնէ ։

5. Ամեն կառավարութիւն նոյն տեսակ չէ, ինչու որ ամեն մարդիկ նոյն բնութիւնը, նոյն հողն ու կրթութիւնը չունին ։ Կան երկիրներ ուր մինակ մարդ մը ժողովուրդը կը կառավարէ և այս մարդը Թագաւոր կամ Կայսր կ'ըսուի․ եթէ կառավարողը կին է, Թագուհի կ'ըսուի ։ Այս տեսակ կառավարութիւն մ'ուր իշխողը մէկ հոգի է, Միապետութիւն կ'ըսուի ։ Ուրիշ երկիրներ ալ կան՝ ուր թագաւորէն զատ՝ ժողովրդեան կողմէ ուրիշ մարդիկ ալ կ'ընտրուին որպէս զի օրէնք շինեն և չթողուն որ թագաւորն ուզածին պէս ամեն բան ընէ ։ Այս ընտրուած մարդիկ ժողով կը կազմեն և այս տեսակ կառավարութիւն, Չափաւոր միապետութիւն կը կոչուի ։ Անկլիոյ մէջ այս կերպ կառավարութիւն կայ ։ Թագաւորը կամ թագուհին ժառանգական են, այսինքն երբ մեռնին իրենց իշխանութիւնն իրենց որդւոց կը թողուն ։ Կան մէկ քանի երկիրներ ալ ուր ոչ թագաւոր կայ ոչ



իշխան, հապա ժողովուրդը կառավարութեան գործերը անուղղակի կը նայի, իր կողմէ Նախագահ մ'ընտրելով և ժողովներ, որ օրէնք կը հաստատեն և նախագահին վրայ կը հսկեն որ անիրաւ բան չընէ, և նախագահն ալ քանի մը տարի պաշտօն վարելէն ետև՝ կը հրաժարի և անոր տեղ ուրիշ մը կ'ընտրուի․ ուստի իր իշխանութիւնը ժառանգական չէ, իր որդւոյն չկրնար թողուլ ։ Այս կերպ կառավարութիւնն ալ Հասարակապետութիւն կամ Հանրապետութիւն կ'ըսուի ։ Ֆրանսայի և Զուիցերիի մէջ կառավարութիւնը հասարակապետական է ։

6. Ո՛վ որ ըլլայ կառավարողը՝ Օրէնքներ պէտք են․ առանց օրէնքի կարելի չէ բարեկարգութիւն հաստատել ։ Դատաստանարաններ կան ուր դատերը կը տեսնուին, վասն զի թէ որ մարդիկ իրենց դատերը կտրէին, զօրաւորները տկարներուն իրաւունքը պիտի չճանչնային ։ Ամեն մարդու պարտքն է գրուած օրէնքին հնազանդիլ, մանաւանդ երբոր այդ օրէնքն իր կողմէ գրուած է ։ Եթէ երկրի մը մէջ արդարութիւն տիրէ, եթէ մեծ ու պզտիկ իրենց պարտքն ու իրաւունքը ճանչնան այն ատեն երջանիկ կ'ապրին և շատ չարիք կը պակսին ։

7. Կառավարութիւն մը միայն ժողովրդեան մ'ընդհանուր շահերը կը պաշտպանէ․ ժողովրդեան շահն է որ իր հայրենիքը պաշտպանուի․ ասոր համար Զօրքեր ունի որ՝ դրսէն եթէ թշնամի գայ՝ վանեն ։ Եթէ ժողովուրդը ծովեզերեայ քաղաքներ ունի, պէտք է նաև ունենայ Նաւեր կամ Նաւատորմիղ որպէս զի իր առուտուրը պաշտպանէ և ծովէն եկող թշնամի՝ եթէ ունենայ, վանէ ։ Երբոր ազգի մը զօրքն ու նաւատորմիղն ուրիշ ազգի մը զօրքին ու նաւատորմիղին դէմ կը կռուին

կ'ըսենք թէ այս ազգերը պատերազմի մէջ են։ Իսկ երբ որ ազգ մը պատերազմ չունի՝ խաղաղութեան մէջ է, և ժողովրդեան մը համար շատ մեծ բարիք մ'է խաղաղութիւնը։ Շատ փափաքելի է որ ազգերն իրարու հետ խաղաղութեամբ ապրին և իրենց մէջ վէճեր ու կռիւներ բանալով պատերազմ ընելու չստիպուին։

8. Ազգերը նշաններ ունին որով իրարմէ կ'որոշուին։ Ամէն ազգի բանակն ու նաւատորմիղը մասնաւոր նշանակ մ'ունի։ Այս նշանակն է դրօշակը։ Դրօշակը լաթի մեծ կտոր մ'է գունաւոր, որ գերանի մը ծայրը կը կախեն։ Երբոր դրօշակը նաւու մը, բերդի կամ որ և տեղի մը վրայ կը ծածանի անոր տեսակէն կը հասկըցուի թէ այն նաւը, բերդը ու տեղը որունն է։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Ի՞նչ է ազգ. ո՞րոնք են քանի ազգեր. ի՞նչ տարբերութիւն կայ քաղաքի ու քաղաքացի ազգի մէջ: 2. Ի՞նչ է կանոնաւոր կառավարութիւն. ի՞նչ օրէնք ունի կառավարութիւն մը. ի՞նչ է իր պաշտօնը: 3. Կառավարութիւնն ի՞նչ տեսակ գործեր կը նայի: 4. Ի՞նչ պարտաւորութիւն ունի. ի՞նչո՞ւ պարտք կ'ունի ժողովուրդին: 5. Միապետութիւնն ի՞նչ է. ազգի մը մէջ ժողովներն ի՞նչ կ'ընեն. ի՞նչ է ժառանգական իշխանութիւն. ո՞ր տեսակ կառավարութեան մէջ ժողովուրդը կը կառավարէ. ամէն մարդ կրնա՞յ կառավարել: 6. Օրէնք ի՞նչո՞ւ պէտք է: 7. Կառավարութիւնը ի՞նչ տեսակ շահեր կը պաշտպանէ. ի՞նչո՞ւ բանակներ ու նաւեր ունին ազգերը. ի՞նչ է պատերազմը. ժողովուրդը ե՞րբ խաղաղութեան մէջ է:

---



## ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ամէն տեղ մարդիկ միասին կ'ապրին և միասին ապրելով այլ և այլ յարաբերութիւններ կը հաստատեն իրենց մէջ։ Այս ընկերակցութեան հիմը ընտանիքն է։ Ամէն մարդ գրեթէ իրեն ազգականներ ունի։ Օրինակի համար, տղայ մը կամ աղջիկ մը սովորաբար հայր, մայր, եղբայրներ, քոյրեր ունի, նոյնպէս հօրեղբայրներ ու մօրեղբայրներ։

2. Մարդիկ իրարու հետ կը կապուին նաև իբրև բարեկամ ու ծանօթ։ Իրարու հետ կը տեսնուին, կը խօսակցին և երբ իրարմէ հեռու են, կը նամակներով։ Կան մարդիկ ալ որ գործերու պատճառաւ իրարու հետ միացած են։

3. Մեծ քաղաքներու մէջ եղած մարդիկ այլ և այլ կարգադրութիւններ կ'ընեն որ հանգիստ ապրին։ Փողոցները շտկել կուտան, քարայատակ կ'ընեն, որպէս զի հանգիստ քալեն, աղտեղութիւններ ու ջուրը վերցնել կուտան, որոնք եթէ մնան փողոցներու մէջ առողջութեան վնասակար են։

4. Փողոցները լամպարներ կը դնեն, որ բոլոր գիշերը կը վառին և անցնող դարձողին լոյս կուտան։ Նոյնպէս տուները ջուր կը տանին, այս ջուրերը հեռու տեղերէ կը բերեն խողովակներով։ Վասն զի դժուարին է հորէն ջուր քաշել. երբեմն ալ ջրհորները կը բանան և ջուրը ջրհանով վեր կը հանեն։

5. Քաղաքներու մէջ ոստիկան սպաներ կամ պահակներ կան որ քաղաքը կը պահպանեն։ Այս պահակները

չար մարդիկը կը փնտռեն և դատաւորին առջև կը տանին որպէս զի անոնց յանցանքը պատժէ։ Շատ անգամ այսպիսի մարդիկ բանտը կը նետեն։ Մեծ ամօթ է մարդու մը բանտ մտնել իր գէշ վարմունքին համար։

6. Բարեկիրթ քաղաքները ժողովներ ունին որով կը կառավարուին։ Այս ժողովները քաղաքային կամ քաղաքապետական ժողով կ'ըսուին։ Բնակիչները կ'ընտրեն անոնց անդամները։ Ասոնց պաշտօնն է քաղաքին մաքրութեան, բարեկարգութեան և շահերուն վրայ հսկել։ Կան նաև Նահանգական խորհուրդներ, որ ճամբին, եկեղեցւոյն, դպրոցին վրայ հոգ կը տանին։

7. Քաղաքներուն մէջ կան հասարակաց շէնքեր և առանձին տուներ։ Հասարակաց շէնքերն են եկեղեցիները, տաճարները, ուր մարդիկ աղօթք ընելու կ'երթան, հիւանդանոցներն, ուր ապիկար ու թշուառ տնանկներ կը խնամուին, բանտերն, ուր յանցաւորները կը բանտարկուին ու կը պատժուին, կամուրջները, թատրոնները, որ զբօսանքի համար են, դպրոցներն ու վարժարանները, ուր տղաք կը կրթուին, դատարաններն, ուր դատեր կը տեսնուին, և ուրիշ շատ շէնքեր ուր ժողովուրդը շահ մ'ունի։

8. Առանձին տուները մասնաւոր բնտանեաց համար են, և սովորաբար իրարու մօտ շինուած են կարգով փողոցներու վրայ։ Փողոցներն ալ իրարմէ կ'որոշուին յատուկ անունով, իսկ տուները թիւով։ Լաւ տուն մը պէտք չէ որ խոնաւ ըլլայ։ Անոր սենեակները լայն, օդաւէտ ըլլալու են և պէտք է որ արև տեսնեն։ Առողջարար ըլլալու համար պէտք է որ տունը շատ մաքուր պահուի։

9. Ամէն տուն կահ կարասի ունի քիչ շատ աղուոր։ Կարասիներն են, մահճակալ, անկողին, սեղան, աթոռ,



օթոց, վառարան, պահարան, ժամացոյց, հայելի, վարագոյր, բազմոց, և ուրիշ շատ անօթներ ու ամաններ։ Դարբինները, հիւսները, և ուրիշ արհեստաւորներ կը շինեն տան մը կարասիները։

10. Մեծ քաղաքներն ունին խանութներ, մթերանոցներ, որոց մէջ տեսակ տեսակ ապրանք կայ։ Այս ապրանքներէն կը տանին տուներն ու գիւղերը կառքով, շոգեկառքով և բեռնակիրով։ Կան նաև ծանր ապրանքներ զոր գետի կամ ջրանցքի վրայ նաւակով կը տանին։ Ջրանցքը ջրի ճամբաներ են որ գետերու կը նմանին։ Հողը փորելով երկայն փոսեր բացած և անոնց մէջ գետերու ջուրը բերած են։ Ջրանցքի նաւակները՝ ծովու նաւերու պէս զեկ ունին, բայց առագաստ չունին. սովորաբար ձիերը զանոնք կը քաշեն։

11. Քաղաքէ քաղաք երթալու համար մեծ ճամբաներ կան, որ շատ օգտակար են։ Եթէ ճամբայ չըլլար, պիտի ստիպուէինք դաշտերու մէջէն դժուարաւ անցնիլ տեղէ տեղ երթալու համար։ Ճամբաները կարծր քարերէ շինուած են, որ կոխուելով կը պնդանան և վրան քալելու և կառքեր քշելու համար դիւրութիւն ունին։ Կան ճամբաներ ալ որ նեղ են և ուղի կ'ըսուին, բայց լայն ու մեծ ճամբաներն արքունի կամ պողոտայ կը կոչուին։ Երբ ճամբու մը երկու կողմէն ծառեր տնկուած են ծառուղի կ'ըսեն, որմէ գիւղ մը կամ տուն մը կ'երթուի։

12. Այն մարդիկ որ ճամբայ կ'ելնեն հեռաւոր երկիրներ երթալու ուղևոր կ'ըսուին կամ ճամբորդ։ Ասոնք իրենց բնիկ երկրէն դուրս կ'երթան և կարելի է տարիներ կ'անցընեն օտար քաղաքներ։ Ինչպէս քաղաքը նոյնպէս երկայն ճամբաներու վրայ ու գիւղերու մէջ

Համբորդներու համար բնակարաններ կան, որ օթեւան կամ պանդոկ կ'ըսուին, իսկ այդ օթեւանները բանեցնողները պանդոկապետներն են։

13. Շատ ծանր ու տաժանելի է ցամաքով ուղեւորիլը։ Ոմանք ձիով կը ճամբորդեն, ոմանք կառքով. բայց քիչ մարդիկ ձի ու կառք ունին, շատերն հանրակառքերով կը պտըտին։ Հիմա սովորաբար մարդիկ երկաթուղիով կը ճամբորդեն։ Երկաթուղին ճամբայ մ'է որու մէջ երկու ուղիղ գիծ կայ երկաթի. ատոնց վրայէն կը քալեն կառքերը ձիով կամ շոգեշարժ մեքենայով։ Վայրաշարժի մը մղիչ ույժը շոգին է, որով հիմա շատ զարմանալի բաներ կ'ըլլան։ Երբոր վայրաշարժ մը իրարու կապուած կառքեր կը քաշէ շոգեկառք կ'ըսուի։

14. Ընդարձակ երկիրները նահանգներ կը պարունակեն, նահանգները գաւառներ, գաւառները քաղաքներ։ Արարատ նահանգ է. Բասէն, Շիրակ գաւառ են։ Այն քաղաքն որ մայրաքաղաք չէ գաւառական քաղաք կ'ըսուի։ Կուսակալներ կը կառավարեն գաւառները, քաղաքապետները՝ քաղաքները։

ՀԱՐՑՄՈՒՆՔ. — 1. Մարդիկ առանձի՞ն կ'ապրին. ընկերութեան ձեւն ինչ է։ 2. Ուրիշ ի՞նչ յարաբերութիւն կ'ունենան մարդիկ. ի՞նչ են բարեկամ ու ծանօթ։ 3. Ո՞ր ընկերական միութիւն աւելի լաւ է. ո՞ր քաղաքներն աւելի բարեկարգ են։ 4. Ի՞նչ են լամպարներն. ինչո՞վ կը վառին. ի՞նչ է կազն ու ինչո՞վ կը բերեն. ինչպէս ջուր կը բերեն տուները։ 5. Ի՞նչ պաշտօն ունին ոստիկանները։ 6. Ի՞նչ է քաղաքապետական ժողով. Նահանգական խորհուրդը։ 7. Ի՞նչ պետական շէնքեր կան քաղքի մը մէջ. անուանէ քանի մը հասարակաց շէնքեր. ինչո՞ւ այսպէս կ'ըսուին։ 8. Մասնաւոր տուներն ի՞նչ են. տուն մը կամ փողոց մը գտնելու համար ի՞նչ պէտք է գիտնալ. ե՞րբ տուն մը լաւ է եւ առողջարար։ 9. Կահ կարասիներն ի՞նչ են. անուանէ մէկ քանի հատ. որո՞նք կը շինեն։ 10. Ապրանքներն ո՞ւր կը դրուին. ինչո՞վ կը փոխադրուին. ի՞նչ է ջրանցքը. ի՞նչ տարբերութիւն ունի ջրանցքի նաւակը ծովու նաւէն։ 11. Ճամբաներն օգտակա՞ր են. ինչու. քանի՞ տեսակ ճամբայ կայ։ 12. Ո՞ր մարդիկ ուղեւոր կ'ըսուին. ո՞ւր կ'իջնեն։ 13. Ինչո՞վ կը ճամբորդեն. ի՞նչ է երկաթուղին. վայրաշարժը. կառաշարքը։ 14. Ի՞նչ տարբերութիւն ունի նահանգը գաւառէն. օրինակ տուր. կուսակալն ի՞նչ է։



---

## ՄԻՏՔ

1. Գիտեմ որ մարդկային արարած մ'եմ, զգայարանք ունիմ եւ միտք։ Գիտեմ որ կ'ըզգամ. կը շարժիմ, կը փափաքիմ. կը մտածեմ եւ կը խօսիմ։ Իմ անունս գիտեմ, գիտեմ իմ ծնած տեղս, իմ հայրենիքիս անունը, եւ հիմա գտնուած տեղիս անունը։ Գիտեմ որ աղայ մ'եմ եւ դեռ շատ բաներ ունիմ սորվելու։

2. Կարող եմ հասկընալ ինչ որ ինծի կ'ըսեն։ Երբ դասատուս ըսէ ինծի որ ոտքի վրայ կենամ, կը հասկընամ որ ըսել է նստած տեղէս վեր կենամ։ Երբ մէկը հարցընէ ինծի թէ ինչ է անունս, կը հասկընամ թէ ինչ կը խնդրէ. իմ անունս կ'ըսեմ։ Եթէ ծնողքս

ինձ ըսեն. այսօր դուրս մ'ելներ խաղալու, վասն զի անձրև կը վազի, կ'իմանամ որ տունը մնալս և դուրս չելնելս կ'ուզեն: Կը հասկընամ թէ ինչու համար տուն մը դուռ և պատուհաններ ունի, կամ ինչու համար մարդիկ թեթև զգեստներ կը հագնին ամառը և ձմեռը տաք հագուստներ:

3. Կրնամ մտածել կամ խորհիլ իմ տեսածիս ու լսածիս վրայ: Փորձով գիտեմ որ կրակը կ'այրէ: Եթէ մարդ մ'ըսէ ինձ. ձեռքդ կրակին մէջ դիր, պիտի մտածեմ ինծի ըսածին վրայ և պիտի պատասխան տամ. Ես չեմ կրնար ձեռքս կրակին մէջ դնել, վասն զի գիտեմ որ պիտի այրի և այրիլն ալ շատ ցաւալի ու վնասակար բան է: Նոյնպէս կրնամ մտածել որ եթէ ծովուն խորն ընկնիմ կարելի է խեղդուիմ: Եթէ դէշ վարմունք մ'ունենամ՝ կը մտածեմ որ լաւ հետևանք չունենար: Եթէ կառք մը յանկարծ իմ վրաս գար, շուտ մը վտանգին վրայ պիտի մտածէի և մէկդի պիտի քաշուէի:

4. Կրնամ իմ ըրած գործերուս պատճառը և անոնց նպատակը մտածել: Աչքը շինուած է տեսնելու համար և ոտքերը՝ քալելու համար. դպրոց կու գամ կարդալ և օգտակար բաներ սորվելու համար. եթէ չսորվիմ, նպատակիս չեմ հասնիր: Տղայ մը սառած գետի մը վրայ գնաց սահելու համար, բայց սառոյցը բարակ էր և չէր կրնար զինք վերցընել, ուստի սառոյցը կոտրեցաւ և ինք ջուրն իյնալով խեղդուեցաւ: Տղուն միտքը սահիլ էր և չէ թէ խեղդուիլ: Դիպուած մ'է խեղդուիլը և այս դիպուածին պատճառը տղուն անխոհեմութիւնն էր:

5. Կրնամ հասկընալ թէ ինչ կը նշանակէ միջոցներ



գործածել բան մ'ընելու համար: Եթէ ուզեմ առնել գլխարկս որ պատէն կախուած է, պէտք է որ միջոցներ գործածեմ զայն առնելու համար. գլխարկս չկրնար ինծի գալ, ինչու որ անկենդան առարկայ մ'է և չկրնար շարժիլ: Իմ գործածած միջոցներս ոտքերս են որով գլխարկիս կը մօտենամ, ձեռքերս են որով զայն կ'առնեմ: Ապրանքներ տեղէ տեղ տանելու միջոցները կառքերը, ձիերն ու նաւերն են: Աղջիկ մը դերձանի ու ասեղի միջոցով կը կարէ: Տղայք իրենց ծնողաց միջոցաւ կը խնամուին և գիրքերու ու դասատուներու միջոցաւ կրթութիւն կ'ըստանան:

6. Գիտեմ թէ ինչ է յուսալ որ դէպք մը պիտի պատահի: Կրնամ յուսալ որ՝ եթէ ապրիմ, մեծ և ուժեղ մարդ մը և իմ նմաններուս օգտակար պիտի ըլլամ: Կրնամ յուսալ որ իմ բարեկամներս գոհ պիտի ըլլան իմ վարմունքէս: Եթէ դժբաղդութիւն մը կրեմ, կը յուսամ որ կարող պիտի ըլլամ համբերութեամբ կրել: Եթէ յաջողիմ աշխարհիս մէջ, յուսամ որ գոռոզ և սնապարծ պիտի չըլլամ:

7. Գիտեմ թէ ինչ է վախը: Կը վախնամ ուրիշին չարիք ընելու, վասն զի չեմ ուզեր որ ուրիշն ալ ինծի չարիք ընէ: Իմ խիղճս կ'ըզգայ թէ որ բանն աղէկ է որ բանը դէշ է: Խղճիս խայթն անհանգիստ կ'ընէ զիս երբոր պարտքս չկատարեմ, երբոր ուրիշին անիրաւութիւն ընեմ:

8. Կարող եմ որոշել բան մը ուրիշ բանէ մը՝ բաղդատելով և զգայարանքս գործածելով: Կրնամ որոշել անկիւն մը քառակուսիէն, բոլորակ մը զուգահեռական գծէ: Եթէ մէկը կասկածի այս բանիս վրայ, կարող եմ հաստատել ըսածիս ճշմարտութիւնն այդ ձևերը գծե-

լով և անուանելով։ Կրնամ նաև այլ և այլ գոյներ իրարմէ որոշել։ Կրնամ որոշել, թէ մարդ մը մարդ է, գլխարկ մը գլխարկ է։ Երբոր գիրք մը կը տեսնեմ իմ աչքիս առջև, մէկը չկրնար համոզցընել ինծի որ այդ գիրքը գլխարկ է, վասն զի գիտեմ որ իմ տեսանելիքս ու միտքս չեն խաբեր զիս։ Եթէ մարդ մը ձի մը ցոյց տալով ըսէր ինծի, ահա ուղտ մը, իսկոյն պիտի հասկընամ որ այն մարդը ճշմարիտը չխօսիր, վասն զի իմ աչքս և այն կենդանեաց վրայ ունեցած ծանօթութիւնս անոր ըսածին հակառակը կը հաստատեն։

9. Կարող եմ բան մ'ուրիշ բանի մը հետ բաղդատել և որոշել ու դատել թէ ո՛րն է ամենէն լաւը։ Կրնամ իմ գմելիս ընկերիս գմելին հետ բաղդատել և ըսել թէ ինչ տարբերութիւն ունին։ Կրնամ գիրքս ուրիշ գիրքի մը հետ բաղդատել և գտնել թէ ո՛րն է աւելի մեծը։ Կրնամ բաղդատել դպրոցէն մինչև մեր տունն եղած հեռաւորութիւնն և ուրիշ տղու մը տան հեռաւորութիւնը դպրոցէն և ըսել թէ մեզմէ ո՛վ աւելի հեռու կը գտնուի անկից։ Կրնամ երեք բան իրարու հետ բաղդատել և որոշել թէ ո՛րն է լաւը, ո՛րն է լաւագոյն և ո՛րն ամենէ լաւը։

10. Գիտեմ թէ ինչ տարբերութիւն կայ պատճառի մը և արդիւնքի մը մէջ։ Երբոր հովը սաստիկ կը փչէ, ծառերը վար կը տապալին. հովուն փչելը պատճառն է և ծառերուն տապալիլն արդիւնքը։ Եթէ մէկն ելնէ ըսէ ինծի որ ծառերը տապալեցան, վասն զի կատու մը մլաւեց, իսկոյն պիտի ըսեմ որ ճիշդ չէ։

11. Կրնամ մտքով այլ և այլ բաներ երևակայել։ Կրնամ երևակայել որ ծնողքս շատ պիտի վշտանան եթէ ուսմունք չսորվիմ. կրնամ երևակայել թէ ո՛րչափ



պիտի վախնայի եթէ գիշերով անտառը մնայի. կրնամ երևակայել թէ մեծ զուարճութիւն է աղւոր օդով ծաղկաւէտ պարտէզ մը պտըտիլը։ Երևակայութիւնն այս և ուրիշ այլանդակ բաներ կրնայ տեսնել։

12. Կրնամ իմ յիշողութիւնս կրթել։ Կրնամ արդէն տեսած կամ լսած բանս յիշել։ Կը յիշեմ որ այս առաւօտ կանուխ ելայ ու դպրոց եկայ։ Կը յիշեմ որ Կաղանդին կաղամար մ'ընծայեց ինծի հայրս։ Կը յիշեմ որ ուրախութիւն զգացի երբոր դասատուս յայտնեց ինծի որ լաւ աշակերտ մ'եմ, վասն զի կ'աշխատիմ։

## ՑԱՆԿ

—

### ՄԱՍՆ Ա.


| | Երես |
|---|---|
| Պարզ նախադասութիւններ | 5 |
| ՊԱՐԶ ՃՐՈՑՑՆԵՐ — Ոչխար ու գառնուկ | 11 |
| Միհրան ու իր շունը | 11 |
| Գէորգ | 12 |
| Առաւօտ, օրհնաբանակ | 13 |
| Իրիկուն, մեղու | 14 |
| Կարապ | 17 |
| Գայլ | 18 |
| Թութակի մը պատմութիւնը | 19 |
| Ուղտ | 20 |
| Տան մը պատմութիւնը | 21 |
| ԿԵՆԴԱՆԻՆԵՐ — Ոչխար | 24 |
| Ձի | 25 |
| Կով | 26 |
| Սեւ արջը | 28 |
| Ծոյլը | 29 |
| Պզտիկ աղջիկն ու պնակները | 30 |
| Մամուկն ու շերամը | 30 |
| Առիւծն ու մուկը | 31 |
| Սիրուն գառնուկը | 32 |
| Արագիլն ու կուժը | 35 |

| | Եր. |
|---|---|
| Տունն ու իր տէրը | 36 |
| Բարի գործ | 37 |
| Ճերմակ արջ | 39 |
| Տուն մը — Գիւղի կողմը | 40 |
| Ճամբորդն ու առիւծը | 42 |
| Նապաստակն ու կրիան | 43 |
| Արագագործն ու ծրապլուխը | 44 |
| Տուն մը — Ներսի կողմը | 46 |
| Իշխանի մը կալանաւորները | 48 |
| Առիւծ | 49 |
| Վագր | 51 |
| Խնձ | 52 |

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՄԱՍՆ Բ

| | |
|---|---|
| Ներածական դաս | 54 |
| Աստուած եւ իր գործերը | 54 |
| Ընտանիք | 55 |
| Մարդիկ | 59 |
| Դաշտ, մշակութիւն, բոյս | 65 |
| Փայտ, ծառ | 69 |
| ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ — Կարեր, Եղջա-բար, բարածոյ եւ այլն | 70 |
| Ովկիանոս — նաւեր — գետեր | 75 |
| [illegible] | 79 |
| Գոյն | 83 |
| [illegible] | 85 |
| [illegible] մեծութիւն ու չափը | 94 |
| [illegible]ութիւն — [illegible] | 96 |
| [illegible] | 99 |
| [illegible]ութիւն — [illegible]ութիւն | 102 |
| [illegible] — [illegible] | 106 |
| [illegible] | 110 |
| [illegible] — [illegible] | 114 |
| Գ[illegible] — [illegible] — դրամ | 117 |
| Պաշտօն — աշխատուր | 119 |
| Առողջութիւն — զբօսանք — զուարճութիւն | 125 |
| Ժուժկալութիւն — նշաններ — կարգեր | 127 |
| Քաղաքական կազմակերպութիւններ | 131 |
| Մխաք | 135 |